

*Paul  
Paul*

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն



- Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ . . . . . Արգասաւորութիւն
- Մ. ԻՇԽԱՆ . . . . . Սառնարանէն ելած մարդը
- Հ. ՍԱՀԵԱՆ . . . . . Բանաստեղծութիւններ
- Ա. ԱԲԷԼԵԱՆ . . . . . Զինադուլ 27...
- Շ. ՔԵՕՐՕՂԼԵԱՆ . . . . . Կեանքի ափիշը
- Ր. ՔԵՊԱՊՃԵԱՆ . . . . . Ժպիտը
- Ն. ՊԱԼԱՔԵԱՆ . . . . . Ուիլերմ Սարոյեանի աշխարհը
- Յ. ԿԱՐԱՊԵՆՅ . . . . . Անկրկնելի դիւցազներգուն
- Պ. Ս. . . . . Բառերուն համը
- Ս. ՓԱՆՈՍԵԱՆ . . . . . Ա. Հայկազի «Երջանկութիւն»ը
- Ս. Կ. . . . . Ա. Վարդանեանի «Մամլեկը»
- Յ. Պ. . . . . Հ. Մաքետսեանի «Մեր վազըը»
- Ս. Կ. . . . . ...եւ գեղեցիկ խոստումը
- \* \* \* . . . . . Նշմարներ
- \* \* \* . . . . . Մշակութային լուրեր

# Բազմ

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԸ. ՁԱՐԻ, ԹԻՒ 6

ՅՈՒՆԻՍԿՈՒ

1979

ԳԵՅՐՈՒԹ

Ն. Չ Ա Ր Ի Ն Ո Ւ Տ Ե Ա Ն

### Ա Ր Գ Ա Ս Ա Ի Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Եւ ժամերը անէացան պատրանապառն անդունդներու մէջ,  
Լուսինն սեւ սկաւառակը փշրուեցաւ բախելով ամայութեան,  
Եւ ժամանակը իր մանր ակուններով կրծեց անջրպետին սաւանները,  
Բայց զարթնումի ժամը չէր հնչեր մեռելներուն համար:

Կոյս այգաբացերու սպիտակութեան մէջ՝  
Երկինքի կերտները մարեցան բթուածինի պակասէն,  
Եւ Արեւը, ծեր դերասանի մը պէս, տեղի տուաւ  
Գիշերուան մէջ հարճատող խարոյկներու բոցերուն:

Տիեզերքին քաւալումը պիտի սպառէ մեր կեանքերը,  
Եւ տարիները, մեղմ անձրեւի կաթիլներուն պէս՝  
Պիտի կորսուին ունայնութեան ալքերուն մէջ,  
Բայց դուն պիտի յայտնուիս վեկաւ աստղի կարիգէն:

\*

\*\*

Ո՛վ մատաղաշ Եւս, որուն անունը երգ է ու կշռոյթ,  
Տեղ մը, խաւարի քաւիչին վրայ, ուր երազները կը մեռնին,  
Երգ մը ծնաւ բիբերուդ ներաշխարհէն,  
Մինչ հրաշէկ գունտերէն արձակուող կայծերու տեղատարափ մը  
Ռսկի կէտերով կը զարդարէր այրի երկնակամարը:

Աստղ մը կը մեռնէր ամէն անգամ, որ աչքերդ փակէիր,  
 Եւ սրտիդ բաբախումներուն կշռութաւոր զարկերը՝  
 Շրջագայելով անջրպետին անհունութեան մէջ,  
 Արտասովոր ձայնակշիւթն վերածելով դաշնալուր ասուպները՝  
 Թարթիչներուդ ծայրէն կ'արձակէին նորածին գիսաւորներ:

Ծովափէն հեռո՛ւ, ջուրերու գրկին մէջ,  
 Երկու նաւեր, անհամբեր հարսերու պէս,  
 Կը նագէին ալիքներու սիրատոչոր հպումներուն տակ,  
 Անոնց կողերուն վրայ գրուած էին տարաշխարհիկ անուններ,  
 Որ դարերով պիտի երգեն մարդոց յիշատակին մէջ:

Կանգնած կեդրոնական կայմին տակ կը զննէիր հորիզոնը,  
 Ուր յաւերժահարսեր, լագուարթ ջուրերուն մէջ,  
 Կը սպասեն անզգոյշ նաւատիներուն:

Աչքերուդ անմեկնաբանելի ալիքերուն մէջ՝  
 Կարդացի մեկնումներու անդիմադրելի հրաւերը.

«Ես գիտեմ հեթանոս ու դրախտային երկիրներ,  
 «Կղզիներ՝ ուր գարունները չեն մեռնիր,  
 «Ծովափներ՝ որոնց աւազներուն մէջ  
 «Նառնուած են գմբուխտ եւ ադամանդ:  
 «Նկո՛ւր,  
 «Նաւարկե՛նք միասին, երթա՛նք մինչեւ անկարելի երազը,  
 «Դէպի քաղաքը, որուն եօքը փարոսներէն  
 «Եօթն անգամ լոյս կը ծնի:

«Մի՛ վախճար, չենք կորսուիր ծովերու անծանօթին մէջ,  
 «Գիշերը կը խուզարկես երկնակալարին քարտէսը,  
 «Քայց չես վստահիր Բեւեռային Աստղին,  
 «Այլ կը նայիս դէպի այն աստղը, որ կը կրէ անունս:  
 «Իսկ ցերեկը, սեւ բիրերուս ոսկի կէտերը կարգալով՝  
 «Կը պատրաստես մեր նաւարկութեան նոր հանգրուանները»:

Ո՛վ առագաստանաւս,  
 Որուն կողերը ունին այծեամներու փորին կորութիւնը,  
 Չե՞ս գիտեր, որ ամէն անգամ երբ անունդ հնչեմ,  
 Նոր աստղ մը կ'աւելնայ երկնակամարին վրայ,  
 Եւ լուսինը, ամօթէն ու նախանձէն,  
 Կը ծածկէ դէմքը ամպէ վարագոյրի մը ետեւ,  
 Մինչ մագերուդ ծփանքը սեւ  
 Տիեզերքը կ'առնէ իր խորհրդաւոր ուղկանին մէջ:

Գիտե՞ս որքա՞ն խաւար կուտակուած է մեր հոգիներուն մէջ :  
 Որքա՞ն կարիքներ բոյն դրած են մեր սրտերուն վրայ :  
 Բա՛ց բիբերդ, որպէսզի լուսաւորուի ճմեռնային աղջամուղջը,  
 Եւ շուտով յայտնուին տարաշխարհիկ կողմերը :

Եւ ամէն այգաբացին, իբրեւ վարձատրուքիւն,  
 Ախերուդ բաժակին մէջ ինձի խմցուր  
 Ծնող ու մեռնող զգացումներուն  
 Դառն ու փաղքը ըմպելին :

Ո՛վ մատղաշ Եւս, որուն անունը երգ է ու կշռոյթ,  
 Երբ մեր առագաստանաւը խարխիժ նետէ սիրոյ կողմերուն առջեւ,  
 Եօրը փարոսներով փողփին եօթը աշտարակներէն  
 Պիտի փաղեմ եօթը աստղերէն ծնած աղամանդի շողակներ  
 Եւ զանոնք մէկիկ-մէկիկ պիտի անցընեմ մազիդ թելերուն...

\*\*

Եւ Քարիպտիսի յորձանքներուն մէջէն  
 Անա՛ դուրս կը ցցուին անխոհեմ նաւաստիներու զանկերը,  
 Եւ նայելով Սկիլլայի խուրերուն վրայ չորցած ոսկորներուն՝  
 կը պոռան. «Կանգ առէ՛ք. ասկէ անդին կը սկսի աստուածներու ծովը,  
 Ուր փոքորիկներ թեւ կու տան առագաստներուն  
 Եւ յաւերժահարսերը կը տառապին շղթայուած վագրերու պէս» :

Եւ անցանք Քարիպտիսի յորձանքներէն Եւ Սկիլլայի խուրերէն :  
 Քամին թեւ տուաւ առագաստներուն  
 Եւ սուրացինք ծովափներու երկայնքին,  
 Ուր Ափրոտիքներ հեշտանք ու սէր կը մուրային :

«— Եկո՛ւր, — կ'ըսէր Մայա, — Ես գիտեմ միակ գաղտնիքը :  
 «Ես պերճանաւ եմ արբեցումի ջուրերուն :  
 «Եւ անկողնիս վրայ կը բառամին *լոթիւտի* հիւժող շափրակներ :

«Եկո՛ւր, մահը շղթայած եմ հաւատարիմ շան մը պէս,  
 «Եկո՛ւր, կոյս պարմանուիկներ պիտի պարեն մեր հարսանիքին :  
 «Ես գիտեմ միայն Լեսպոսի անփողարկելի գաղտնիքները,  
 «Եւ շրթներուս կրակովը պիտի հրդեհեմ երակներդ» :

Եւ անցանք Քարիպտիսի յորձանքները Եւ Սկիլլայի խուրերը,  
 Յաւերժահարսերուն կանչերը կորսուեցան հովուն հետ,  
 Որովհետեւ սէրը թեւ կու տար մեր առագաստներուն  
 Եւ երազը կը պլպլար հորիզոններէն անդին :

Եւ եօթը փարոսներով փողփին նաւահանգիստը չմտած՝  
 Ծովափին վրայ տեսանք անմտանալի ծիսակատարութիւններ :

Ալիքներու մեղմ համբոյրներով լուացուած աւագին վրայ,  
 Կինը երկնցած էր իր ամբողջ հասակով,  
 Մերկ ու պայծառ անամպ երկինքին պէս:  
 Բաց աչքերէն ներս երկնակամարը ջրվէժի մը պէս կը խուժէր՝  
 Երազներու եւ տենչանքներու երամներով:

Կինը մերկ էր, եւ մայր հողը անոր մոլորքին ծակտիկներէն  
 կը ներարկէր արգասաւորող ու կենսատու աւիշը:  
 Եւ անտեսանելի ձեռքեր, մարմինն վրայէն սողալով՝  
 Միսերուն մէջէն կ'անցընէին հեշտանքի սարսուռներ,  
 Որոնք կը կարսուէին արգանդին խորհրդաւոր պլեթրուն մէջ:

Եւ սահ՝ անակաս ձեռք մը կը շոյէ կնոջ մազերուն մետաքսը  
 Եւ կ'իջնէ ուսերուն մարմարէն մինչեւ կոնքերուն աղեղը...  
 Կոյս աւագին վրայ երկու մարմիններ կը միաձուլուին՝  
 Զեւացներով *անորոկիճներու* անմեկնաբանելի երկուութիւնը:

Եւ անջրպետներու խորերէն, հեշտանքի ալիքներ  
 կը գահավիժին եւ անոնց անպարագիծ մակընթացութիւնը  
 երկու մարմինները կը մղէ մինչեւ անկութեան փունքները,  
 Մինչեւ երանութեան ովկիանոսին անչափելի յատակը:

Եւ տարիանքը՝ սառն կրակի մը պէս կ'այրէ անոնց միսերը:  
 Եւ, ինչպէս ծովուն կատաղութիւնը կը մեղմանայ տակաւ՝  
 Քառելով ծովափներու անտեղիտալի ապտածներուն,  
 Կիրքի ցնցումները կը դանդաղին, կը չփանան՝  
 Ինչպէս պապական շուշանները անձրեւի հեղեղներուն տակ:

Սեռերու այս միաձուլումով կ'իրագործուի հին երազը,  
 Զոր մարդկութիւնը կ'ապրէր անմահութեան անպտուղ ծառին տակ,  
 Երբ առաջին այրը առաջին կնոջ ձեռքէն բռնած՝  
 Աստղերու լոյսին մէջ կը փնտռէր աստուածանալու գաղտնիքը:

Եօթը Փարոսներու ծովափի աւագներուն վրայ երկնցած՝  
 Կինը ամուր կը սեղմէր իր գիտերը:  
 Եւ աչքերը գոց, ծիծերը փերուն մէջ,  
 կը խօսէր իր մարմինէն ծնելիք գաւակին հետ,  
 Եւ կը կրկնէր բառերը այն օրօրին,  
 Զոր պիտի երգէր, երբ ան բաժնուէր իր արգանդէն:

Ո՛վ կին, դուն այս պահուս խորան մըն եւ նուիրական.  
 Երկնակամարը գուրգուրանքով կը ծածկէ մերկութիւնդ,  
 Որովհետեւ դուն յաղթեցիր մահուան՝ դառնալով անոր ստրուկը,  
 Եւ անոր թակարդին վրայ հեշտանքը փոեցիր իբր ծածկոյթ:

Եւ ահա՛, արդէ՛ն, շուրջդ կը դառնան  
 Զակիդ երեւ սիրուհիները՝ մէկը միւսէն գեղեցիկ,  
 Մէկը միւսէն հրապուրիչ ու խորհրդաւոր:  
 Ահա՛ սեւաչեայ ու սլացիկ պարմանուհին իր հեշտալի շրթներով,  
 Ահա՛ սեւեր հագած կիներ, որուն աչքերը զգլխիչ են՝ անդունդներու պէս,  
 Եւ ահա մուր թեւերով հրեշտակը, որուն երգը  
 Կը խոստանայ յաւիտեակեան արբեցում:  
 Առաջին երկուքը կը խոստանան հեշտանք ու փառք,  
 Բայց միւսին աչ արին մէջ գրուած է ՄԱՀ:

\*\*

Եւ եօթը Փարոսներով ֆազաֆին եօթը դուռները գոց էին,  
 Եւ անոր եօթը աշտարակներուն բարձրագոյնին վրայ  
 Երեսցաւ սեւեր հագած կիներ,  
 Որուն աչքերը զգլխիչ են՝ անդունդներու պէս:  
 Անոր դէմքը սպիտակ էր՝ կոյս գագաթներու ձիւնին պէս,  
 Եւ ձայնը՝ կախարդող յաւերժահարսերու ձայնին պէս:

Եկո՛ւր ինձի, ե՛ս եւ դիցամայրը հարազատ,  
 Իշխանուհիդ արիւնոտ ու վիրաւոր:  
 Բիրերուս մէջ բարձրացուր երազներուդ դղեակները,  
 Պատրանքներուդ ադամանդեայ միջնաբերդը...

Նաւահանգիստներ շարէ մարմինիս շուրջ, որպէսզի միանամ ծովուն:  
 Այն ատեն նաւերը յոգնաբեկ հայերու պէս պիտի նետուին գիրկս:  
 Հովը իր գորաւոր ձեռքով պիտի շոյէ ամբարտակներս,  
 Եւ պիտի երգեն սլացիկ աշտարակները՝ տաւիդի մը լարերուն պէս:  
 Եւ երբ ջուրերուն վրայ, արձակուած աղանիներու պէս,  
 Այգաբացը սկսի փռել իր սպիտակ սաւանները,  
 Առագաստանաւերը, սանձարձակ նժոյգներու պէս  
 Պիտի սուրան դէպի խաւկի եւ սիրոյ կղզիները:

Լեռները կը գարդարեն մայրական կուրծքս,  
 Որուն երակներէն կաթի աղբիւրներ կը հոսին,  
 Գետերը մէջքս կը փաթբուին՝ արծաթեայ գօտիներու պէս,  
 Իսկ կապոյտ լիները գմբուխտէ մանեակներ կը հիւսեն վիզիս շուրջ:

Եւ երբ ազջամուղջը յառաջանայ բոսոր հորիզոնէն  
 Եւ լոյսի կաթիլներ ծակծկեն երկնակամարին Քաւիշը,  
 Բեւեռային արշալոյսները թող չսառեցնեն մարմինս.  
 Կարմիր արիւնովդ ջերմացուր ընդարմացած ստինքներս...

Աչֆերուս մէջ կառուցանէ երազներուդ ֆազաֆները,  
 Եւ դղեակներ՝ որոնք սպառնան անառիկ աստղերուն,  
 Եւ միջնաբերդիս եօքը աշտարակներուն վրայ  
 Հրահիւր մեր անցեալի եօքը փարոսները...

Տե՛ս, աջ ափիս մէջ կարմիր գիրերով գրուած է ՄԱՀ  
 Բայց երբ ձեռքս դնեմ ճակտիդ, ան կը վերածուի անմահութեան,  
 Որովհետեւ պայծառ դէմքիս պարիսպներուն դէմ  
 Խորասակուեցան աշխարհի բոլոր մութ ուժերը:

Եկո՛ւր, ձեռք ձեռքի բռնած՝ ֆալե՛նք դէպի ապագան,  
 Եւ խորտակեմք ժամանակի անվերջանալի շղթան,  
 Առանց սպասելու, որ սկսի խոստումը կեդ՝ գարուններու,  
 Որովհետեւ ամպերը չեն, որ կը խափանեն արեւը:

Աչֆերուս ռսպնեակին մէջ պիտի տեսնես նոր եղեմներ,  
 Յաւեա կորսուած հեշտութեան եւ սիրոյ պարտէզներ...  
 Բայց դո՛ւն, բա՛ց ափերդ եւ ցանէ աստղեր,  
 Որպէսզի վերակենդանանան անցեալի փառքերը:

Այն տտեն, ովկիաճոսը պիտի ելլէ իբ հունէն,  
 Եւ սեւ մագերս շոյելով՝ պիտի բախի հարիզոնին,  
 Բայց սրտերու մէջ, ադամանդով գծուած պատկերս  
 Պիտի հեզնէ խաւարին ապարդիւն մոլեգնութիւնը:

Աչֆերուս անհունին մէջ կերտէ երազներուդ ֆազաֆները,  
 Եւ այն բերդերը, որոնց պարիսպներուն վրայ ստուերներ կը տողանցեն.  
 Եւ երբ դանդաղորէն իրարմէ բաժնեմ քարքիչներս՝  
 Միջնաբերդերու կատարին պիտի ծնին նոր փարոսներ...

\*\*

Ըդճանֆներու ուսկանին մէջ երկար մագերս կ'ստուակեն՝  
 Իրենց բեղերուն մէջ բանտարկելով մեռած անջրպետներ:  
 Եւ փայլասակոզ աչֆերուդ սառած հոսանքին մէջ՝  
 Պիտի ձուլուին յանկարծ ողբացոզ գիսաւորներ:

Պիտի փնտտես զիս, երբ մայրամուտը իջնէ անտառին վրայ,  
 Եւ մեռնող լոյսին հետ անէանայ ծաղկատանը,  
 Իբր յիշատակ ձգելով հպումը մատներուդ  
 Լուսնի Անդորրութեան Ծովուն յատակը:

Բայց ինչո՞ւ չանկացուցիր միւս տիեզերքները,  
 Որպէսզի հոգիդ որք չձգէ չմազ մարմինդ,  
 Եւ շիրիմներուն վրայ սահող ներմակ ուրուականին պէս՝  
 Վերստեղծէ եղեմներու կորսուած շֆելութիւնը:



Զայնիդ քառիշը պիտի միտիթարէ միայնակ աստղերը :  
 Ոսկի վրանդ լարէ երկնակամարէն հեռու ,  
 Որպէսզի համաստեղութիւնները չդառնան շուրջդ  
 եւ չխափանենն աչքերուդ փրկարար լոյսը :

Մազերուդ վրայ՝ երազներու անտառ եւ մոռացութեան գետ ,  
 Պիտի արձակեմ հեշտամեքներու մատողաշ նժոյզները ,  
 Պիտի քափեմ ջրվէժներ , երբ լուէ երգը աւազներու ,  
 Մազերուդ վրայ , Եւայի թագ եւ գետ անասող :

Աչքերուդ մէջ՝ յիշատակի լին եւ աստուածներու շիրիմ ,  
 Պիտի ցանեմ ազամանդները եւ Օփիիի գոհարները ,  
 Իեցուիի բիբերուդ մէջ պիտի ամբացնեմ *Քահնուրը* ,  
 Աչքերուդ մէջ՝ անմահութեան նեկտար եւ իմաստութեան բաժակ :

Շրթներուդ վրայ , ուր վարդերը սէր կ'երգեն ,  
 Շրթներուդ վրայ , ուր կը մեռնին ողկոյզները մայրամուտի ,  
 Պիտի արձակեմ երազներու հեշտագին փաղանգները ,  
 Շրթներուդ վրայէն պիտի սրբեմ մերժումներուդ հետքերն իսկ ,  
 Համբոյրներու անգուպելի եւ հրկիզող յորձանքին տակ ,  
 Մարմինիդ վրայ՝ ներմակ շիրիմ երազներու ,  
 Մարմինիդ վրայ՝ սիրերգներու անհասանելի թիրախ ,  
 Պիտի միտին պատրանքներու հագար ու մէկ սլաքները ,  
 Պերնազիկն եւ հրեշտակի շուշանաքոյր մորթիդ վրայ՝  
 Պիտի արշաւեն տեսչանքներու անգուպելի հորդաները...

Ո՛վ մատողաշ Եւա , որուն անունը երգ է եւ կշռոյթ ,  
 Տեղ մը , խաւարի քաւիշին վրայ , ուր երազները կը մեռնին ,  
 Երգ մը ծնաւ բիբերուդ ներաշխարհէն ,  
 Մինչ հրաշէկ գունտերէն արձակուող կայծերու տարափ մը  
 Ոսկի կէտերով կը զարդարէր այրի երկնակամարը :

Երբ վերադարձանք սիրոյ եւ խունկի կղզիներէն ,  
 Եօթը փարոսներով նաւահանգիստին աւազափին վրայ ,  
 Երկինքը մուր էր , եւ ցուրտ հով մը կը փչէր լեռներէն ,  
 Սկիւլայի խութերուն վրայ մեռած նաւաստիներուն զանկերը  
 Անհետացած էին՝ Քարիստիսի յորձանքներուն մէջ :

Արդէն նաւահանգիստին եօթը փարոսները մարած էին վաղուց ,  
 Որովհետեւ գեղեցիկ մօր գաւակը մեռած էր օր մը առաջ :  
 Նաւարկեցիկն ծովերու վրայ՝ ցած ու մութ երկինքին տակ ,  
 Մեր աչին կար Մահը , մեր ձախին՝ Տառապանքը ,  
 Իսկ վերը՝ անհետացած վեկա համաստեղութեան տեղ ,  
 Իբր բեւեռային աստղ՝ գրուած էր լուսաւոր անունդ :

Մ. Ի Շ Խ Ա Ն

## ՍԱՌՆԱՐԱՆԵՆ ԵԼԱԾ ՍԱՐԴԸ

(ՔԱՏԵՐԱԽԱԶ ԶՈՐՍ ԱՐԱՐ)

Դ. ԱՐԱՐ

ՆՈՅՆ ՏԵՍԱՐԱՆԸ

1

Խօսակցելով ներս կը մտնեն Պարպարա եւ Լիլի:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Տեսա՞ր խայտառակութիւնը: Որո՞ւն մաքէն կ'անցնէր  
ատանկ բան:

**Լիլի.**— Անկարելի է, չեմ հաւատար:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Ամբողջ սուտ, խարերայութիւն:

**Լիլի.**— Գոնէ մէկ-երկու միլիոն ալ չկայ:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Ձէ, աղուորս, չէ, մէկ սենթ անգամ չունի եղեր:

**Լիլի.**— Խելքիս պիտի դայ. հիմա ի՞նչ պիտի ընենք:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Ի՞նչը ինչ պիտի ընենք:

**Լիլի.**— Մեր ժառանգութեան բաժինները ի՞նչ պիտի ըլլան:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Ժառանգութիւն մնաց. ամբողջ օղը ցնդեցաւ: Աջ ու  
ձախ սպարաքեր միայն դիզած է:

**Լիլի.**— Վա՛խ, վա՛խ, այնքա՛ն յոյսեր կապած էինք իր միլիոններու  
բուն:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Ես կը զգայի, ես կը կասկածէի արդէն: Անոր այդ պա-  
ղապուր կեցուածքը չկա՞յ՝ բնաւ վստահութիւն չէր ներշնչէր:

**Լիլի.**— Ուշադրութիւն ըրա՞ծ ես, այդ տղան աչքերուդ մէջ շիտակ  
նայելու կը վախնար:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Հարկաւ կը վախնայ. խարերտները ատանկ կ'ըլլան:  
20րդ դարու մարդիկ պատմութեան մէջ ծանօթ են արդէն.  
բոլորն ալ խարերայ եղած են: Բայց այս մէկը դերազանցեց  
իր ժամանակակիցները: Դար մը ամբողջ ցատկեց՝ օր ցերե-  
կով մեր քիթին խնդայու համար:

**Լիլի.**— Ի՞նչ ըրեր է պատային պանքան դրած դրամները:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Մեծ բան մը չկայ եղեր արդէն. եղածն ալ կերեր է:

**Լիլի.**— Անկարելի է. ստոած տեղը դրամ կ'ուտուի՞:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Կ'ուտուի, աղուորս, կ'ուտուի: Դեղ, դարման, բժիշկ, եւ ասիկա՝ մէկ ամիս չէ, երկու ամիս չէ, ամբողջ հարիւր տարի...

**ԼԻԼԻ.**— Ինչպէ՞ս չէինք հաշուած այս ամէնը:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Ի՞նչ գիտնամ. այդ տղան մեր աչքերը կապեց. կախա՞րդ է, ի՞նչ է...

**ԼԻԼԻ.**— Ամէն մեղքիս վրայ՝ աղղականութիւն ալ խաղաց:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Ինչի՞ս ազգականը. փողոցէն անցնող ամէն ամերիկացի իրեն չափ աղղական կ'ելլէ:

**ԼԻԼԻ.**— Հազար մեր բրած զստուութիւնները... աղղական է ըսելով՝ իրեն համար մասնաւոր սենեակ կահաւորեցի 20րդ դարու ո՞ճով: Ահագին ծախս. եկուր տես, որ մէկ գիշեր անդամ ինծի չյատկացուց:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Այդ էջը մի՛ բանար. քանի՞ անդամ տունս տարի, սեղան շակեցի: Խեղճ աղջիկս քրոջ պէս դուրդուրաց վրան: Պղպտիկ նուէր մը անդամ չբերաւ:

**ԼԻԼԻ.**— Այրեւտիկերպ չի գիտեր:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Բնա՛ւ. կենցաղավարութեան մասին դադափար չունի:

**ԼԻԼԻ.**— Քալուածքն ալ տեսակ մըն է:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Ի՞նչ պիտի ըլլայ, անդեալէն եկած կիսավայրենի մը: Քաղաքակրթութեան քովէն չէ անցած: 20րդ դարէն ի՞նչ կը սպասես:

**ԼԻԼԻ.**— Մեզի լաւ դաս մը եղաւ. ասկէ ետք երես պէտք չէ տալ դարը փոխող ամէն արկածախնդրի:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Բարեբախտաբար շուտ արթնցանք եւ Սթեյլլաս ետ չեղաւ նշանածէն:

**ԼԻԼԻ.**— Մեզք պիտի ըլլար աղջկան:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Ես կը մեռնէի. չէի դիմանար... Պոպ շատ լաւ տըզայ է:

**ԼԻԼԻ.**— Նիւթական վիճա՞կը ինչպէս է:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Օրէ օր լաւնալու վրայ: Արդէն վիլլա մը գնեց:

**ԼԻԼԻ.**— Նո՞ր տեսակի վիլլաներէն:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Այո՛, ծփուն. ուզած տեղը կը տանիս կը գնես... մէջն ալ երկու առջօ ունի. մէկը սքանչելի խոհարար է, մասնադէտ խոտացած ճաշերու, միւսը՝ վարպետ տնտեսուհի:

**ԼԻԼԻ.**— Գործը լաւ է ուրեմն:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Միջմտորակային առեւտուր...: Քանի մը տարիէն սեփական աստղանաւ ալ կ'ունենայ: Միտքը դրածը կ'ընէ, շատ յամառ է:

**ԼԻԼԻ.**— Սթեյլլան դո՞՛ւ է, Թոմը չառնելուն համար չէ՞ նեղուած: Քիչ մը տարուած էր կարծես...

**ՊԱՐՊԱՐԱ.**— Ո՞վ, աղջի՞կս... այդ շքամ պաղապուրիս երեսը տեսնել չ'ուզեր: Թո՞մ կոչուածը իր կեղծ միլիոններուն ուժով չա՛տ փորձեց Սթեյլլայիս տրբանեակը դառնալ... որքա՛ն շուրջը դարձաւ. բայց իմ աղջիկս զրամին կարեւորութիւն տուող չէ: ամէն բանէ առաջ մարդը կը փնտոէ: Լիլի, հողիս, դուն ըսէ՛, դրամ չունեցողը աղջիկ սիրելու կ'ելլէ՞. սուս կ'ըլլայ տեղը կը նստի:

ԼԻԼԻ.— Ո՞ւր են հիմա նշանածները :

ՊԱՐՊԱՐԱ.— Գացին ամուսնանալու : Ուղղակի հոս պիտի գան . չընորհաւորութիւնները հոս պիտի ընդունին . այդպէս փափաքեցան :

Կը մտնէ Թում՝ շքանշանը կուրծքին . ձեռքը երկարելով երկու տիկիներուն՝

ԹՈՄ.— Բարեւ ձեզ, տիկին Պարպարա, բարեւ ձեզ տիկին Լիլի :

Պարպարա եւ Լիլի բարեւը չեն փոխադարձեր եւ կ'անցնին պտոնի կողմը : Թում զարմացած կը նայի անոնց ետեւէն եւ բան չի հասկնար : Կը մտնէ ինամակալը :

ԽՆԱՄԱԿԱԼԸ (Թումի քեւէն ամուր բռնելով).— Եկո՛ւր, նստէ նայինք, խօսելիք ունիմ քեզի :

ԹՈՄ (Ֆայլ մը կ'առնէ դէպի հօրը նկարը).— Խօսելի՛ք ունիս . նորէ՞ն թուղթ պիտի ստորագրեմ :

ԽՆԱՄԱԿԱԼԸ (Թումը հրելով անդին).— Ո՛չ հոն, ո՛չ այդ մարդուն շուքին ներքեւ : Ան քու հայրդ չէ այլեւս :

ԹՈՄ.— Հայրս է :

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Ուրեմն դուն իր տղան չես . դուն արժանի չես անոր որդին կոչուելու :

ԹՈՄ (անակնկալի եկած).— Ի՞նչ փոխուեցաւ յանկարծ . մինչեւ հիմա արժանաւոր հօր արժանաւոր դուստին էի :

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Այո՛, սրովհետեւ քեզ մարդ կը կարծէինք, միլիոնատէր :

ԹՈՄ (զարմացած).— Ինչո՞ւ, միլիոնատէր չե՞մ . . .

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Ողորմութեան կարօտ՝ ողորմելի՛ մըն ես դուն . . .

ԹՈՄ.— Բայց ի՞նչ եղան միլիոններս :

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Ինչո՞ւ սկիզբէն չըսիր, թէ դրամ չունիս . ինչո՞ւ խաբեցիր մեզ :

ԹՈՄ.— Ես մարդ չխաբեցի . դուք դիտ միլիոնատէր հռչակեցիք եւ հիմա ե՞տ կ'առնէք միլիոններս :

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Ստախօ՛ս, դուն մեր քիթին խնդացիր . դուն նշանաւոր առաւ-փախաւ մըն ես :

ԹՈՄ.— Ո՞ւր են միլիոններս, բռէ՛ք, ո՞ւր թոսն միլիոններս . ես կը պահանջեմ միլիոններս :

ԽՆԱՄԱԿԱԼԸ (Խիտտ).— Հերիք է . ամէն բան չափ մը ունի : Ասկէ ետք պարտքերուդ մասին պէտք է մտածես . . .

Կը սկսին մաս-մաս ներս մտնել Ակումբի անդամները եւ բոլոր դերակատարները, բացի Սքեյլայէն եւ Պոպէն :

**ԽՆԱՄԱԿԱԼԸ.**— Քեզի հետ վերջը կը խօսինք:

Ոստի կ'ելլէ եւ ձեռքի սեղմումով կ'ընդունի եկողները, որոնք անտեսելու կը զարնեն Թումր, հակառակ որ Թում փորձեր կ'ընէ տեղէն ելլելով բարեւելու գանձ: Ներկաները սրահին մէջ խումբեր կազմած՝ իրարու հետ կը խօսին եւ մասնատրաքար կը հաւաքուին Պարպարային շուրջ: Քեքի խմիչք կը սպասարկէ բռնորին:

Պահ մը ետք ներս կը մտնեն Սթելլա եւ Պոպ թեւ թեւի, հանդիսաւոր քաղաքով: Սթելլա հագուած է գերարդիական ձեւի զգեստ մը, որ մերկ կը ձգէ ամոր սրունքները, թեւերը, պարանոցը եւ կոնակը: Գըլուխը միայն գարդարուած է հարսի փողով: Պոպ նոյնպէս հագուած է գերարդիական թեքեւ զգեստ. կուրծքին վրայ՝ փեսաները յատկանշող նարնջածագիկ:

**ՇՇՈՒԿՆԵՐ.**— Հարսն ու փեսան... Հարսն ու փեսան...

**ՊԱՐՊԱՐԱ** (հարս ու փեսային քով վագելով).— Անուշի՛կ Սթելլա, ի՛նչ ալ տղուոր հարս մը եղեր ես: (Կը համբուրէ հարսն ու փեսան):

**ՁԱՅՆԵՐ.**— Հարս ու փեսային կենացը... չնորհաւո՛րք ըլլայ... չնորհաւո՛րք ըլլայ...

**ԼԻԼԻ.**— Աչքդ ըյս, տիկին Պարպարա:

**ՊԱՐՊԱՐԱ.**— Շնորհակալ եմ, տարուք ձեր տուները եւ ամէնէն անաջ, Լիլի ճանիկս, նոր տարոս մը՝ քեզի: (Կը համբուրուի Լիլիին հետ):

**ԽՆԱՄԱԿԱԼԸ.**— Այս բաժակը կը խմեմ Սթելլայի եւ Պոպի կենացը ու կը չնորհաւորեմ անոնց բարեբաւաստիկ ամուսնութիւնը ո՛չ միայն անձնապէս, այլեւ՝ յանուն Ակումբի վարչութեան...

**ՁԱՅՆԵՐ.**— Հիփ-հիփ-հիփ հուռոտա՛ւ՛...

Կը հնչէ Ակումբի երաժշտութիւնը: Ներկաները կը մտնեն հարս ու փեսային եւ իրենց բաժակները զարնելով անոնց բաժակին՝ «կենաց» կը խմեն եւ կը շնորհաւորեն: Ոմանք, մասնատրապէս կիները, կը համբուրեն հարսն ու փեսան: Կամաց-կամաց երաժշտութիւնը կը մեղմանայ եւ կը դադրի:

**ԼԻԼԻ** (հարս ու փեսային ուղղելով խօսքը).— Քանի՞ տարուան համար կ'ընկեցիք պայմանագրութիւնը:

**ՍԹԵԼԼԱ.**— Երեք տարուան:

**ԼԻԼԻ.**— Լա՛ւ է, շա՛տ լաւ է:

**ՄՈՐԻՍԸՆ.**— Մաղթենք, որ պայմանագրութիւնը նորոգուի երկրորդ անգամ, երրորդ անգամ եւ եթէ կարելի է՝ մինչեւ խոր ծերութիւն:

ՓիթլըրՍ.— Անցեալին մէջ ատոր կ'ըսէին՝ «մէկ բարձի վրայ ծե-  
րանաք» :

ՊԱՐՊԱՐԱ.— Ալ ատիկա իրենք դիտեն : Ես իմ պարտականութիւնս  
կատարեցի : Առայժմ երեք տարուան համար էրիկ-կնիկ են :

ՏէՅՎԻՍ.— Երջանկութեան բոլոր տուեալները ունին. երիտասարդ  
են, առողջ, զեղեցիկ... ապագան իրենցն է : (Բաժակը բարձ-  
րացնելով) : Զեր կենացը :

ՊՈՊ ԵՒ ՍԹԵԼԼԱ.— Շնորհակալ ենք, ձեր բոլորին կենացը :

ՄՈՐԻՍԸՆ (նշմարելով Թոմի տխուր եւ առանձնացած վիճակը) .—  
Թո՛մ, ինչո՞ւ նստեր ես մինակդ. ինչո՞ւ չես խմեր Սթեյլայի  
եւ Պոպի կենացը :

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Հանգիստ ձդեցէք Թոմը... ան մեր ժամանակին չի  
պատկանիր :

ՄՈՐԻՍԸՆ.— Բոլորս ալ մեր կարելին ըրինք կարծեմ, որ ընտելա-  
նայ մեր ժամանակներուն :

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Ըրինք, բայց սրովհետեւ չունէք հիմնականը — ո՛չ  
դրամ եւ ոչ ալ դրամ շահելու ձգտում — չկրցաւ շարունակ մե-  
զի հետ :

ՏէՅՎԻՍ.— Կը ցաւինք իրեն համար :

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Կեանքը իր անողոք օրէնքները ունի. կարելի չէ  
ապագային ներկայանալ պարագայ ձեռքերով : Ապագայ՝ կը նը-  
շանակէ յաջողութիւն, փառք, հարստութիւն :

ՏէՅՎԻՍ.— Գոնէ վերջինը ունենար :

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Շատ բան կը փոխուէր, կը դառնար հարազատ գա-  
ւակը մեր դարուն : (Պահ մը լուռ եւ խոժոռ՝ շուրջը դիտելի  
ետէ) : Բարեկամներ, մինչեւ հիմա նման դայթակողութիւն չէր  
պատահած : Առաջին անգամ ըլլալով, մեր Ակումբի պատմու-  
թեան մէջ, յետադիմական մը այս դուռնէն ներս սարդեցաւ  
եւ մեզ խարեց...

ԶԱՅՆԵՐ.— Օ՛օ՛...

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Թո՛մ Սմիթ, որ ինքզինք միլիոնատէր ձեւացուց,  
յետին աղքատ մըն է, յետին թշուառ մը :

ԶԱՅՆԵՐ.— Օ՛օ՛...

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Կը ցաւիմ, որ ան կը կրէ մեր Ակումբի հիմնադի-  
րին անունը, բայց արժանի չէ մեր վստահութեան : (Խօսքը  
ուղղելով Թոմին) : Թո՛մ, վերագարձուր այդ նշանը...

Լուրթիւն : Թոմ կը հանէ կուրծքի շփանշանը, դան-  
դադօրէն կ'առաջանայ, կը յանձնէ Խնամակալին, կը  
դառնայ բազմութեան, պահ մը կը նայի լուռ եւ ապա  
կը սկսի խօսիլ՝ նախ մեղմ, հետզհետէ աւելի զօրաւոր  
ձայնով ու շեշտով :

ԹՈՄ.— Կը ներէք, որ ես դրամ չունիմ. կը ներէք, որ ձեզի եկայ  
դադադէն ելած մեռելի մը դատարկ ձեռքերով : Եկայ ձեզի մի-  
նակ, ժամանակէն դուրս նետուած : Ձեզի դայու համար ին-

չե՛ր չեմ ձգած ետիս, ի՛նչ լուսնկերներ, ի՛նչ թանկագին սիրելիներ... Եկայ ձեզի յուսարով, որ ինձի կու տաք քիչ մը ջերմութիւն. կը սաքցնէք սառած հոգիս... իսկ դուք ինձի տուիք պատուոյ նախագահութիւն, պատանշան եւ պատուակալ ամուսնութեան առաջարկ: Հիմա կ'ընէք՝ ետ դնա՛, որովհետեւ հիմնականը չունիս:

ԼԻԼԻ.— Թում, ինչո՞ւ չբռիր, թէ հարուստ չես. ինչո՞ւ չհերքեցիր միլիոններուդ գրոյցը:

ԹՈՒՄ.— Ո՞վ բաւ, թէ ես հարուստ չեմ: Ես գարձեալ կը կրկնեմ՝ չո՛ր հարուստ եմ արեղակին լոյսով, հարուստ եմ շնչելու համար, ապրելու համար...

ԽՆՍՄԱԿԱԼԸ.— Բառերու հետ չխաղանք. դուն շահագործեցիր մեր բարեմտութիւնը: Դուն նենդամիտ խաբերայ մըն ես:

ՓԻԹՂԲ.— Վճիռներ արձակելու իրաւունքը պատմութեան կը պատկանի:

ՊՈՊ.— Խնդրե՛մ, ամուսնութեանս այս դեղեցիկ Լերկոյթը մի խանդարէք անտեղի խօսքերով. մտոցէք այդ խեղճ տղան. չ'արժեր գբաղիլ իրմով: (Գրկելով Սքեյլան): Կը ներէք մեզի, ստիպւած ենք մեկնիլ...

ՊԱՐՊԱՐԱ.— Հատկնալի է, Պոպ, բայց ո՞ւր պիտի երթաք:

ՍԹԵԼԼԱ.— Մամա, չեն հարցնէր: Յամենայնդէպս, Երկրագունտէն դուրս պիտի չելլենք: Պոպին արձակուրդը կարճ է: Պա՛յ-պա՛յ...

Հարս ու փեսան կը մեկնին եւ անոնց ետեւէն կը սկսին մեկնիլ նաեւ միւսները: Սրաիւր կը պարպաւի: Կը մնայ միայն Թում, առանձին, աքռոի տը վրայ ինկած: Շուրջը, սեղաններուն վրայ, կէս խմուած կամ պարապ բաժակներ: Թումին տրտում նայումսէք պահ մը սետեռած կը մնայ հօրը դէմքին, ապա կը խոնարհի: Կը փորձէ ոտքի ելլել՝ մեկնելու դիտաւորութեամբ, սակայն դարձեալ կ'իյնայ նոյն աքռոին վրայ, ծոյլ ու երագուն:

Զգայշ քայլերով Քերի կը մտնեայ Թումին, կը կենայ քովը, կը դիտէ գինեք եւ գործակից շեշտով կը հարցնէ.

ՔԵԹԻ.— Պարոն Սմիթ, ձեզի նոր բաժակ մը բերե՞մ:

ԹՈՒՄ (դանդաղօրէն գլուխը վեր առնելով).— Ո՛չ, Քեթի, չնորհակալ եմ:

ՔԵԹԻ.— Պատուանշանին համար մի՛ նեղուիք, օր մը նորէն կը ստանաք:

ԹՈՒՄ.— Չեմ նեղուիր, Քեթի, տե՛ս, հայրս շատ ունի անոնցմէ:

ՔԵԹԻ.— Հարս ու փեսան ինչպէ՞ս գտաք, պարոն Սմիթ:

ԹՈՒՄ.— Սքանչելի՛...

- Քեթի.— Գիտէ՞ք, Պոպ ընդունեք է Սթեյլայի բուրձը պայմանները՝  
երեք տարուան համար :
- ԹՈՄ.— Հա՞... :
- Քեթի.— Ձեր ժամանակ մտուհական պայմանագրութիւն կնքելու  
համար ի՞նչն էր հիմնական պայմանը :
- ԹՈՄ.— Սէրը, Քեթի :
- Քեթի.— Ա՛հ, սէրը... : Բայց սէրը սպաս է, կարժէ՞ ատոր հա-  
մար մտուհանալ :
- ԹՈՄ.— Մեր ատեն մարդիկ կը կարծէին, թէ կ'արժէ :
- Քեթի.— Ի՞նչ լաւ... : Ամուսնացող զոյգերը իրարու ի՞նչ կը խոս-  
տանային :
- ԹՈՄ.— Իրենց սիրտը, Քեթի :
- Քեթի.— Իսկապէ՞ս... միա՞յն իրենց սիրտը եւ ուրիշ ոչ ի՞նչ... :
- ԹՈՄ.— Ուրիշ ոչ ինչ :
- Քեթի (մտածկոտ եւ վարանելով).— Պարոն Սմիթ, նախանձոտ սի-  
րահարը ձեր ժամանակ ի՞նչ կ'ընէր, եթէ իր սիրած աղջկը  
ուրիշին հետ մտուհանար :
- ԹՈՄ.— Կը խեղդէր, Քեթի :
- Քեթի (սարսափած).— Կը խեղդէ՞ր, ինչպէ՞ս :
- ԹՈՄ.— Ահա այսպէս : (Երկու ձեռքով կը պատկերացնէ խեղդե-  
լու արարքը) : Ափերուն մէջ կ'ստնէր աղջկան սիզը եւ կը  
խեղդէր... :
- Քեթի.— Ի՞նչ սարսափելի բան... աղէկ որ այդ դարուն չեմ ապ-  
րած... :
- ԹՈՄ.— Բայց ես այդ դարէն կու գամ :
- Քեթի (արտագին).— Իուք տարբեր էք, պարոն Սմիթ... :
- ԹՈՄ.— Այո՛, Լս տարբեր Լմ, Լս ստոնարանէն ելած եմ... :
- Քեթի.— Պարոն Սմիթ, ի՞նչն է, որ ամէնէն շատ փոխուած կը դրո-  
նէք մեր դարուն :
- ԹՈՄ.— Ամէն ինչ, Քեթի, ամէն ինչ, բացի մարդէն. միայն մարդը  
չէ փոխուած :
- Քեթի.— Ինչպէ՞ս... ուրեմն մենք չէ՞նք յատկաբար :
- ԹՈՄ.— Յատկաբար էք, Քեթի, շա՛տ յատկաբար, բայց մար-  
դը նոյնն է :
- Քեթի.— Կիսն ալ նո՞յնն է :
- ԹՈՄ.— Կիսն ալ նոյնն է :
- Քեթի (շուրջը դիտելով).— Ձեզ բոլորովին մինակ ձեզին, պարոն  
Սմիթ :
- ԹՈՄ.— Հող չէ, Քեթի, ես արդէն մինակ էի... :
- Քեթի (յուզումով).— Ես, պարոն Սմիթ, ես միշտ այստեղ եմ... :
- ԹՈՄ.— Շնորհակալ Լմ, Քեթի :

Ոտքի կ'ելլէ եւ դանդաղօրէն կ'ուղղուի դէպի ել-  
քի դուռը. ճիշդ այդ վայրկեանին մերս կը մտնէ խնա-  
մակալը :

ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Ո՛ւր կ'երթաս, կեցի՛ր, դուն մեկնելու իրաւունք  
չունիս. գործ ունիմ ես քեզի հետ :



- ԹՈՄ.— Ասկէ ետք ի՞նչ գործ կրնաս ունենալ ինձի հետ :
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Քու ներկայութիւնդ զիտե՞ս քանի՞ նստաւ վրաս .  
զիտե՞ս որքան գրամ ծախսած եմ քեզի համար :
- ԹՈՄ.— Կամայ-կամայ կը վճարեմ, պարտքս թող ըլլայ :
- ԽՆԱՄԱԿԱԼԸ (հեզմակամ).— Կը վճարես, այս, սատնարանէդ հա-  
նելոյ :
- ԹՈՄ.— Կ'աշխատի՛մ. ես ճարտարագետ եմ :
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Քու այդ հարիւր տարուան վիլաններդ հիմա չեն  
անցնիր :
- ԹՈՄ.— Ուրիշ գործ մը կ'ընեմ :
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Դուն ինձի երկու միլիոն տուար պարտախան ես .  
թուղթեր ունիս ստորագրած : Ես այդ հաշուին փոխառութիւն-  
ներ կ'ընամ եմ եւ տոկոս կը վճարեմ : Անշուշտ տեղեակ ես . . .
- ԹՈՄ.— Բացարձակապէս ոչ :
- ԽՆԱՄԱԿԱԼԸ (հետզհետէ աւելի խիստ).— Սուս մի խօսիր . քու  
ձեռքովդ ստորագրած ես այդ թուղթերը : Քեզ բանա նետել  
պիտի տամ :
- ԹՈՄ.— Ես ոչեւէ խոստում չեմ տուած . ես սատնարանէն նոր ե-  
լած եմ :
- ԽՆԱՄԱԿԱԼԸ (զղայիմ).— Դուն թուղթ ունիս ստորագրած : Օրէնք  
կայ, դատարան կայ . ո՞վ ըսաւ, որ ստորագրես, երբ դրամ  
չունիս :
- ԹՈՄ.— Յանցա՞նք է դրամ չունենալը :
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Օրէնքը շատ խիստ է անոնց հանդէպ, որ բնկերու-  
թեան վրայ բեռ կ'ըլլան : Դուն ինչպէ՞ս համարձակեցար սա-  
նարանէդ դուրս գալ եւ բեռ ըլլալ մեր վրան :
- ԹՈՄ.— Ես ձեր հիւրն էի :
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Շատ մի՛ խօսիր, ես քու քիթ ու բերանդ կը ջարդեմ  
հիմա : (Բռուցցքը կը ցցէ Թոմի դէմքին առջեւ) : Դիտե՞ս ես  
այ եմ :
- ԹՈՄ.— Ակուճքին նախապահ :
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Մեր դարը քեզի պէս ճրիակերներ չի հանդուրժեր :
- ԹՈՄ (դէմքը առնելով ձեռքերուն մէջ).— Աստուած ի՛մ, ինչո՞ւ պա-  
հեցիր դիս . . . որպէսզի սառէն հանեն եւ նախատե՞ն այսպէս . . .
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Ինչո՞ւ քաշքշեցիր անպէտ դոյութիւնդ ամբողջ հա-  
րիւր տարի : Մտրդ պէտք է դիտնայ ժամանակին մեանիլ :
- ԹՈՄ.— Իմ կարծիքս հարցնող չեղաւ : Ո՛չ ծնիւս հարցուցին, ոչ ալ  
մեռնիրս :
- ԽՆԱՄԱԿԱԼԸ (յանկարծ գիւտ մը ընողի պէս).— Կեցի՛ր, դուն բո-  
լորովին ալ անպէտք չես . դուն հանրածմնօթ ես : Թերթերը  
զբեցին քու մասիդ, ամէն կողմ նկարդ երեւցաւ . ամէն մտրդ  
կը ճանչնայ քեզ : (Ձեռքերը շփելով) : Հրաշալի՛ . . . դրամ չու-  
նիս, բայց դուն ինքդ դրամադրուի ես, անդտանելի, անսպառ  
դրամադրուի . . .
- ԹՈՄ (սարսափած).— Ի՞նչ է, պիտի ծախե՞ս դիս :
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Ո՛չ, քեզ չէ, որ պիտի ծախեմ, այլ՝ քեզի ծախել  
պիտի տամ . . . սքանչելի՛ դաղափար . . . քեզի ծախել պիտի  
տամ :

- ԹՈՄ.— Եթէ հաշիչ կամ աֆիոն ծախել պիտի տաս, դիտցած եղիր,  
ես այդպիսի դորժերու մէջ չեմ մտած եւ չեմ մտնէր:
- ԽՆԱՄԱԿԱԼԸ (Խնդարով).— Հաշի՞չ, աֆիոն... Ի՞նչ յիմար բաներ  
կ'ըսես. ատոնք ազատ կը վաճառուին, զիւրներով կընաս զնել:
- ԹՈՄ.— Հասցա ի՞նչ է նպատակդ:
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Դուն լաւագոյն անձն ես աշխարհի վրայ ծանուցում  
կատարելու համար: Այո՛, ծանուցում, րեքլամ...
- ԹՈՄ.— Այսինքն ես ի՞նչ պիտի ընեմ:
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Դուն պիտի ընես ա՛յն՝ ինչ որ քեզի ըսեմ, ինչ որ  
ես ուզեմ... քանի մը արտադրութիւններ ունիմ, անոնց ծա-  
նուցումը պիտի կատարես:
- ԹՈՄ.— Ես ատանի բան չեմ կընար, ես վարժ չեմ:
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Կընա՛ս, կընա՛ս...: Պատկերասփիւռին առջեւ,  
չարժանկարի պաստառներէն, հրապարակային բեմերու վրայ  
պիտի դովես տպրանքներս:
- ԹՈՄ.— Մոմխոն կընա՞յ միմոս դառնալ:
- ԽՆԱՄԱԿԱԼԸ (ուսիմ գարնելով).— Կընայ, կընայ... լաւ դրամ կը  
չահինք միտսին: Կա՛մ բեմը, կա՛մ բանտը: (Քեքիին): Քե-  
թի՛, սեքս-քոլայի շիշ մը բեր: (Թոմիին): Այս օրերս սեքսին  
արժէքը ինկած է քիչ մը, բոնել կ'ուզեմ՝ սեքս-քոլան առաջ-  
ւան սպառումը չունի: Դուն պիտի բարձրացնես սեքսին ար-  
ժէքը:

Քեքի կը բերէ սեֆս-ֆոլայի պաղ շիշ մը եւ կը  
յանձնէ խնամակալին:

- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Թո՛մ, շատ դիւրին է ընելիքդ: Պիտի անցնիս քա-  
մերային առջեւ, այս շիշը պիտի տոնես ձեռքդ, աղահօրէն  
խմելու ձեւ մը պիտի ընես, այսպէս, գոհունակութենէդ պի-  
տի հառաչես, պիտի ժպտիս եւ պիտի ըսես. «Սառերու մէջ  
պատկած հարիւր տարի անհամբեր սպասեցի, սրպէսդի խմեմ  
սառի պէս պաղ սեքս-քոլան»:
- ԹՈՄ.— Սուս է, ատիկա մեծ սուտ մըն է. ես սեքս-քոլա չեմ սի-  
րեր, ես կ'ատեմ պաղ բաները:
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Ըրածդ ծանուցում է. ո՞ր մէկ ծանուցումը սուտ  
չէ:
- ԹՈՄ.— Ես չեմ կընար պաղ բան խմել. քրիզս կը բռնէ. ես սառնա-  
բանէն նոր ելած եմ. ես արեւ կ'ուզեմ, ես Ափրիկէի տաք ան-  
տառներուն ծանուցումը սիրով կը կատարեմ:
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Այս պաղը շահաբեր է, յիմա՛ր, գրպանդ կը տաք-  
ցընէ:
- ԹՈՄ.— Ես չեմ կընար սուտ խօսիլ:
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Դրամի համար խօսուած սուտը սուտ չէ:
- ԹՈՄ.— Ձեմ կընար, չեմ կընար:
- ԽՆԱՄԱԿԱԼԸ.— Պարապ խօսք. դարձիւր նայիմ առջեւ: (Կը դարձնէ  
դեպի ժողովուրդը, ապա արքա մը կը բերէ եւ կը դնէ րե-

մին մեջտեղը) : Նստէ սա աթոռին վրայ եւ փորձէ... առ սա շիշը, այո՛, մի՛ վախճար, փորձէ :

Թում կը նստի աթոռին : Ոգրերգական դէմք մը առած է, գոռաւնքի գգացումով շիշը բռնած, կարծես ժողովուրդէն օգնութիւն սպասելով :

**ԽՆԱՄԱԿԱԼԸ.** — Բայց նախ ժպտէ՛ : (Մամածուռ ժպիտ մը կը գծագրուի Թումի դէմքին վրայ) : Այո՛, այդպէս, ժպիտը կարեւոր է. շիշը վեր բարձրացուր, շրթունքներուդ մօտեցուր : (Թում դողացող ձեռքերով կ'աշխատի կատարել հրամանները) : Այո՛, այդպէս... Հիմա արտասանէ ըսելիքդ :

**ԹՈՄ** (կակազելով եւ ռդրերգական շեշտով) . — Սառերու մէջ պառկած... Հարիւր տարի սպասեցի...

**ԽՆԱՄԱԿԱԼԸ.** — Չեղա՛ւ. հասարակ ռոպոյի մը չա՞փ ալ չկաս : Այդպէս պաղապուր ձեւով չեն խօսիր : Սրտանց, սիրալիք, ախորժակով... Նորէն սկսէ :

**ԹՈՄ** (շիշը վեր բռնած) . — Հարիւր տարի...

**ԽՆԱՄԱԿԱԼԸ.** — Չեղա՛ւ. նախ ժպտէ...

**ԹՈՄ** (աշխատելով ժպտիլ) . — Հարիւր տարի սառերուն մէջ պառկած... սեքս-քոլան... սառի պէս պաղ սեքս-քոլան... սառի պէս պաղ... պաղ... պաղ...

Կը սկսի դողդողալ. ակռաները իրարու կը զարնուին եւ չի կրնար շարունակել : Քեթի բաժակ մը ուխքի առած կը վազէ...

**ՔԵԹԻ.** — Պարոն Սմիթ, չո՛ւտ խմեցէք այս ուխքին :

**ԽՆԱՄԱԿԱԼԸ** (խիստ) . — Որո՞ւն հաշուին բերիք այդ բաժակը. չո՛ւտ ետ տար : (Քեթի ետ կը տանի) :

Թում դժուարութեամբ ոսքի կ'ելլէ. դողը կը շարունակուի. ուսերը կը ցնցուին եւ ակռաները իրարու կը զարնուին : Այս անգամ կ'իյնայ աթոռի մը վրայ, որ կը գտնուի հօրը նկարին առջեւ : Կ'իյնայ եւ կ'անշարժանայ : Դէմքը կիսովին ժողովուրդին է : Լոյսերը աստիճանաբար կը տկարանան եւ բեմը կը խաւարի պահ մը :

Լոյսերը կը բացուին մեղմօրէն, ստեղծելով երագային մթնոլորտ մը բեմին վրայ : Թում նստած է նոյն դիրքով, անշարժ, սառած, կարծես մեռած ըլլայ : Բռլորովին մինակ է : Քիչ ետք ներս կը մտնէ Սթեյլա, սեւ մազերը արձակ ձգած ուսերուն : Հագած է կարմիր

երկար շրջագգեստ: Ամբողջ կերպարանքը տեսիլքի ե-  
րեւոյթ կը պարզէ: Լոյսերը թեթեւօրէն կը գորանան:

*ԹՈՄ* (աչփերը կը բանայ, կը տեսնէ Սթելլան, կը դիտէ զմայլած  
եւ ոտքի ելլելով ուրախ կ'ընդառաջէ).— *Սթելլա, եկա՞ր:*

*Սթելլա*.— *Այո՛, Թոմ, եկայ:*

*ԹՈՄ* (ֆնֆշօրէն).— *Կը յիշե՞ս, Սթելլա՛, վերջին անգամ մեր պտոյ-  
տը, ծաղկած դաշտերուն մէջ, զարնանային իրիկուն մը:*

*Սթելլա*.— *Ինչպէ՛ս կրնամ մոռնալ...: Ես ծաղիկներու փունջ մը  
ունէի մազերուս մէջ: Տե՛ս, հիմա կ'ալ ունիմ: (Տոյց կու տայ  
մազերուն մէջ խրած փունջը):*

*ԹՈՄ*.— *Կը յիշե՞ս, Սթելլա, յուզումէդ կը դողայիր թեւերուս մէջ:*

*Սթելլա*.— *Կը յիշեմ, Թոմ, կը յիշեմ նաեւ քու մատներուդ կրակը  
դէմքիս եւ մազերուս վրայ:*

*ԹՈՄ*.— *Ես քեզ երկա՛ր սպասեցի, Սթելլա, շա՛տ երկար...*

*Սթելլա*.— *Եկուր, Թոմ, եկուր մեկնինք միասին:*

*ԹՈՄ*.— *Ես միլիոնատէր չեմ, Սթելլա:*

*Սթելլա*.— *Գիտե՛մ, ի՞նչ կարեւորութիւն ունի. դուն հարուստ ես  
բոլո՛ր միլիոնատէրերէն աւելի:*

*ԹՈՄ*.— *Ես ստոնարանէն ելած եմ, Սթելլա:*

*Սթելլա*.— *Գիտեմ, Թոմ, ի՞նչ կարեւորութիւն ունի: Դուն տաք  
ես բոլոր սիրահարներէն աւելի:*

*ԹՈՄ*.— *Ես հին եմ, Սթելլա:*

*Սթելլա*.— *Գիտեմ, Թոմ, ի՞նչ կարեւորութիւն ունի. դուն նոր ես  
ամէն դարնան վերադարձող Մայիս ամսուն պէս: Եկուր, Թոմ,  
եկուր մեկնինք միասին...*

Վերջին բառերուն հետ Թոմ կը գրկէ Սթելլայի  
ուսերէն եւ դանդաղօրէն կը մեկնին, երկու ստուեր-  
ներու նման...: Բեմը բոլորովին դատարկ է: Լոյսերը  
ամբողջապէս կը բացուին եւ յանկարծ ներս կը խուժէ  
խնամակալը:

*ԽՆԱՄԱԿԱԼԸ* (չափազանց յուզուած).— *Ո՛ւր է Թոմը, ո՛ւր գնաց  
Թոմը, ինչո՞ւ ձգեցիք, որ երթայ: Շո՛ւտ, փակեցէք երկրի եւ  
երկինքի բոլո՛ր ճամբաները. փակեցէք ելքի բոլո՛ր դուռնե-  
րը. լուր տուէք ոստիկանութեան: Մի՛ ձգէք, որ Թոմ Սմիթ  
փախուստ տայ. ան պարտք ունի ինձի. մի՛ ձգէք, մի՛ ձգէք,  
մի՛ ձգէ՛ք...*

**ՎԱՐԱԳՈՅՐ**

(Շար. 4 եւ վերջ)

Մ. ԻՇԽԱՆ

Պէյրուք  
Յուլիս 25, 1973

Հ. Ս Ա Հ Ե Ա Ն

Հետագայ բանաստեղծութիւնները առնուած են հայրենի բանաստեղծ Համո Սահեանի վերջին հուշարձնի՝ «Իրիկհասոց»։  
«Իրիկհասոց»ի մասին տեսնել մեր ներկայ համարին մէջ լոյս առնուած անդրազարճը։

**ՁԵՆ ԷԼ ԻՄԱՅԵԼ**

Ցերեկով նրանք արտ են քաղհանել,  
Որ հասկի ոտքը փուշը չծակի:  
Արտի ծաղիկներն արմատից հանել,  
Ազօրք են արել, որ արտը ծաղկի:  
Մատնեքով սանրել արտը բովանդակ,  
Մաքրել են նրանք փուռչ ու փշերից...  
Երբ տուն են եկել, փշերի տեղակ  
Ատողեր են թափուել նրանց փէշերից, —  
Գիշեր է եղել... Շուկներ... յետոյ  
Քնով են արել հոգսերը վաղուայ  
Եւ կամաց-կամաց քնել են նրանք:  
Ձարթնել են ծէգին... Եւ մինչեւ անգամ  
Ձեն էլ իմացել, որ արդէն ես կամ:  
Ձեն էլ իմացել... Բայց հագար անգամ  
Շնորհակալ եմ ես այն գիշերից,  
Որ չի ուղարկել հորս՝ ջրաղաց  
Եւ չի քաշքշել մօրս փէշերից,  
Չի առել նրան ու տարել հերանց...  
Ու ես ծնուել եմ այսպիսին, այսպէս,  
Ամենամիակ եւ ամենասե:

**ՄԱՅՐՍ**

Գու իմ միակն էիր, ինչպէս Հայաստանս,  
Տանս նրազն էիր եւ ծուխն էիր տանս,  
Քոնը՝ իմն էր, իմը՝ քոնն էր յարիտեանս,  
Գու իմ միակն էիր, ինչպէս Հայաստանս:  
Իմ տէրութիւնն էիր եւ իմ երկիրն էիր,  
Լքումն ու լիրն էիր, նակատագիրն էիր,  
Եւ իմ միակն էիր, ինչպէս Հայաստանս:  
Իմ կեանքի գինն էիր, իմ Ծիր-Կաթինն  
էիր,  
Եւ իմ բաժինն էիր, եւ իմ բազինն էիր,  
Գու խառնուած էիր շնչիս, էութեանս...  
Գու իմ միակն էիր, ինչպէս Հայաստանս:

**ՉԻ ՀԱՆԱԶՈՒՄ**

Ծովը քրքում է ամպ ու երկինք,  
Ծովը թռչում է, ծովը ճչում:  
Ծովը շնչում է ամպ ու երկինք  
Եւ արհաւիրք է արտաշնչում:

Ծովը փլում է ինքն իր գլխին,  
Ծովը փախչում է ինքն իրենից,  
Եւ թովոում է ինքն իր գրկին,  
Եւ երկնչում է ինքն իրենից:

Ծովը ինքն իրեն արկնոծում  
Եւ պար է ածում ինքն իրեն...  
Ծովը ննջում է ինքն իր ծոցում,  
Օրօր է ասում ինքն իրեն:

Ծովն ինքն իր առաջ բաց է լինում,  
Միտք է անում իր հետի վրայ,  
Իր երգի վրայ լաց է լինում  
Եւ ծիծաղում իր խելի վրայ:

Կապտում, խիում է ինքն իրեն,  
Սպիտակում է ու կանաչում...  
Ծովը չի խղում ինքն իրեն,  
Ծովը ինքն իրեն չի գանաչում:



Բայլում եմ գարնան գմբուխտ  
հե՛քիաթում —

Օրհնարանելով  
Պարզ ու նախնական խորհուրդը նրա...  
Յարիտեանքեան սարսուռ է կաթում  
Բողբոջի, ծաղկի  
Եւ ակնքարքի երկունքի վրայ:

Աչքերս հեռու երկինքն եմ չափում,  
 ճշարով խում  
 Ծիածանների հրաշքը նրա...  
 Անտառի մութեան սարսուռ է կաթու՛ղ  
 Քունն առած հողի  
 Ամէն նշխարք ու մասունքի վրայ:



Մէկ քում է, քէ երկնքից նոր էր կաթեց  
 Իմ ծննդեան մանուկ օրուայ լոյսը բարի,  
 Մէկ քում է, քէ այս հրաշք հողի վրայ  
 Ապրել եմ ես հագար անգամ հագար

տարի:

Մէկ քում է՝ նախա-նախա-նախա  
 նախնեաց

Նախապապի ձեռք-մանգաղով  
 Քարանձախի բունքին անած խոտն եմ  
 հնձել

Եւ առաջին արտը գարու,  
 Մէկ քում է՝ հագար անգամ հագար  
 տարի

Յետոյ եմ դեռ աշխարհ գալու...  
 Կեանք, բարի լոյս...  
 Եւ քոյլ տուր քն «բարի լոյսով»  
 Քսանհագարերորդ անգամ քարմանալու  
 Եւ անելու քն ականջին,  
 Որ քեզ վրայ եւ մանուանդ դեռ ինձ վրայ  
 Պատիւ ունեմ գարմանալու:

ՔԱՐԸ

Քարը՝ երամ, քարը՝ նախիր,  
 Քարը՝ հօտ:  
 Քարը՝ հօտաղ, քարը՝ հովիւ,  
 Քարը՝ հող:

Քարը՝ օջախ, քարը՝ կրակ,  
 Քարը՝ բոց:  
 Քարը՝ խորհուրդ, քարը՝ իրատ,  
 Քարը՝ փորձ:

Քարը՝ սեղան, քարը՝ սփռոց,  
 Քարը՝ բարձ:  
 Քարը՝ ուրազ, քարը՝ սոց,  
 Քարը՝ բախտ:

Քարը՝ արգելք, քարը՝ պատիժ,  
 Քարը՝ վերք:  
 Քարը՝ պատուար, քարը՝ պատիւ,  
 Քարը՝ ելք:

Քարը՝ զայրոյթ, քարը՝ գրահ,  
 Քարը՝ զէնք:  
 Քարը՝ գօրեղ, քարը՝ զինուոր,  
 Քարը՝ մեղք:

Քարը՝ ընկեր, քարը՝ որդի,  
 Քարը՝ քոռ:  
 Քարը՝ հաստատ, քարը՝ բարձիկ,  
 Քարը՝ խոր...:

Քարը՝ մամուռ, քարը՝ վայրի,  
 Քարը՝ բիրտ:  
 Քարը՝ խոնարհ, քարը՝ բարի,  
 Քարը՝ կիրք:

Քարը՝ կշեռք, քարը՝ գաւաթ,  
 Քարը՝ դուռ:  
 Քարը՝ խորան, քարը՝ հաւատ,  
 Քարը՝ կուռք:

Քարը՝ կամար՝ գմբէթ ու քիւ,  
 Քարը՝ դուռ:  
 Քարը՝ խաչքար, քարը՝ արծիւ,  
 Քարը՝ նուռ:

Քարը՝ քոնիչք, քարը՝ մատեան,  
 Քարը՝ կոչ:  
 Քարը՝ ոգի, քարը՝ ոստան,  
 Քարը՝ ոն:

Քարը՝ անցեալ եւ ապառնի,  
 Քարը՝ երթ...  
 Քարը՝ Գեղարդ, քարը՝ Գառնի,  
 Քարը՝ երգ:



Տարիներն իրար նման ու տարբեր,  
 Տարիներն իրար երես չտեսած,  
 Իրարից փախած-մտել իրար գիրկ,  
 Եկել-գնացել, կորել եմ անդարձ...  
 Կորչելով անել դարձել եմ տարիք,  
 Եւ տարիքով եմ ես հարստացել:

Ես ամբողջովին ինձ պարտք եմ առել  
Բնութիւնից մեծ ու մեծահարուստ:  
Եւ կամաց-կամաց, պատառ-պատառիկ  
Մարել եմ երգով... Բայց որքան մարել,  
Այնքան անել եմ պարտքերս տալիք,  
Եւ տալիքով եմ ես հարստացել:



Ու միտք եմ անում... Մեր ճանապարհին  
Ինչէր կորցրինք եւ ինչե՛ր գտանք: —  
Դարերի մախաղ դարձրինք տարին  
Եւ բռնրատնից երկնաւեր մտանք:

Աստղանուէրը Ծիր-կաթին հասան  
Եւ աստղերի մէջ աստղեր վառեցին...  
Բայց մեր վշտերը չթեթեացան,  
Եւ մեր հոգսերը չնուազեցին:

Երբ տեղաւորել եմ կարողանում  
Մահուան թակարդներն աշխարհի վրայ  
Եւ Մարսից անգամ հող եմ գողանում,  
Զէնքեր թափցնում վիհերում նրա,

Էլ ինչպե՞ս պիտի մարդը մարդ մնայ,  
Սարսափը մեռնի ու վիշտը մեռնի  
Ու ոյսը բնի, ու խիղճն արթնանայ  
Ու երջանկութիւնն աշխարհը բռնի:

ԿԸ ՈՐՈՏԱՄ

Պիտի որոտամ ես աշխարհով մէկ,  
Թէ մեր տարիներն ինչպէս եմ հոսում  
Այս մութ-մեռտաղեայ տուփիկների մէջ,  
Երկնաւերների լաբիրինթոսում:

Եւ կը որոտամ ես աշխարհով մէկ,  
Թէ ինչպէս է, որ մենք չենք ափսոսում  
Մեր միակ կեանքն այս խուլ խուցերի  
մէջ,

Առուփախերի լաբիրինթոսում:

Եւ կը որոտամ ես աշխարհով մէկ,  
Թէ մարդն ինչպէս է ինքն իր հետ խօսում  
Իր այս խառնամբոյս մեռակութեան մէջ,  
Հառ ու նիչերի լաբիրինթոսում:

Եւ կը որոտամ ես աշխարհով մէկ,  
Թէ մեզ ինչպէս եմ տոկալ փարգում,  
Մեր այս երկնասոյգ փարայրների մէջ  
Եւ ստորգետնեայ լաբիրինթոսում...

Եւ կը որոտամ ես աշխարհով մէկ:  
Բայց իմ որոտի ձայնն ո՛վ է լսում  
Այս աշխարհացունց պայթիւնների մէջ,  
Այս ոռնոցների լաբիրինթոսում:



Ես այսֆան բարդ ու հասարակ,  
Ես այսֆան բիրտ, այսֆան բարակ,  
Ես այսֆան հաշտ ու հակառակ,  
Այսֆան անշարժ, այսֆան արագ,  
Այսֆան անփոյթ, այսֆան հաւաք,  
Առաքինի ու անառակ,  
Եւ հորովել եւ պատարագ:  
Մի տեղ կրտսեր, մի տեղ աւագ  
Եւ սպեհեր եւ պատանի...

Ով ինչ կ'ուզէ, թող գայ տանի:

ՀԱՒԱՏՈՒՄ ԵՄ ՔԵԶ

Հաւատում եմ քեզ, հայոց հանճար,  
Քեզ համար դեռ տօներ կը գան,  
Նարեկացիներ կը գան աշխարհ,  
Սայաթ-Նովաներ կը գան:

Նրանց թռիչքը մենք չունեցանք,  
Երեւի հնար էլ չկար...  
Բայց մի համարիք մեզք ու յանցանք,  
Մի կոչիր թոյլ ու տկար:

Մենք հազար մագէ կամուրջ անցանք,  
Տագնապով անցանք եւ ահով...  
Եւ մենք ինքներս կամուրջ դարձանք,  
Որ անցնես մեր վրայով...

Հաւատում եմ քեզ, հայոց հանճար,  
Քեզ համար դեռ տօներ կը գան...  
Դեռ վարուժաններ կը գան աշխարհ,  
Սիամանթոններ կը գան:

## Ա. Ա Բ Ե Լ Ե Ա Ն

# Ջ Ի Ն Ա Գ Ո Ի Լ 27...

\*

\*\*

Երբ սպասեալը արթնցուց զիս, մութ էր տակաւին:

Օղջ ցուրտ էր:

Սուրճ բերած էր:

Խմեցի:

Հազուապէս հաշուած ատեն կը մտէի, որովհետեւ քնատ էի դեռ: Մենեկակիցս դեռ կը քնանար: Փողոցը լուռ էր. երբեմն միայն, արագ սուրացող ինքնաշարժի մը ձայնը կը լսուէր, որ նախ կը մտնանար, յետոյ՝ կ'անցնէր կողքի փողոցէն եւ կը հեռանար: Անկիւնադարձին՝ ինքնաշարժներուն անխները կը կաղկանձէին:

— Շուկայ պիտի չերթա՞ս...

— Օ՛... ժամը քանի՞ է ինչու... ղլուխս կը ցաւի, եզրա՛յր, ահաւոր բան է... ցո՞ւրտ է դուրսը, ընկեր, ցո՞ւրտ է... Եթէ ցուրտ է՝ չելլեմ... Կա հապիպի, կո՞ղս:

— Խնձոր չունի՞ս:

— Միջնորդները թող ծախեն... միջնորդէք ինչո՛ւ կու տանք սրիկաներուն...

— Երէկ դիմով էիր...

— Կարծեմ:

— Ել, միասին երթանք:

— Արեւը չէ՞ ծագած:

— Արեւէն ի՞նչ կ'ուզես: Ե՛լ:

— Կանուխ չէ՞... լաւ, կ'ելլեմ... սկտք է ելլեմ, լա՛ւ որ արթնցուցիր զիս, ընկեր... լուսագոյն խնձորս է, կը հասկնա՞ս... պէտք է որ հոն ըլլամ: Գետնին տակը անցնի... գետնին տա՛կը:

Լուսացուեցայ: Մենեկակիցս դեռ կը տնտնար բողբոջելով. «Իր-ժո՛րք, դժո՛խք... սրիկայութիւն է, սրտխառնուք կը զգամ... սպաս-էակը հոյակապ տղայ է, մարդը սուրճն ալ բերեր է... գետնին տա՛կը անցնին, ասկէ ետք պիտի չխմեմ: Թո՛ւ...»:

— Երեսդ լուա՛, բան չի մնար:

— Հըհ, միշտ նոյն սրտամութիւնը...: Նայինք այսօր շուկան ինչպէ՞ս է...: Քանի՞ սնտուկ ունիս:

— Հինգ հարիւրի շուրջ:

— Ընտի՞ր:

— Միջակ: Դո՞ւն:



— Չորս հարիւր, բայց ի՛նչ... ոսկի՛: Հոյակապ ապրանք է. նայինք ինչ գին կը բերէ:

Պաղարը մօտ էր պանդոկին: Երբ հասանք՝ արդէն եռուզեռը սկսեք էր: Բազմահագար ժողովուրդ, ձիակառք, աղմուկ: Գետինը՝ ցեխ, ճղմուած պտուղներ, բանջարեղէնի տերեւ: Վաճառականներու եւ միջնորդներու աղաղակ, եւ դեռ՝ աներեւակայելի շատ մը երեւոյթներու անկարելի համախմբում: Մեր խնձորներու գէղը կորսւած էր այդ ժխորին մէջ: Դժուարաւ կրցայ գտնել վայրը: Միջնորդները արդէն վաճառքի հաներ էին մաս մը սնտուկներ: Խումբ մը ձեղիրեցի վաճառականներ չըջտոյտած էին միջնորդները եւ կը մասնակցէին աճուրդին: Միջնորդներէն մէկը նկատած էր գալս: Արեւելքցի, շուկայի մարդու յատուկ՝ հիւրընկալ բացազանչութիւններով, որուն անկեղծութեան որեւէ ատեն չես ուզեր կասկածիլ, բարեւեց հեռուէն եւ, ամբոխին մէջէն ճամբայ բանալով՝ հասաւ մօտս եւ վեր հրախրեց զիս:

Երբ աստիճաններէն կը բարձրանայինք, իմացուց, թէ մեր լաւազոյն խնձորները գիշերով ծախուեր էին արդէն, բարձրազոյն գիներով:

Վարէն, միջնորդին ձայնը կը լսուէր տակաւին: Վերջին յաւելումով ստացուած գինը կը պոռար.

«Հարիւր քսան... հարիւր քսան... քսան ու կէս: Քսանըմէկ... քսանըմէկ... քսանըմէկ... քսանըհինգ... քսանըհինգ... քսանըհինգ... եօթը, քսանեօթը...»

— Շուկան հոյակապ է, այսօր, — ըսաւ խօսակիցս:

— Ե՞րբ կը վերջանայ վաճառքը:

— Այս ընթացքով շատ չի տեսեր: Մէկ-երկու ժամէն: Բայց հաշիւները հազիւ ժամը տասին պատրաստ կ'ըլլան:

Ժամը գեռ վեց էր:

Անօթի էի:

Մտածեցի երթալ քաղաքի կեղրոնը եւ անուշեղէն ուտել:

Արևը ծագած էր:

Օդը սկսեք էր տաքնալ:

Քաղաքը հեազհեաէ կ'արթննար եւ խճողոմը կը շեշտուէր:

Թերթավաճառները հրապարակ իջեր էին եւ բարձրաձայն կը յայտարարէին գլխաւոր լուրերուն վերնագիրները.

«Զինագուլ՝ Լիբանանի մէջ... Զինագուլի մանրամասնութիւնները ամբողջութեամբ...»: «Զինեալ բոլոր երեւոյթները կը վերանան՝ քառասունութ ժամէն...»:

Թէև զիս չխանդալառեց այդ լուրը, — առաջին անգամ չէր, որ այդ ձևի շնորհալից զինագուլներ կը հռչակուէին, — բայց դարձեալ ջերմացնող եւ լաւ տրամադրութիւն մը ստեղծեց մէջս: Ալին, ո՛ւր որ էր, անշուշտ լսած պիտի ըլլար: Թէև փորձառութիւնը սորվեցուցեր էր մեզի լաւատեսութեան աստիճանին չհասցնել մեր տրամադրութիւնները ի լուր այդ ձևի նորութիւններու, բայց կարելի էր թեթեւցած զգալ եւ օրը սկսիլ լաւ ակնկալութիւններով: Ինչու չէ, այդպէս, յանկարծ, կրնար ամէն ինչ վերջ գտնել: Յաճախ կարեւոր գէպքերը կը պատահին մեր չսպասած մէկ պահուն, եւ այդպէս արագ: Մա՛նաւանդ՝ երբ ամբողջ բեմադրութիւնը քմա-

հանոյքներու յղացում մը կը թուէր ըլլալ: Լուրին մանրամասնութիւնները կընային ոչինչ աւելցնել, ընդհակառակն, գուցէ խօսէին տարտամ երաշխիքներու մասին: Աւելի լաւ էր չկարդալ: Աւելի լաւ էր մնալ այդ լաւ տրամադրութեան մէջ եւ մշակել աղուոր տինկալութիւններ: Հաճելի էր լսել թերթալուծառները, որոնք մեծ համոզումով եւ ինքնավստահութեամբ կը յայտարարէին զինադուլի աւետիսը՝ կռիւի բոլոր գիծերուն վրայ...

Երբ շուկայ վերադարձայ՝ խնձորը ծախուեր էր: Գրասենեակ էլայ: Հաշուադասը ըսաւ, թէ կանուխէն ծախուեր էին խնձորները, եւ թէ՛ հաշիւները շուտով կընար յանձնել, եթէ ընչ մը սպասէի:

Սեղանին վրայ դանուող ամսաթերթերէն մէկը առի եւ նստեցայ բաղկաթոռի մը մէջ: Լիբանանեան ամսաթերթի մը հին թիւերէն մէկն էր, քաղաքացիական պատերազմէն աւաջ հրատարակուած: Գողթը կիսով պատուած էր եւ կարգ մը էջերուն լուսանցքները օդատարործուած էին՝ հաշիւներ ընելու համար: Ժամանակավրէպ վարձած լուրեր, ծանուցումներ՝ հաստատութիւններու, որոնք հրդեհուած էին դէպքերու ընթացքին, դերասաններու եւ դերասանուհիներու նկարներ, անոնց կցուած կարճ տեղեկութիւններով:

Եզրագոյնէն դերասանուհի մը պիտի ժամանէր Պէյրութ, Ժպալէնի մը պատրաստութեան համար:

Երգիչ մը ամուսնալուծուած էր:

Բեմադրիչ մը կը ծրագրէր վերամուսնանալ երգչուհիի մը հետ:

Նշանաւոր դերասան մը ամբաստանուած էր թմրեցուցիչի մաքանենդութեամբ:

Հանրաժանօթ կատակերգակ մը անձնասպանութիւն փորձած էր:

Կար նաեւ Ալինի դիմանկարը, որուն կցուած էր նաեւ տեղեկութիւն մը, թէ՛ ան մերժած էր ստանձնել սիրային դեր մը, Հասան էլ Իմամի բեմադրելիք «Այնտեղ ամօրեւ չէր տեղար» ժապաւէնին մէջ:

Ալին նախապէս երկրորդական դեր մը ստանձնած էր տեղական ժապաւէնի մը մէջ, որ սակայն ծախող արտադրութիւն մը եղած էր: Ան կ'ըսէր, թէ շարժապատկերը իր առկարէզը չէր, եւ թէ՛ դերասանութիւնը իր սրտին չէր խօսեր, ու ա'լ ընտելեր պիտի չստանձնէր շարժապատկերի մէջ:

Քարտուղարը ամբողջացուցած էր հաշիւները: Յանձնեց զուամարը եւ համապատասխան հաշուեցուցակները:

Օղբ անտանելիօրէն տաքցած էր: Սայլերուն երթեւեկն ու բեռնակիրներուն աղաղակները հեղձուցիչ դարձուցած էին շուկան:

\*\*

— Լողաւազան երթանք, — կը պնդէր Հրանդ:

Ալին լուռ էր տակաւին, թանգարանի մուտքին՝ սիւներէն մէկուն կոթնած:

- Աչքերդ կարմրեր են: Անքո՞ւն ես:
- Կանուխ արթնցայ, շուկան ալ անտանելի էր: Յոգնած կը զգամ... դիտե՞ս, նկարդ աեսայ ամսաթերթի մը մէջ:
- Ո՞ր ամսաթերթին:
- Հին թիւ մըն էր. եթէ չեմ սխալիր՝ «Ալ Շապաֆէ»:
- Գիտեմ, այդ խենթութիւնը ըրեր էին: Շուկան լա՞ւ էր:
- Լուրերը լսեցի՞ր:
- Զինադուլի՞, այո:
- Ես ալ. առտուն թերթավաճառները այրպէս կը սրտային:
- Ինքնաշարժին մէջն էինք, առտուան հաղորդումին գլխաւոր լուրն էր: Թէեւ պէտք չէ շատ լուրջի առնել հարցը, բայց վրստահ եմ, որ այսօր լաւ տրամադրութեան մէջ եմ:
- Ի վերջոյ յաւիտեան պիտի չկոուին:
- Ահաւոր է տաքը: Եթէ լան մը պիտի որոշենք, որոշենք:
- Մենք չկրցանք համաձայնիլ, — ըսաւ Արփիկ:
- Ոչ, համաձայնեցանք լողատղան երթալ: Դժոխքի պէս տաք է, միայն լողալով կը փրկուինք:
- Լուրջ նախադասութիւններով սկսեր ես արտայայտուիլ, Հրանդ: Դարձեալ Արփիկի հետ կռուելու ախորժակ ունի՞ս:
- Այո, չէի՞նք համաձայնած, որ բերդ պիտի երթանք: Լողալովնը ուրիշ՞ բուռաւ, չեմ հասկնար: Նախ՝ բերդ պիտի երթանք, ուզես կամ ոչ, — ըսաւ Արփիկ վճռական շեշտով մը, ինքնաշարժին դուռը բանալով:
- Արփիկ աշխատցուց շարժակը: Հրանդ տեղի տուաւ:
- Ային տակաւին կռթնած էր սիւնին:
- Դուն ո՞ւր կը նախընտրես երթալ:
- Որեւէ տեղ: Այնքան ատեն, որ միասին ենք, — ըսի:

— Երբ գինադուլի լուրը լսեցի, փափաքեցայ, որ դուն ալ լսած ըլլաս: Ինծի այնպէս թուեցաւ, թէ ո՛ւր որ ալ ըլլայիր այդ պահուն՝ պէտք է լսած ըլլայիր այդ մասին:

— Ձեմ ուզեր չափադանցել, բայց եթէ պաշտօնիս վրայ դրոշնէի, ահա թէ ինչպէս կը ծանուցանէինք լուրը: Նախ կ'ընդհատէինք յայտադիրը՝ «Լուրերու յաւելում» բաժինով... Յետոյ՝ ժպտեցաւ եւ փորձեց առնել այն դիրքը, զոր սովոր էր առնելու փոքր պաստառին վրայ, այդ ձեւի հաղորդումներու ատեն:

— Յետոյ՝ այսպէս կ'ըսէի, — շարունակեց, — «Միրելի հայրենակիցներ, տեղեկատուութեան ընդհանուր գրասենեակէն ստացանք հետեւեալ հաղորդագրութիւնը...»: Եղա՞ւ, — հարցուց ժրպտուն աչքերով:

— Հոյակապ: Շարունակէ:

Կոկորդը մաքրելէն ետք, դարձեալ ստացաւ հանդիսաւոր երեւոյթ:

— «Շնորհիւ պատասխանատուներու ազնիւ եւ անխոնջ ջանքերուն, երկարատեւ համդիպումներէ ետք, բանակցող կողմերը, որոնք կը ներկայացնեն խնդրոյ առարկայ բոլոր հոսանքները, նկատի առ-

նելով հայրենի գերագոյն շահերը եւ քաղաքացիներուն քարոքութիւնն ու անոնց կեանքի ապահովութիւնը, կ'որոշեն.—

«ա — Զինագուլ՝ կռուի բոլոր առանցքներուն վրայ :

«բ — Առեւանգեալներու անյապաղ փոխանակում :

«գ — Զինեալ տարրերն ու երեսոյթները վերցնել փողոցներէն, առաւելագոյնը՝ քառասունութ ժամէն...» :

Կիսակործան խոյակի մը վրայ, կողքիս նստած՝ Ալին անխառն խանդավառութեամբ կ'արտասանէր հազորդուժը, զոր գոց սորվեր էր, յաճախակի կրկնութիւններէ ետք, եւ որ անգամ մը եւս, այդ առտու հազորդուեր էր աշխարհի դրեթէ բոլոր ձայնասփիւռներու կայաններէն :

Ալին պայծառացած էր : Անոր ներկայութիւնը կողքիս ջերմ էր եւ հանդստացնող : Առանձին էինք այդ հին ու խորխոր բերդի կատարին, մինարէթի շուքին ձգուած կիսակործան խոյակին վրայ նստած :

Պարիսպէն վար, բերդին բարձրութիւնը կը շարունակուէր խրամատին խորութեամբ եւ կը գոյացնէր անդունդ մը՝ մեր եւ խրամատէն անդին տարածուող քաղաքին միջեւ, որ արեւելեան պարզութիւնը պահած իր փողոցներու ցանցով կ'ազմկէր, կը մխար՝ զառիւժներն որոն վրայ հեւացող մարդատար կառքերուն արտադրած ծուխով : Խրամատին սալածածկ կողերէն, ուրկէ ժամանակը խլեր էր իր տուրքը եւ նետեր էր անդունդն ի վար, հիմա, այդ բացուածքներէն խոտեր բուսեր էին, ազազուն ու վտիտ, գարնան անձրեւներուն հետ, հաղիւ կրցեր էին բարձրանալ քիչ մը, ապա՝ այրեր էին արեւէն ու կը գողային օդի ջնջին շարժումներէն :

Այդ պահուն, պատերազմական երկու դերձայնային օդանաւեր օդը ճեղքելով սլացան դէպի հարաւ : Անոնց պատճառած դղրդալի ազմուկը մենք զգացինք մեր մարմինի բոլոր զգայարանքներով, մեր ոսկորներուն թրթռացումով :

Ալինի վարանոտ թեւին հպումը զգացի : Անդրադարձայ, թէ ան կռթնած էր ուսիս :

— Վախցայ, — ըսաւ, — պարզապէս անապահով զգացի քիչ մը :

— Սաւառնակներո՞ւն պատճառով :

— Այո : Եւ անդունդին :

— «Անդունդը ունի իր թովչանքը», — ըսի :

— Պահ մը մտածեմ... պէտք է յիշեմ, թէ ով ըսած էր ատիկա... : Նարդունի՞ :

— Կը սիրե՞ս դրականութիւնը : Կարծեմ՝ Նարդունի. դուն թերեւս աւելի լաւ գիտես :

— Պէտք է Արփիկին հարցնենք :

— Կարեւորը այն է, թէ ունի : Կը խորհիմ, օրինակ, գերիններուն մասին, որոնք անձնասպան կ'ըլլային, անդունդն ի վար : Կը յանձնուէին անոր թովչանքին : Փրկութիւն... :

— Գերինները կը կառուցանէին բերդերը, չէ՞ :

— Պատմարանները այդպէս կ'ըսեն: Կ'ուզէի՞ր ապրիլ բերդե-  
րու դարաշրջանին:

— Թերեւս... Նոյնն է, յամենայնդէպս:

Ալինի վիզէն ոսկիէ փոքրիկ խաչ մը կը ճօճէր, կը ճօճէ՞ր, կը  
ճօճէ՞ր: Մենք լուռ էինք: Ան կը գիտէր ոտքերուն մօտ եղող տաշ-  
ւած քարի բեկոր մը:

— Դեռ կը խորհիմ այս սալածածկ վայրէջքին մասին: Կրնամ  
երեւակայել այն ծով բանակները, որոնք կը լարձակէին այս բերդին  
վրայ, հրամանատարի մը աջ բազուկին մէկ շարժումով: Այդպէս,  
մէ'կ ազդանշանով:

— Ահաւոր է այս անդունդը: Ես կը վախնամ:

— ... Ու այն բանակներուն մասին, որոնք ալիք առ ալիք կը  
փշրուէին այս ամբողջ պատերուն դէմ: Քանինե՞ր փորձած են թե-  
րեւս բարձրանալ այս սալածածկ կողերն ի վեր, քարերը ճանկոտե-  
լով, ծերպերէն առկախ տեղացող նիզակներուն դէմ, մատներն ու  
ծունկերը արինոտած...

— Կեանքին կառչելու համար: Ամուր, ամո՛ւր, ամո՛ւր կառ-  
չելու համար կեանքին:

— Յանուն ինչի՞, բայց... հրամանատարի մը ազդանշանի՞ն  
համար:

— Տեսակ մը ինքնաստեղծում, թերեւս: Հերոսանալու հա-  
մար, հաւանարար:

— Չ'արժեր այսպէս երկար խօսիլ անցած բաներուն մասին:  
Յդը տաք է շատ: Պաղպաղակ կ'ուզե՞ս:

— Կարծեմ բերդի մուտքին՝ զովացուցիչ վաճառող տղայ մը  
կար: Զովացուցիչ կը խմենք:

— Այդ տգեղ տղա՞ն:

— Ի՞նչ, տգե՞ղ:

— Ինձի այդպէս թուեցաւ:

— Կը յիշեմ. թուխ էր, եւ անխնամ մաղերով...

— Արփիկենք ո՞ւր մնացին:

— Ո՛ւր որ են, մէջտեղ կու դան: Եթէ մուտքին սպասենք, մեզ  
դիւրաւ կը գտնեն: Ո՞վ գիտէ ո՞ր զնտանը իջած են մեր հնախոյզնե-  
րը հիմա...

— Վեր նայեցա՞ր բնաւ. նայէ: Այդ բացուած քները ի՞նչ բանի  
կը ծառայէին արդեօք:

— Կարծեմ յարձակող թշնամիին վրայ հալած իւղ կամ եռա-  
ցած ջուր թափելու համար:

— Ահաւոր է: Վերջին ճիզ մը՝ բերդը չյանձնելու: Անտփիկ  
բերդ մը եղած ըլլալու է ասիկա:

Զովացուցիչ ծախող տղան մուտքին էր տակաւին: Երբ նկա-  
տեց, թէ իր ուղղութեամբ կը քալենք, դադարեցուց զովացուցիչներու  
վաճառանիչները պոռալ: Եւ երբ աւելի վստահ եղաւ, որ իր մօտ  
կ'երթայինք, լայն ու անճոռնի ժպիտ մը դժագրեց դէմքին:

— Մեզի երկու զովացուցիչ կու տա՞ս:

Տղան պահ մը ալլալէցաւ եւ թուքը կուլ տուաւ :

— Դուն գերասանուհի մըն ես, չէ՞, օրիորդ... այո՞, վստահ եմ, ես քեզ տեսած եմ ժապաւէնի մը մէջ :

Ալին ժպտեցաւ եւ գլուխով հաստատական նշան ըրաւ :

Տղան գիւտ մը ըրած ըլլալու խոր գոհունակութեամբ եւ, դերասանուհիի մը գովացուցիչ ծախած ըլլալու առանձնաշնորհեալ բաւարարութեամբ՝ գրեթէ մտացաւ մեր պատուէրը : Ապա անդրադառնալով՝

— Այո, վստահ, դիտուս եւ աչքիս վրայ... ահաւասիկ ամենալաւ տեսակէն, ամենազովը, օրիորդ, ձեզի եւ ձեր նշանածին համար, օրիորդ...

Ալին ժպտեցաւ եւ գլուխը օրօրեց գոհունակ :

Յետոյ՝ մենք նստեցանք, մուտքին ձգուած սիւնի կոտորակի մը վրայ, եւ լուսն՝ խմբինք գովացուցիչները : Այդ լուսնիներ անհրաժեշտ ըլլար կարծես այդ պահուն, աւելի ճիշդը՝ անխուսափելի : Ինծի այնպէս կը թուէր, թէ արդէն աւարտած էին բոլոր այն նիւթերը, որոնց մասին կրնայինք խօսիլ եւ հիմա, որեւէ խօսակցութիւն կրնար ըլլալ բոլորովին անտեղի : Մեր ծանօթութիւնը եղած էր այնքան պատահական : Եւ, վերջապէս, կան պահեր, երբ մարդ կ'անդրադառնայ, թէ իր ներաշխարհը ունի սահմաններ, որոնք անձեռնմխելի կը մնան, եւ եթէ երբեք կան մարդոց միջեւ յարաբերութիւններ, ապա ատենք կը մնան այդ գիծերէն դուրս :

Զովացուցիչ ծախող տղան մեր կողմը կը նայէր... կը ժպտէր :

— Ի՞նչ բանի մասին կը մտածես այդքան լուրջ...

— Մեր մասին, — ըսաւ Ալին :

Արեւը զօրաւոր էր տակաւին, երբ թողուցինք քաղաքը : Ճառագայթները ուղղակի մեր աչքերուն կը հանդիպէին : Մենք կ'ընթանայինք դէպի արեւմուտք : Արեւն ալ : Դէպի նուազանգիստ տանող այդ ճամբան ոտդուած էր լոյսի ցանցով մը, որուն մէջ կաշկանդուած՝ մեր ինքնաշարժը կը սուրբար հեղասահ եւ արագ :

— Ձեզաւ, չեղաւ... : Թէեւ անշնորհք եմ պարի մէջ, բայց գոնէ այս շուրջպարը դիտեմ, թէ ինչպէս պէտք է պարել... : Աջ ստրդ նախ, եւ ուժգին, այո...

— Լաւ, վերջապէս : Ձախը՝ առաջ դէպի ետ, աջ, յետոյ՝ աջ...

— Ճիշդ է, չափերը ճիշդ են, բայց միայն չափերով պար չ'ըլլար... : Առանձին պարեմ... : Եթէ առանձին շուրջպար ըլլար... :

— Լաւ, պայմանաւ, որ այդ գնչուին ըսես, թէ այդ թմբուկին ձայնը այդպէս զօրաւոր չհանէ :

— Ձեզի բան մը բռնե՞մ... : Այս խոսնիճաղանճին մէջ համ պիտի չտաննէք : Ձգենք գնչուները թող ուզածնին ընեն , յետոյ՝ ապարէզը մեզի կը մնայ մինչեւ լոյս :

— Ոչ , հիմա պիտի պարենք , եւ թմբուկով , գնչուներուն թրմբուկով . կը տեսնէ՞ք , թէ շուրջպարը ինչպէս կը պարեն , — պնդեց Հրանդ , իր բարկութեան լուրջ հանգամանք տալով այս անգամ :

Յետոյ՝ աւելի ինքնավստահ ու դոհունակ .

— Ես կը ճանչնամ պարողները... : Գիտեմ , թէ սլ կրնայ պարել : Ձեր ախորժակը բնաւ կարեւոր չէ հիմա :

Գիտէի , թէ Հրանդ մտաւորապէս էր այդ պահուն . խոսնիճաղանճն ու ամբոխը արդեւ չէին կրնար բլլալ անոր : Ան հիանալիօրէն կըրնար վարել դաւառական շուրջպարերը : Վաւերական պարագլուխն էր , եւ երբ իր առաջնորդած շուրջպարը թափը տունէր , պարողներու ոտքերուն կշռոյթով , մեր բոլոր լեռները կարծէք պարի լիջած կ'ըլլային : Հոգը կը բարախէր անոր ներբաններուն տակ : Հրանդ յաջողեցաւ հետացնել ամբոխը եւ պատրաստեց բոց շրջանակ մը , որուն կեղրոնը կանգնեցուց թմբկահար գնչուն : Հմայքը անդիմադրելի էր : Հրուէրը կ'եռար բոլոր պար սիրողներու երակներուն մէջ :

Արփիկ կը դիտէր Հրանդի շարժումները՝ աննպատակ ու կրաւորական նայուածքով : Այլինի դէմքին վրայ կը շողար խոնդաւառութիւն մը , որ միանգամայն վարակիչ էր ու տաք :

— Իջիր , հաճիս , իջիր պարենք , — ըսաւ՝ թեւէս քաշելով :

— Գիտե՞ս պարը :

— Ո՛չ : Բայց հոգ չէ , կը հետեւիմ :

— Հիմա չէ : Հիմա «հետեւողները» չեն կրնար դոհացնել Հրանդի ախորժակն ու խանդավառութիւնը , ինչպէս նաեւ՝ խոտապահանջութիւնը :

— Կարծածիդ չափ ալ անշնորհք չեմ : Վստահ եմ , որ կրնամ : Քանի մը անգամ դառնալէ ետք , կը սորվիմ : Հաճիս : Հը՞հ :

Գիտէի , թէ Հրանդ , նոյնիսկ իր բարկութեան դադաթնակէտին՝ անհունօրէն հանդուրժող կրնար ըլլալ :

— Վստահ եղիր , անշնորհք չեմ ըլլար , — պնդեց Ալին :

Կիսամութին մէջ դիտեցի անոր դէմքը : Մեր մատները ինքնաբերաբար հիւսուեցան : Հրանդին սպասող հայեացքը սեւեռած էր մեր վրայ : Թմբուկը կ'որոտար թուխ գնչուին կողմնի վար : Չուսնան կը նուազէր մեր դաւառական եղանակներէն շուրջպար մը : Պարողները մէկ առ մէկ դատուեցան ամբոխէն ու միացան շրջալիս : Նաւասարդեան տօնը կը հասուննար օդակ առ օդակ :

Հրանդ յաղթական ու բաւարարուած կը դդար այլեւս : Հոգ չէ թէ շուրջպարը իր ուզածին պէս չէր ընթանար : Գէթ ինք կրնար պարել իր փափաքածին պէս : Թմբուկը կ'որոտար եւ սօսիի տերեւները կը զողային : «Դուք հոյակապ էք , տղաք» , կը կրկնէր Հրանդ , ճակատին ու վիզին քրտինքը սրբելով : «Մենք այս գիշեր կը գինովնանք , բոլորս ալ կը գինովնանք» , կ'ըսէր :

Պարը ընդմիջուեցաւ անստովր լուսեամբ մը :

— Պարողները կը փնտռեն , — ըսաւ ամբոխէն մէկը :

— Հոս են պարողները , — ըսաւ Հրանդ , — ո՞վ ինչ կ'ուզէ պարողներէն :

— Ոստիկաններն են :

— Պարե՞լ կ'ուզեն :

— Ո՛չ, կ'ուզեն, որ պար ու աղմուկ չըլլայ տոնակատարութեան ընթացքին :

Մինչ այդ, երկու ոստիկաններ, թաղականի մը ընկերակցութեամբ, մօտեցան մեզի: Հրանդ կանխեց զանոնք եւ, միասին, քաշուեցան ամբոխէն, աւելի խաղաղ վայրի մը մէջ խօսակցելու համար :

— Լուրջ բան մը ըլլալու է, — բաւ Արփիկ :

— Միշտ նոյն պատմութիւնը, մեր խանդավառութիւնները բնաւ իրենց լրումին չեն հասնիր, — լրջացաւ Ալին :

— Ձեմ կարծեք, որ մտահոգուելիք բան մը ըլլայ — ըսի, — միշտ այսպէս է: Աստուածածնայ տօնին աղիտալի դէպքեր կը գուգաղիպին :

— Ի՞նչ պատահած է, — մտահոգուած հարցուց Ալին :

— Լիրանան պատերազմի մէջ է, — ըսի :

— Ի՞նչ կապ ունի :

— Այստեղի սովորութիւնն է :

— Բայց զինադուլ էր, չէ՞: Կոխները վերսկսա՞ն :

— Ձեմ կարծեք: Ի՞նչ էին վերջին լուրերը: Ալինը գիտնալու է :

— Քաղաքը հանդարտ է, բայց Պեքաայի մէջ կոխները կը շարունակուին :

— Նայինք, թէ Հրանդ ինչպէս պիտի համաձայնի, — բաւ Արփիկ: Ապա, — չն՞ս կարծեք, որ իրաւունք ունին, — աւելցուց :

— Ձեմ գիտեք: Թերեւս, — ըսի :

— Իսկապէս պէտք չէ, որ շատ իրարանցում ստեղծուի: Վերջապէս...: Ձեմ գիտեք: Ի՞նչ կը խորհիս :

— Նայինք: Թող Հրանդը դայ, յետոյ կը մտածենք :

— Ձէ՞ որ զինադուլ հռչակեցին: Պէտք է ուրախանանք: Պէտք է խնձոյք սարքենք զինադուլին համար :

— Բան մը կ'ընենք :

Քիչ ետք, Հրանդ եկաւ, անտրամադիր եւ նախկին խանդավառութիւնը կորսնցուցած :

— Գնչուները պէտք է երթան եղեր: Ինչ որ պիտի ընենք, առանց թմբուկի եւ զուռնայի պիտի ընենք: Ուրեմն լսե՛լ կայ: Այսօր կը զինովնանք :

Ոստիկանները քալեցին գնչուներուն ուղղութեամբ՝ վերջնական որոշումը անոնց հաղորդելու համար :

— Կօշիկէս կրունկը չկայ: Պարելու ատեն փրթած է, — զանգաստեցաւ Ալին :

— Քիչ մըն ալ բոպիկ կեցիր, — ըսաւ Հրանդ, — արդէն հիմա ձեզ բոլորդ առ առուին մէջ պիտի թաթխեմ: Օրիորդ Արփիկ, դուն մեզմէ աւելի լաւ գիտես մեր պատմութիւնը, այս տօնին ի՞նչ կ'ընէին, գիտե՞ս: Ես ալ շատ բան սորված եմ, բայց՝ անիմաստ օրինակ. ataxia, aphasia, nausea, hallucination...: Բան մը հասկցա՞ր: Ծիծաղելի՞ են: Այո, phenylketonuria, radiotherapy, — բոլորովին անօգուտ. carcinoma:

Ահա թէ ինչ սորված եմ՝ hallucination, hallucination...:



Ահա թէ ինչու արեհեր մարդու մը, որ հայրս է, երեսուն տարինեքու քրտինքը, բոլոր արեհեր հայրերուն երեսուն տարուան քրտինքը, երիտասարդ օրերու բոլոր կորովը եւ չափահասի բոլոր դուժը, մաս առ մաս կը տանինք... : Եւ որպէսզի զիտանք, թէ ուր, անմիջապէս ըսեմ՝ cashierին : Չհասկնաք թերեւ : Cashier կ'ըսեն : Կազանդ պապա չէ բնու, ոչ ալ Նաւասարդ : Cashier, տօնական ոչ մէկ հմայք, այլ՝ պարզապէս հոն, այն ակադեմական վեհաշուք հաստատութեան փառահեղ մուտքին նստած, որ, կ'երդնում, ձեզ բնաւ, բնաւ ներս չաւնիք, մինչեւ վերջին դահեկանը չվճարես : Ահա թէ ինչու... ataxia, aphasia, hemeanopsia, եւ դեռ շատ մը սյուղիտի հանդիսաւոր ծուռ ու մուռ բառեր...

— Հրանդ, դուն զինո՞վ ես :

— Եթէ զինով ըլլայի, բեմական այս շնորհներս կրնայի՞ ցոյց տալ ձեզի : Քիչ ետք կը զինովնամ, յամենայնդէպս :

— Այլ բոլորը շատ լաւ, բայց ես բոլորիկ ինչպէ՞ս պարեմ :

Ուխտատեղիին մէջ կրակը պատրաստեր էին արդէն : Առուին ջուրը արիւնոտ էր : Ուրեմն՝ մատաղները մորթում էին, եւ հերիսան՝ մեծ կաթսաներու մէջ կ'եփուէր արդէն :

Գիշերը յառաջացած էր : Ամբոխը հեռոցնեմէ կը ցրուէր : Ուխտատեղիին մէջ, կրակին հակելու համար, դիւզի սղոցմէն խուճր մը կը մնար, սօսիի ծեր ու հսկայ ծառին սակ խնճոյք սարքելով :

Գնչուները կը պատրաստուէին մեկնելու : Անոնք կը հաւաքէին իրենց պիտոյքները, կարպեաները, թմբուկն ու դուռնան :

— Հէ՛յ, դնչունե՛ր, ներողամիտ եղէք... մենք անպատկառ եղանք... դուք հոյակապ մարդիկ էք... վստահ եղէք, որ ձեզ կը սիրենք, — բացաղանչեց Հրանդ, իրենց առաքելութիւնը կիսատ ձգած, Արեւելքի թխապէմ գուսաններուն :

Յետոյ գնաց անոնց մօտ, բոլորին ձեռածիր տուաւ : Պարուհին տասը ռսկինոց մը տուաւ ու համբուրեց զայն :

— Չմեկնած՝ մեզի համար պորտախաղ թող պարէ, — ձայնեց Արփիկ :

— Գնչուհին անարամազիր է : Չի պարեր : Քայց անոր կողերը՝ տաք ու հասուն : Գնչուհին արտուր է հիմա, ձեզի մնաք բարի կը մաղթէ...

Աստուածածնայ տօնին նախորդող, կախարդական բոլոր գիշերներուն մեր զաւառի սղաքը կը հաւաքուին հերիսայի կրակին շուրջ, ու երբ օդի բաժակներուն մէջ խմիչքը կը խառնուի աղբիւրի սառն ջուրով, ու բացօթեայ կրակին վրայ մատաղներուն լեարդներն ու սիրտերը կը խորովին, մեր երկրին հեթանոս աստուածները կու գան հակումի : Կու գան փազանդ առ փազանդ, իրենց կիրքերով ու փառքերով : Մեհենական կիրք մը կ'ողողէ ամէն ինչ՝ եւ խմիչքի բաժակները, է՛ւ կրակը, է՛ւ թուխ գնչուհին գալարուող կողերը : Նաւասարդեան այդ հեթանոս գիշերներուն ամէն ինչ կ'ըլլայ անխարդախ : Լրտեսող աչքերն ու բամբասող լեզուները կը վրիպին նրկատելէ այլապէս գայթակղութիւն համարուող պատահարները : Տըղաքը կ'օղակեն հեղաճկուն աղջիկներուն լանջերը եւ, հակառակ օտարի կ'ընկերանայ տօնին, հոս կամ հոն, կասարուող ողբերգու-

թիւն մը յիշեցնելով, — խղճի պարտք սեպելով խանդավառութիւն-  
ները գտնել: Հակառակ այդ բոլորին, երզն ու պարը կը սասանան ամ-  
բարտաւան համեմատութիւններ: Բայց երբեմն, իրօք, անոնք կ'ըլ-  
բան դերակազմու եւ տօնակատարութիւնը տեղի կու տայ, նոյնիսկ մա-  
տաղները չեն մօրթուիր այդ տարի:

Ալին ուրախ էր, թէ եւ ծալապատիկ նստելու կը դժուարանար:  
— Կը նախընտրեմ անդադար պարել, որպէսզի նստելու այս  
տաժանելի պարտաւորութիւնը չունենամ, — գանգատեցաւ:

— Թող Հրանդ չլսէ, հիմա դարձեալ պարելու ախորժակը կը  
բացուի, — ըսի:

— Բնաւ գինովցած եւ սակէ առաջ, — հարցուց Ալին:

— Ո՛չ, չեմ յիշեր:

— Ես բնաւ գինովնալու առիթը չեմ ունեցած: Ի՞նչ կը խոր-  
հիս այս գիշերուան մասին:

— Այդպիսի բան մը պէտք չէ ընես:

— Կը կարծե՞ս, թէ շատ պէշ բան մըն է:

— Եթէ ո՛չ քեզի համար, դոնէ շուրջիններուդ համար:

— Ուրեմն բոլորս ալ գինովնաւք: Հաւաքական գինովութիւն  
մը: Պէտք է որ մարդ, անգամ մը գէթ, ճանչնայ գինովութիւնը:  
Ինքզինք աւելի լաւ կը ճանչնայ թերեւս:

— Եւան ալ այդպէս մտածեց եւ գիտես հետեւանքը, — ըսի  
կտաակել փորձելով:

— Հրանդը արդէն գինովութեան նշաններ ցոյց կու տայ:

— Ան չի գինովնար: Օղի չէիք սիրեր, չէ՞:

— Լաւ, չլիճինք այս մասին: Թող ամէն ինչ ընթանայ բնա-  
կանօրէն: Այսօր գինադուլի տօնակատարութիւնը պիտի ընենք: Ա-  
հաւաստիկ առաջին բաժակս կը բարձրացնեմ խաղաղութեան կենացը,  
անկէ ետք, եթէ գինովնամ իսկ՝ հոգս չէ: Ուրեմն, աղաք, վերցու-  
ցէք ձեր բաժակները, քսանեօթներօրդ գինադուլին կենացը, — ըսաւ  
Ալին դրեթէ խեղդուող ձայնով մը: Յուզումէն անոր շրթները կը  
գողային

— Բսանեօթներօրդ գինադուլին կենացը...

Յետոյ, ինչպէս միշտ, մեր ամենատրախ կամ ամենատխուր  
պահերուն, սիրոյ եւ սպասումի գիշերներուն, այդ գիշեր եւս մեր  
բաժակները բարձրացուցինք եւ բարձր, շատ բարձր ձայնով երգե-  
ցինք մեր սովորական երգերը: Ֆեատայի մարտիկի մը նահատակու-  
թիւնը պատմող կամ արշաւանք մը նկարագրող այդ երգերը վե-  
րածուած էին սիրոյ, ուրախութեան, տխրութեան եւ տօնի երգե-  
րու:

Հերիտան կը հասուննար կաթսաներուն մէջ: Խնձոյքը իր թա-  
փը ստացած էր արդէն: Գիշերը կը յառաջանար:

Ալին նստած էր կողքիս: Եւ, ըսաւ երեւոյթին, վճռական էր իր  
որոշումին մէջ:

— Խնդրանք մը ունիմ, — ըսաւ:

— Բաժա՞կդ նորոգեմ:

— Ոչ, բաւարարուած եմ: Կ'ուզեմ, որ զիս գրկես... աւելի՛  
սեղմ, աւելի՛ զօրաւոր:

Զգացի Ալինի տաք ու այրող դէմքին հոլումը իմ դէմքիս:

— Վաղը ես կը մեկնիմ: Ո՞վ գիտէ, դու ցէ ա՛լ չենք տեսներ  
 գիրար:

Ալին քրտնած էր եւ ձայնը կը դողար խօսած ատեն:

— Քսանեօթներորդ գինադուլի՞ն պատճառով:

— Չեմ գիտեր:

— Կռիւները չեն դադրած սահայն:

— Ճիշդ այդ պատճառով...: Ուրիշ խնդրանք մըն ալ ունիմ...

Մեր ձայները յոգնած էին: Կրակին բոցերը մեղմացեր էին,  
 իրենց կարգին: Օդը տաք էր:

— Քեզ պանդոկ տանի՞մ...

— Այո... հաճիս... ես գինով եմ, գինով եմ, գինով... դիս  
 պանդոկ տար...

Ալին կու լար խօսած ատեն: Անոր արցունքները կը թրջէին  
 դէմքը եւ շրթունքները:

— Պէտք չէ որ շատ խմէիր:

— Ինչ որ եղաւ՝ եղաւ: Ինչո՞ւ գիս կը հետապնդես քու առար-  
 կութիւններովդ: Մարդ պէտք է, գէթ մէկ անգամ, գինովնայ, եւ  
 լաւ է, որ... լաւ է, որ աստիկա ըլլայ քսանեօթներորդ գինադուլին  
 առիթով, Աստուածածնայ տօնին գիշերը...

Զովացուցիչի եւ անուշեղէնի շրջուն վաճառորդները իրենց  
 առժամեայ կրպակները կը կառուցանէին ծառերուն տակ, տօնակա-  
 տարութեան պատրաստ ըլլալու համար:

Հորիզոնը կարմրած էր արդէն: Սկառուտական խոմբեր, արե-  
 նոյններ, երգելով կը ժամանէին տօնակատարութեան վայրը, որ-  
 պէսզի մուտքին կամարներ կապեն եւ բարի դալուստի պաստառներ  
 պարզեն ճամբու երկայնքին:

Բացուող արշալոյսին հետ կը սկսէր տօնակատարութիւնը,  
 կամաց-կամաց: Բաղմութիւնը կ'աւելնար մեր շուրջ: Բոլորս ալ յոգ-  
 նած էինք եւ անքուն: Վերադարձանք պանդոկ:

ԱՐՄ. ԱՐԿԼԵԱՆ

(Շար. 4)

Շ Ա Հ Է Ք Է Օ Ր Օ Ղ Լ Ե Ա Ն

**Կ Ե Ա Ն Ք Ի Ա Ֆ Ի Շ Ը**

Պատին վրայ,  
 Սինեմայի ափիշին տեղ,  
 Ուր շատ յանախ մերկ աղջիկներ կը գծուէին,  
 (Էմմանիւէլ, Լաւր Թանկօ ին Փարիզ, Լաւլի Պէյպիզ,  
 Էլ, Մէյա ին Սուխարն, տեղ Նայթ Փորթըր, Սֆանաւ...)  
 Այս առաւօտ,  
 Կեանքի ափիշ մը փակած էր.  
 Եւ, առաջին անգամն էր որ իզականին փոխարէն,  
 Մերկ աքու մը կ'ուզէր նայուածք մը գողնալ  
 Անցորդ կիներէն, աղջիկներէն, ծերունիէն,  
 Պատանիէն եւ մինչեւ իսկ  
 Կարն տարատով, սանտալ հագնող լակոտներէն...

Բայց այս անգամ, կիրքի փոխան,  
 Մարդիկ իրենց նայուածքները սրեցին,  
 Ու մէկական պարոյկ շալկած՝ ուղեղներուն,  
 Սէֆսի փիլմին սեռը նշոյելու մտադրութեամբ  
 Մօտեցան ցուցատախտակին,  
 Ուր գրգռիչ ոչ մէկ ձեւ կար  
 Նայնիսկ պարմանուհիին համար...

Մօրուսաւոր, երկարամազ ծերունի մը  
 Ուժի կեցած, ձեռքերը վեր  
 Եւ գլուխը բռունցքներուն ուղղահայեաց,  
 Բերանը բաց, ու աչքերը՝ արիւնտ,  
 Ձեռքերով բռնած պաստառին կը նայէր.  
 Մինչ, կարծես ստիպողաբար,  
 Մարդիկ իրենց նայուածքները  
 Պաստառին վրայ կեդրոնացուցին,  
 Ու մտովին, իւրաքանչիւրը կարդաց.

— «Ա՛լ գգուեցայ,  
Ա՛լ ձանձրացայ կաշկանդումէ .

Ս  
Զ  
Ա  
Տ  
Ո  
Ի  
Թ  
Ի՛  
Ի  
Ն ԿԸ ՊԱՀԱՆՋԵՄ»...

Պատանին ու սանտալ հագնող լակուոր  
Միծաղեցան ու գացին  
Քանկ-Ֆուի պաստառներուն վրայ չարչարելու  
Իրենց աչքերը, միտքը, երազը :  
Իսկ աղջիկները շուրջիններուն հարցուցին,  
Թէ ո՞ր սինեման, ո՞ր օրէն սկսեալ  
Եւ մինչեւ ե՞րբ պիտի «խաղայ» այս ֆիլմը .  
Բայց ո՛չ ոք կրցաւ պատասխան մը տալ,  
Նիւթը, գլխաւոր դերակատարը,  
Ու մինչեւ իսկ բեմադրիչը՝ անծանօթ  
Ֆիլմին մասին...

Իսկ ծերունին, չափահասը  
Երբ տուն գացին,  
Առանձին թէ հայելիին դէմ,  
Պահ մը կեցան,  
Մտածեցին,  
Թէ ո՛վ էր արդեօք այդ ափիշը փակցնողը,  
Եւ կամ ո՞վ էր այդ մերկ մարդը, բռունցքը՝ վեր...

Ո՞վ կը փորձէր, կը յանդգնէր  
Ազատութիւն պահանջել  
Կեանք - ժամանակ - Շրջանակէն,  
Նայնիսկ երբ մանկութենէն սկսեալ,  
Ոչ մէկ պահ ազատ եղած էր,

Եւ գիտէ՛ր, թէ ոչ մէկ վայրկեան  
 Ազատ ըլլալ պիտի կրնար,  
 Այնքան ատեն, որ ինք  
 Ազատութիւն կու տար,  
 Երկրորդի մը,  
 Միջամտելու իր կեանքին, մտածումին, էութեան,  
 Կէտադրելու իր խօսքը, գրացումը, յուզումը,  
 Կաշկանդելու իր ե՛տը, գաշութիւնը, իր կա՛մքը...

Առանձին թէ հայելիին դէմ,  
 Պահ մը կեցած մտածեցին  
 Զափահասը, ծերունին,  
 Եւ գիտակցեցան, թէ իրենցմէ  
 Ռեւէ մէկը կրնար ըլլալ  
 Այդ ափիշին վրայինը,  
 Կամ նկարել, եւ կամ գոնէ փակցնել  
 Սինեմայի ափիշին տեղը անցած նո՛ր ափիշը.  
 Յետոյ գացին, յօրանջելով,  
 Տան դուռն ու պատուհանները փակեցին  
 Ու առանձին ֆնացան,  
 Յաջորդ օրուան կաշկանդումէն ետք  
 Կեանքի ափիշին,  
 Ազատատենչ ափիշին,  
 Իրենց էութեան խորհրդանիշ արձագանգին  
 Պահ մը նորէն հանդիպելու երազով...

ՇԱՀԷ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ

Բ. Ք Է Պ Ա Պ Ճ Ե Ա Ն

Ժ Պ Ի Տ Ը

Կատարեալ լուսթիւնը կը խանգարուէր Լեւոնի ինքնահոս դրիչին թուղթին վրայ հանած ձայնով եւ երբեմն փողոցէն անցնող կառքերուն ազմուկէն: Հազուադէպ էր, որ կառքեր անցնէին Ֆրանքֆուրթի կեղրոնէն բաւական հեռու գլտնրուոյ այս քովնտի փողոցէն: Հիմա, որ գետինը ձիւնով ծածկուած էր, նուազ լսելի էր կառքերուն ազմուկը: Եթէ պատահէր, որ դրիչը ձեռքէն ձղէր եւ կառք չանցնէր, լուսթիւնը կը հասնէր իր գազաթնակէտին: Երկար չէին տեւեր այս պահերը, որովհետեւ Լեւոն կա՛մ կը շարունակէր դրել եւ կամ կարգ-կանոնի կը բերէր սեղանին վրայ զիջուած դիրքերը, դրութիւնները: Ամուրիի մը համար պէտք եղածէն աւելի կանոնաւոր էր, զինք տարին անգամ մը այցելող ընտանեկան պարագաներն ալ կը հաստատէին այդ:

Լեւոն կը շարունակէր գրել: Յանկարծ ոտքի ելաւ եւ անցաւ հիւրանոց: Եւ իր մուտքով սենեակը լեցուեցաւ պայծառերես անձերով — չափահասներով, գեոատիներով եւ նոյնիսկ մատղաշ երեխաներով, — որոնք շուտով կը ձերբազատուէին իրենց բազմահոգ արտաքինէն: Կին մը իր զրացիին կը դանդաւտէր, թէ խոհանոցի յախճասալերը, դանոնք փայլեցնելու համար տարուած ջանքերուն դիմադրելով՝ կը մնային փայլատ: Նոյն կինը կը կերպարանափոխուէր յանձնարարուած նոր «մօր»ը դործածելով, յախճասալերը հիմա կը փայլէին հայելիներու նման եւ կնոջ երջանիկ երեսը կը ցոլար անոնց մէջ: Մայր մը կը տատաղէր իր ամուսինին եւ գուլակներուն յղկաթուղթի նման սրբիչներ տալուն համար: Եւ թերեւս այդ տառապանքէն մօրը խիղճը տեսանելի կը դառնար: Խիղճը կը յանդիմանէր մայրը եւ կը բա-

ցատէր, թէ «Լեւոն»ի բացակայութիւնը շարշարած էր ամուսինին եւ գուլակներուն նուրբ մօրթը: Աւելի ետքը, նոյն մայրը վերստին կ'երեւէր՝ շրջապատած իր սիրելիներով, որոնք զինք մայրերուն լուազոյնը կ'անուանէին, քանի որ ան «Լեւոն» դործածելով՝ վերջ տրած էր իրենց դողդոթային: Խիղճը վերստին տեսանելի կը դառնար, այս անգամ դրուատելու համար իր ուշիմ աշակերտուհին: Ուրիշ անգամ զոյգերու լուրջ վէճերը խաղոյն կը լուծուէին՝ «Շաքոյս»ի դիւրամարս եւ բուրումնալից սուրճը խմելով: Անտանիկ կեսուրը կը վերածուէր աւելի քան սիրելի հարազատ մօր մը, յիշեցնելով «Արիւն»ի տաւելութիւնները, սրտնց զըլխատը յատկութիւնը ձերմակը աւելի ձերմակ բնէն է: Խախտադաշտի մէջ խմբուած համակիրներ աւելի «Քա-օ-ա-մ»ով դոհացում կը դտնէին, քան թէ իրենց խումբին նշանակած կոլերով: Տըրտումներնս գպրոցականներ «Սփրայթ» խմելով կ'աշխուժանային, բարեխաւելով իրենց զպրոցական յաջողութիւնները: Տղամարդիկ կատարեալ ազատութիւնը «Մարլպոր» ծխախոտի եւ կատարեալ երջանկաթիւնը «Պլէք Կնա տեքք»ի գպրծիքներուն շնորհիւ կը դտնէին: Իսկ կիները «Վեյլա Փորմ»ով կը գեղեցկանային ակնբերելօրէն:

Այցելուներու այս գունդ խմբակը, հակառակ իր անհուն խնդութեան եւ քոտոյնի վիճակին — ոչ ոք նկատի կ'առնէր նախորդին եւ յաջորդին ըսածները — կը յարդէր երկու տարրական կանոն. նախ կը շարժէր մօտ կէս մեթր լայնք ունեցող տարածութեան մը վրայ, եւ յետոյ՝ երեք մեթրէն աւելի չէր մօտենար Լեւոնին, որ ըջօրէն խորհել սկսած էր, թէ ներկայացուած իրերէն

ո՞ր մէկը վերջ կրնար տալ իր հողերուն:

Հիւրերը յանկարծ անհետացան: Իրենց յաջորդող տիկիներ տրամադիր չէր հրաշարործ իրերու մտտին խօսելու: Լուրջ եւ միայն իւրաքանչիւր լուրէն ետք մեքենարար կրկնուող, չափուած-ձեւած ժպիտով ան կը հագորդէր նորութիւնները: Խուճէյի Պարսկաստան վերադարձած էր, ներկայ կառավարութեան վիճակը տւելի քան անորոշ էր — զսպուած ժպիտ, — Իսրայէլի եւ Եղիստոսի բանակցութիւնները առկաթ կը մընային — չղպուած մեծ ժպիտ, — Ձիւնասանը կ'ուզէր Ամերիկային մօտենալ — սովորական ժպիտ, — Հոլմաուսթին Գերմանիոյ մէջ ցուցադրուած ժողովրդային լայն խաւերու մէջ մեծ արձագանգ ստեղծած էր եւ, բարմահար հանդիսատեսներ պատկերասփիւռի կայաններուն հետամայնելով՝ իրենց ընդլըզումը արտայայտած էին: Շատ մը տարեց' անձեր պնդած էին, որ իրենց անձանօթ մնացած էր հալածանքին բուն ծաւալը: Երիտասարդներ բսած էին, որ իրենք այս դէպքերուն մասին ոչինչ կարդացած են: Իրեթէ անժպիտ տրուած էր լուրը: Լեւոն, ի սարբերութիւն խօսնակին՝ բոլոր լուրերը անժպիտ մտիկ բրած էր: Կը հետաքրքրուէր լուրերուն բնօթին եւ խօսնակին ժպիտին միջեւ դոյութիւն ունեցող թաքուն յարաբերութիւնով, որոնք կը կառավարէին ժպիտին չափը: Իրեն համար բոլորովին անհակընալի էր վերջին լուրին անժպիտ հագորդումը: Եթէ Լեւոնին մնար, բարձրածայն պէտք է խնդար խօսնակը: Լուր չէին ունեցած եղածներէն, չէին զիտեր բուն ծաւալը: Աչք չունէին, որ տեսնէին, տկանը չունէին, որ լսէին չըջող գրայքները, քիթ չունէին, որ առնէին հոտերը: Բան մը չէին կարդացած դէպքերուն մասին: Գիրք չկա՞ր, որ կարդային: Ասկէ աւելի ծիծաղելի բան լրուած էր: Խնդալ ուզեց, բայց չկրցաւ, այնպէս՝ ինչպէս որ խօսնակին պատահած էր: Գրեթէ չհետեւեցաւ միւս լուրերուն, չնշմարեց խօսնակին ժպիտը: Միայն իր անհետանալէն առաջ իմացաւ, որ վաղը օգը սաստիկ պող պիտի ընէր:

Յաջորդող տիկիներ յատարարեց, որ սիրոյ պատմութեան մը վկայ պիտի ըլլայ: Ո՛չ վկայութեան եւ ոչ ալ սիրոյ պատմութեան տրամադրութիւն ունէր: Աննակը ընելիք ունէր:

— Եկուր պարենք, Մայտա, — ըսաւ Լեւոն: Մայտան ալ պարել կ'ուզէր: Իրենց ճամբայ բոնալով՝ մօտեցան պարահարթակին:

Իրեկունները սովորաբար սեղանին զուտիւր կ'անցնէր աշխատելու համար: Միշտ չէր ունենար բուն թափով աշխատելու ետանդ: Ամենաչնչին պատահարը ստիթ կը հանդիսանար, որ պատուհանէն դուրս նայի: Կը հետաքրքրուէր անցորդներով, մանաւանդ կիներով: Շատ փորձած էր աչքերով կապ հաստատել բոլոր անոնց հետ, որոնց արտաքինը իր հետաքրքրութիւնը գրաւած էր: Աչքերուն կապը առաջին յուսադրիչ կայն էր, առանց աչքերու կապին ոչինչ կ'ըլլար: Յարկ ո՛չ այդ առաջին կապը եւ ոչ ալ անոր յաջորդող որեւէ ուրիշ կապ կրցած էր հաստատել:

— Եկուր պարենք, Մայտա, — ըսաւ Լեւոն: Իրենց ճամբայ բանալով՝ հասան պարահարթակ: Լեւի-լեցուն էր պարահարթակը: Հրձակելով՝ կրցան տեղ մը գտնել եւ սկսան անշարժ պար մը պարել:

Մէկը իրեն կը նայէր: Թողուց իր աշխատանքը եւ պատուհանէն դուրս նայեցաւ: Կրցաւ խարտեաչ մաղեր նշմարել: Անհամբերութեամբ սպասեց յաջորդ օրուան: Նոյն հայեացքը եւ նոյն խարտեաչ մաղերը իրեն կը նայէին: Սըխալի կարելի չէր: Իրեն կը նայէին տնոնք: Աչքերը սեւեռեց իրեն նայող աչքերուն եւ երբ անոնք եւ անոնց կապուած մարմինը հետացան, ոտքի ելաւ եւ պատուհանին ետեւէն հետապնդեց անոր անհետացումը: Օրեր շարունակ եկաւ խարտեաչ մաղերով աղջիկը եւ Լեւոն օրէ օր աւելի մտերմացաւ անոր արտաքինով եւ ժպիտով:

— Եկուր պարենք, Մայտա, — ըսաւ Լեւոն: Պարել կարելի չէր անուանել իրենց բրածը: Հրձակելով՝ հազիւ կրցան տեղ մը գտնել եւ պարեցին ան-



չարժ պար մը: Իրարու դաշխի անկարելի էր. այսպէս, Լեւոն ծանօթացաւ այն բուրբն հետ, որոնց մասին աչքերը անբաւարար տեղեկութիւններ կրնային տալ: Սրահը արտակարգօրէն տաք ըլլալ թուեցաւ Լեւոնին: Փախուտ տալ կարելի չէր տաքէն: Միայն երեսը խոյս կրնար տալ եւ ըրաւ, շուրջիններուն նայելով, վիշտ դարձնելով: Բոլոր զոյգերը իրարու կը նայէին, Լեւոն համակերպեցաւ: Սկսաւ խօսակցութիւն մը, որ միակողմանի էր: Անդադար հարցումներ կ'ուզէր Մայրային, իսկ ան իր երեսը կը քննէր լուս:

Քանի որ էր, որ խարտեաչ մագերոյ աղջիկը պատուհանին առջեւն չէր անցած, հակառակ անոր, որ Լեւոն որոշ ժամերուն սեղանին առջեւը նստած՝ լոկ աղջկան սպասած էր: Արդեօք սխալ մը դարձած էր: Չէ՞ր պատասխանած իր ժպիտին, զոր տեսնել կը կարծէր: Լեւոնին հայեացքները անհանդիստ բրած էին զինք: Կասկածամտութեան պէտք չկար: Կրնար արձակուրդի պայտք ըլլալ: Արձակուրդ, ա՛յ չըջանին, որ ա՛յ կազանդ էր, ա՛յ Մնունդ եւ ոչ ալ որեւէ ուրիշ տարեդարձ մը, որու ընթացքին մարդիկ սովոր ըլլային ճամբորդել: Գուրսը սպասելը աւելի յարմար էր: Հեռուէն կրնար տեսնել իր գալը: Պարտեկ ելաւ: Այդ եղանակին նոյնիսկ մուշտոտ չէր բուսներ: Բայց եւ այնպէս՝ ծունկի եկաւ եւ աշխատեցաւ: Անցորդները իրեն շեշտակի կը նայէին: Մէկը բուսական մը հեռանայէ ետք, կեցաւ եւ իրեն նայեցաւ, զլուխը ճօճեց:

— Եկուր, Մայրա, — ըսաւ Լեւոն, — նստինք:

Բազմութիւնը ճեղքելով՝ իրենց սեղանը դացին: Լեւոն ըմպելիներ առնելու դնաց: Խմիչքները առաջին օրուան պէս սուղ էին, բան մը, որուն կրնար հանդուրժել, եթէ ինքն իրեն յիշեցնէր, թէ հասոյթը ակումբին պիտի մնար: Առաջին անգամ չէր կրցած զսպել ինքզինք եւ հայհոյած էր: Ոմանք իրեն նայած էին: Նայողներուն մէջն էր նաեւ Մայրան, որ իր ուշադրութիւնը դրսւած էր:

Շնորհիւ իր յամառութեան՝ Լեւոն յաջողեցաւ ճշգիւ խարտեաչ մագերոյ աղջկան բնակարանը: Անցորդները շուտով վարժուած էին իր ներկայութեան եւ չէին հետաքրքրուեր պարտէզը աշխատող երիտասարդով: Նոյն փողոցը կը բնակէին: Լեւոնին երազները աւելի կենդանի բնոյթ առին: Քանի մը տուն անդին կ'ապրէր անձ մը, որ իրմով կը հետաքրքրուէր: Ինչո՞ւ կարելի չըլլար իրեն հետ մտերմանալ: Բայց նախքան այդ ընելը, պէտք է հասկնար, թէ ինչո՞ւ իր պատուհանին առջեւն չէր անցներ ան եւ կը նախընտրէր գալ միւս փողոցէն: Թերեւս աւելի կարճ էր այդ ճամբան: Բայց քանի որ այնպէս էր, ինչո՞ւ որոշ չըջան մը երկարած էր իր ճամբան՝ իր առջեւն անցնելու համար: Անպայման կը հետաքրքրուէր: Չէր երազած, իրականութիւն էր ենթադրութիւնը:

«Սիրելի Մայրա», գրելով սկսաւ նամակը: Ակումբի հանդիպումէն քանի մը օր ետքն էր: Անխմատ կրնար թուիլ իր նամակը, մա'նաւանդ՝ որ նոյն քաղաքը կը բնակէին: Կրնար հեռաձայնով խօսիլ անոր հետ: Հեռաձայնելը աւելի անմիջական էր եւ Լեւոն կը քաշուէր անմիջականութենէ: Եթէ միտքը բան մը չիցնա՞ր բսելիք, եթէ լոկ՞ր յանկարծ, եթէ ձայնը չեղէ՞ր: Եւ չէր ալ ելած. անգամ մը թիւր դարձուցած եւ անմիջապէս հեռախօսը դոցած էր: Նամակը աւելի չէզոք էր եւ ապահով: Մարդ համարձակ կրնար ըլլալ՝ ինչպէս որ էր «Սիրելի Մայրա»ն: Սիրելի Մայրան «Սիրելի Մայրա» կարգալով կրնար շտա մը քաներ սպասել Լեւոնէն, բայց բովանդակութիւնը պիտի սանձէր զինք, քանի որ խօսքը միութեանական չօր ու ցամաք խնդիրներու եւ առօրեայ երկրորդական դէպքերու կը վերաբերէր: Նամակը կը վերջանար «Յարգանք»:

Դիմացի կողմէն կը քաշէր խարտեաչ մագերոյ աղջիկը: Պէտք է, որ զիմացը անցնէր: Խօսէր հետը, դոնէ բարեւէր: Պիտի չգործանա՞ր ան՝ Լեւոնին իր կողմը անցնելը տեսնելով: Թո՛ղ զարմանար: Լայն էր փողոցը, վերջանալ չէր գիտեր: Կը քաշէր դէպի աղջկան կողմը: Կա-

պոյտ էր երկինքը եւ օդը պաղ: Չեռքե-  
րը կը սառէին: Եթէ այդպէս էր, ինչո՞ւ  
ամառուան հազուստ հագած էր աղջիկը:  
Նշմարեց, որ ինքն ալ թեթեւ հագուած  
էր: Երկինքը որքա՞ն կապոյտ էր: Կըր-  
նար ուրիշ պատճառով իր կողմը անցած  
ըլլալ, հացադործին երթալու համար:  
Բայց հացադործի խանութին առջեւէն  
անցած էր: Տարօրինակ կապոյտ դոյն  
մըն էր աղջկան հագուստը: Մաղիկնե՞ր,  
թէ պարզապէս ճերմակ կէտեր էին վը-  
րայինները: Ինչո՞ւ գալկահար էր աղջը-  
կան երեսը, ա՞ն ալ կը մսէր: Արդեօք  
խկապէ՞ս պաղ էր օդը: Խոնարհեցուց  
յլուխը քովէն անցած ատեն: Չարկերա-  
կը կը տրոփէր: Լեւոն ոչինչ կրցաւ ը-  
սել:

— Լեւոն, քիչ մը եւս կեր, — ըսաւ  
Մայտա: Իբրեւ սովորական հիւր չէր  
զդար ինքզինք, Մայտա ղինք ուղղակի  
խոհանոց կանչած էր: Սեղանը հոն էր  
շտկուած, ճաշի պատրաստութիւնները  
դեռ կը տեսնուէին: Մայտա կանգնած՝  
սալաթով կը զբաղէր: Իր դործին մասին  
խօսեցաւ: Տարօրինակ սովորութիւններ  
ունէր դործին տէրը: Իւրաքանչիւր ան-  
գամ, որ աշխատանքի սենեակէն դուրս  
ելլէր, զիտնալ կ'ուզէր, թէ ուր կ'եր-  
թայ: Մայտան այդ օրը խոշոր խաւա-  
քարտի կտորի մը վրայ «Ամուսինիս քովն  
եմ» գրած էր: Կ'արժէր տեսնել մարդուն  
բարկութիւնը: «Բայց դուք ամուսնացած  
չէք, օրիորդ», գոտացած էր: Բարձրա-  
ձայն խնդացին: Շատ քիչ կ'ուտէր Մայ-  
տան: Վերի մասը շատ դիրուկ էր: Լե-  
ւոն հիացումով նայեցաւ այդ վերի մա-  
սին եւ սրտանց մաղթեց, որ ան երբեք  
չտուժէ նիհարնալու իր վճռական որո-  
շումէն: Ճաշերը համով էին, ախորժա-  
կով կ'ուտէր Լեւոն, նախ՝ լիցքերը, ո-  
րոնք Մայտան պատրաստած էր, «որ-  
պէսզի օտարութեան մէջ տոհմիկ ճաշ մը  
ուտես», յետոյ՝ հաւը եւ եղինձը: «Այր-  
տին տանող ճամբան ստամոքսէն կ'անց-  
նի», ըսաւ Մայտա ժպիտով մը: Երկու  
դորձարաններու փոխյարարերութիւնը  
ուշիմօրէն մտիկ ընել տուաւ Մայտային  
պատմածները: Ինչպէս որ դիտէր, ա-  
մուրի էր ան, պատուաւոր անցեալ մը

ունէր: Կային շատ մը ընկերուհիներ եւ  
քանի մը ընկերներ: Այս վերջիններուն  
հետ յարարերութիւնները եղած էին եղ-  
բայրական: Եթէ Լեւոն տեսնէր Մայտա-  
յի այդ ընկերներէն մէկուն կողմէ համ-  
բուրուիլը, նշանակութիւն պէտք չէ  
տար, եղբայրական համբոյրներ էին ա-  
նոնք: Մտերիմ պարերը կարծեցեալ մը-  
տերիմ պարեր էին: Օրերը շատ անգամ  
առանձին եւ կամ ընկերուհիներուն հետ  
միտայն կ'անցընէր: Գիշերնե՞րը, գիշեր-  
նե՞րը: Անվաստ զբաղումներ ունէր: Գի-  
շերնե՞րը, գիշերնե՞րը: Իրեն ի՞նչ զի-  
շերները: Ամուսնանալու առիթ չէր ե-  
ղած: Մէկ-երկու թեկնածուներ եղած  
էին, բայց աւելի անոնք փոփաքած էին,  
քան Մայտան: Յարմարը չէր գտած:  
Ժպիտ մը՝ Լեւոնին: Աւելի արագ կը ծա-  
մէր ան: Արդեօք սիրտին տանող ճամ-  
բան իսկապէս ստամոքսէ՞ն կ'անցնէր:

Քանի՞-քանի՞ անգամ անցաւ խալ-  
տեաշ մտղերով աղջկան տան առջեւէն:  
Երեք յարկանի շէնք մըն էր, առջեւը  
պարտէզով: Ո՞ր յարկը կը բնակէր: Ան-  
գամ մը մայրը տեսած էր պարտէզին  
մէջ: Ընդհանրապէս գեանայարկի վար-  
ձտիւյները պարտէզով կը զբաղէին, բայց  
ոչ միշտ: Օր մը տեսաւ, թէ մայրը դը-  
բան առջեւը կ'աւլէր: Ենթադրութիւնը  
վերածուեցաւ ստուգութեան, որովհե-  
տեւ միայն գեանայարկի վարձակալնե-  
րուն պարտականութիւնն էր այդ: Ու-  
րախութիւնը կարճատեւ եղաւ, աղջկան  
մականունը շրջանի ամենահասարակ ա-  
նուններէն մէկն էր, հեռաձայնի տեա-  
րակը որեւէ ձեւով օգտակար չէր կրնար  
ըլլալ իրեն:

— Եկուր, Լեւոն, սուրճ մը խմենք,  
— ըսաւ Մայտա, — մեր դիտցած ձե-  
ւով:

Լեւոն անուշ սուրճ կը սիրէր, Մայ-  
տան ալ նոյնպէս: Բազմոցին վրայ նըս-  
տած՝ խմեցին իրենց սուրճը: Թերեւս  
կարելի էր նիւթը փոխել: Մայտային ա-  
նարատ անցեալը իր կասկածամտութիւ-  
նը արթնցուցած էր: Մայտա ընտանե-  
կան պարտականները կ'ուզէր ծանօթացնել՝  
յուսանկարներու արդովի մը օղնու-  
թեամբ: Ընտանիքին հետ ծանօթանալ

ուղա՞ծ էր : Խնդրա՞ծ էր իրմէ , որ լուսանկարները ցոյց տայ : Կատարեալ հայր մը ո՞նէր , կատարեալ մայր մը : Նոյնպէս , հաւանաբար , կատարեալ երկու եղբայրներ եւ քոյր մը , խորհեցաւ Լեւոն : « Երկու եղբայրներս եւ քոյրս , անոնք ալ կատարեալ անձեր են » , ըսաւ Մայտա : Գոյրը եւ եղբայրները ամուսնացած էին եւ ունէին դուստրներ , որոնց լուսանկարները կարելի էր դտնել ալպոմին մէջ : Անհատնում սէր ունէր Մայտա մանուկներուն հանդէս : Կը գովարանէր իւրաքանչիւրին դեղեցիկութիւնը : Լիցքերը ծանր իւզով պատրաստուած պէտք է ըլլային : Լեւոն դժուարամարտութեան բընորոշ ցաւեր զգաց ստամոքսին մէջ : Կաշանդին Մայտային ծնողքը պիտի դային , Լեւոն առիթ պիտի ունենար դանոնք տեսնելու : Ստամոքսին ցաւերը անտանելի դարձան : Հրաժեշտ առին իրարմէ : Լեւոն Մայտային այտերը անտեսելով՝ ճակատը համբուրեց եւ բաժնուեցաւ :

Խարտեաչ մագերով աղջիկը պարտէզին խոտերը կը կտրէր : Մերթ կենալով՝ շուրջը կը դիտէր , կը խօսէր մօրը հետ , որ պատուհանին կոթնած՝ դուրս կը նայէր : Անցորդներուն մեծամասնութիւնը նոյն թաղը կը բնակէր , տարեկիցներ , զօրս կը բարեւէր եւ երկու խօսք կ'ընէր : Սոս կտրելը միօրինակ աշխատանք էր : Եթէ ընկերը՝ Վինֆրիտ , այսօր աշխատանքի գացած չըլլար , կրնային իր սենեակը նորագոյն ձայնապնակները մտիկ ցնել : Ան տունը մնացած էր՝ աշխատանքէն խոյս տալով , հիւանդ էր , այդպէս բսած էր : Ժամանցի մը պէտք ունէր , հիմա , որ մայրը խոհանոց կ'երթար դիշերուն պատրաստութիւնները տեսնելու : Անցորդ ալ չկար , բացի թուի երեսով երիտասարդէն : Օտարազգի էր , զոր քանի մը անգամ տեսած էր : Տարօրինակ ազգայ մըն է , խորհեցաւ աղջիկը , երբ ծանկի Եկած՝ մոյախոտ կը լինտոէր : Քանի մը օր տոաջ իրարու հանդիպած էին եւ ան սպասած էր , որ տղան բարեւէ զինք : Ո՛չ , ձայնը իմանալու համար պարզապէս , առողանութիւնը յստակ լսելու համար : Վինֆրիտ , որուն օտարացիին մասին պատմած էր , ըսած էր , որ թաւ

ձայն մը պէտք է ունենայ ան : Գրաւի բնուած էին : Տղան մտածկոտ կը շարունակէր քալել : Գլուխը բարձրացուց , դանդաղեցաւ : Չըլլայ որ ետ դառնար : Յայտնի պիտի չըլլար , թէ դրաւը ով շահած է : Չգարձաւ , շարունակեց քալել իր ուղղութեամբ : Բարեւ ըսաւ : Շահած էր . բարձր էր ձայնը : Ուրախութենէն խնդաց եւ բարեւը փոխադարձեց :

Իր բարեւը անպատասխան չէր մնացած : Ի՛նչ ուրախութիւն կը շողար աղջրկան Ժպիտին մէջ : Չղջաց չօղտագործած առիթներուն համար : Յետոյ , անցեալը նշանակութիւն չունէր , կարեւորը ասպողան էր , հիմա , որ առաջին քայլը նետած էր : Տունէն հեռու տեղ մը դիւրար տեսնելու միջոցը պէտք է դտնէր : Ան ընդհանրապէս քալելով կ'երթար եւ կտօքով դայն հետապնդել ու ներս հրաւիրելը յարմարագոյնը պիտի ըլլար : Բայց ի՞նչ ձեւով ներս պիտի հրաւիրէր , ներս կու գա՞ս , պիտի հարցնէր : Շատ մտերիմ չէր եղակին , ներս հրամեցէք ըսէ՞ր : Օտարները կը դործածէին յոգնակին , իսկ անոնք օտարներ չէին այլեւս : Բացարձակապէս ոչ , այդ Ժպիտէն ետք ոչ , բնաւ : Ո՛ւր պիտի տանէր աղջիկը : Պիտի հարցնէր , եղակիով , մտերմիկ ձայնով : Այս բոլորը ընելէ առաջ , ինքզինք պիտի ներկայացնէր եւ աղջկան անունը պիտի հարցնէր : Մէկ հարուածով պիտի բուժէր բոլոր խնդիրները , պայմանաւ , որ ան պատրաստակամութիւն ցոյց տար : Անհետեւ փոխեր : Ժպիտը խօսուն էր :

Գնումներ ընելու համար երբեմն քաղաք կ'երթար : Ընդհանրապէս հանրախանութիւններ կը նախընտրէր : Ամէն ինչ , դրեթէ ամէն ինչ կարելի էր դտնել հոն՝ առանց ժամանակի կորուստի : Միայն յատուկ կարգ մը բաներ , այդ կարգին նաեւ գիրքեր , փոքր խանութներէ կ'առնէր : Որոշ խանութի մը յաճախորդը չէր եղած : Ըստ բախտի , կը մտնէր մօտակայ որեւէ դուռնէ ներս : Վերջերս , շնորհիւ խարտեաչ մագերով աղջկան , դրափաճատտան մը տեսական յաճախորդը եղած էր : Գիրք կարդալը հետաքրքրական էր , աւելի հետաքրքրական էր գիրք ալըսպրելը : Ուղիղ անոր գտնուած անկիւ

նը կ'երթար, անտեսելով միևս պաշտօնակիրները, կարծես անոնք զոյութիւն չունենային: Անվերջ ապսպրանքներ ունէր եւ խրթին խնդիրներ, դիրքեր, որոնց կամ հեղինակը, կամ վերնագիրը եւ կամ հրատարակիչը լաւ չէր դիտեր: Պէտք կ'ըլլար բազմաթիւ ցուցակներ բանալ, պրպտել: Փնտուտուքը երկարելու համար միջոցներ հնարած էր: Կ'ընտրէր հասարակ անուն ունեցող հեղինակները, որոնց ցուցակներուն մէջ շատ յաճախ կարելի էր հանդիպիլ: Քանի որ ճշգրիտ վերնագիրը չէր դիտեր, կը ստիպուէին այդ անունը կրող բոլոր հեղինակներուն գիրքերը աչքէ անցրնել: Այս անվերջ որոնումներուն ընթացքին, ան աղջկան աչքերուն, այտերուն, յօնքերուն, կուրծքերուն, սրունքներուն, ամէն, ամէն ինչին մէջ կը փնտռէր իր անձին հանդէպ հետաքրքրութեան նշաններ: Երբեմն իր երեսին վրայ կը տեսնէր անմեկնելի արտայայտութիւն մը, մասնաւորապէս եթէ դպչելու աստիճան մօտենար անոր: Ապսպրած գիրքերը յապաղումով կու դային: Հեռաձայնով կը հարցնէր պատճառը, սպասելով բացայայտ արտայայտութեան մը, որ կապ պիտի ունենար ապսպրանքէն հեռու խնդիրի մը հետ: «Հոս չէ այսօր», ըսաւ այր մարդու ձայն մը, երբ օր մը ուզեց խօսիլ աղջկան հետ:

— Եկուր, Լեւոն, հետս եղիր այսօր, հիւրեր ունիմ, կը ծանօթանաս:

— Եկուր, Լեւոն, օգնէ՛ ինձի, տունը ընելիքներ ունիմ:

— Կու դա՞ս, Լեւոն, կ'օգնե՞ս ինձի:

— Ինչո՞ւ չես դար, Լեւոն, չե՞ս օգներ:

— Ժամանակդ կը ներէ, Լեւոն, չե՞ս ուզեր օգնել:

— Ինչ կ'ըլլայ, եկուր օգնէ, Լեւոն:

— Շատ լուռ ես, Լեւոն:

— Ինչո՞ւ չես պատասխաներ, Լեւոն:

— Եկուր պարենք, Մայտա, — ը-

սաւ Լեւոն: Մայտան ալ պարել կ'ուզէր: Պարեցին, նստեցան: Իրարու տյցելեցին: Մայտան իրեն ճաշեր եփեց: Լեւոն Մայտային ճակատը համբուրեց: Մայտա Լեւոնին կապուեցաւ, Լեւոն Մայտայէն հեռացաւ:

Չորս օր շարունակ հեռաձայնով փորձեց կապ հաստատել աղջկան հետ: «Հոս չէ», ըսաւ նոյն ձայնը: Հինգերորդ օրը չդիմացաւ, խանութ գնաց: Ի՛՛՛՛՛պի ետեւի կողմը, աղջկան սովորաբար դռները ամբողջ քալեց: Անդորր խանութին մէջ միակ ազմուկ հանողը Լեւոնն էր: Ծոծրակին վրայ գրաց հետապնդող հայկացիներ: Կարեւորութիւն չտուաւ, շարունակեց քալել: Նոր գիրքերուն ցանկը զբայանն էր, երկար ցանկ մը պատրաստած էր, որպէսզի բացակայութեան պահասը գոցուի: Հոն էր աղջկիւր, իր սովորական տեղը: Իսկապէ՞ս պոռաց, թէ իրեն այդպէս թուեցաւ: Բարեւ, ինչպէ՞ս էր: «Բարեւ», պատասխանեց աղջկիւր՝ ձեռքը երկարելով: Պիտի սեղմէր ձեռքը այս անգամ: Ժպտալով ձեռքը ափին մէջ առաւ եւ, առնելով՝ ամուսնական ոսկէ մատանիի մը շողանքէն շրայացաւ: «Կը շնորհակարարեմ», մըմնջաց: Ապսպրանքի ցանկը տունը մտայած էր: Աճադարանքով դուրս ելաւ:

Առանձնութիւն: Մտերմութիւն: Կապեր՝ առանց մտերմութեան: Մտերմութիւն՝ առանց կապի: Անկախութիւն: Չկաշկանդող կապեր: Անտրտում ինքնաբաւութիւն: Անցան վէրքերը: Բոժանումներ՝ առանց վրդովմունքի: Ոչնչութիւն: Բացարձակ մեկուսացում: Անկապ կապեր, դիժեր, անիմաստ դիժեր, անհաղորդ գիժեր:

Լեւոն արթնացաւ: Յայտագիրը վերջացած էր: Պատաստը անհաղորդ դորշ տարածութիւն մըն էր: Ոտքի ելաւ եւ գործիքը դոցեց:

— Վաղը նորէն պիտի սառիմ, — ըսաւ, — վաղը նորէն պիտի սառիմ:

Կը դողար:

# Իմ ապական շարժում



«Բագին»ի այս տարուան Մարտի համարին լուրերու բաժինին մէջ, քանի մը առողջ ներկայացուցած էինք Նոնա Պալաքեանի «Քննադատական հանդիպումներ» հատորը, որ արժանապէս դնահատուկաւ ամերիկեան մեծանուն թերթերուն կողմէ:

Մտորել կը ներկայացնենք Ռեիլերմ Սարոյեանի նուիրած Պալաքեանի ուսումնասիրութեան ամբողջութիւնը:

Յանձնարարելի դրութիւն մը, որ Ռեիլերմ Սարոյեանի աշխարհը տեսանելի դարձնելու արժանիքին մէջէն, կը բացայայտէ նաև դրակոն երկէ մը ներս թափանցելու Պալաքեանի խրատաբան սէրը:

## ՈՒՒԼԵՐՍ ՍԱՐՈՅԵԱՆԻ ԱԾԽԱՐՅԸ

Ի՞նչ կարելի է ըսել Ռեիլերմ Սարոյեանի մասին, երբ անձնապէս չենք կրնար լուսադրոյնը ըսել: Հարկ կա՞յ վերլուծելու ծրարման մը: Հա՞րկ է բացատրել Սեղանը: Իրապէս կ'աւելնա՞յ մեր հրճուանքը Մոցարթի կամ Շոփէնի հանդէպ, եթէ բացատրուի, թէ ինչպէ՞ս իրադարձած են անոնք իբրևս գործերը: Սարոյեան ունի իրապատուկ կերպ մը յայտնելու իր քննադատներուն, նոյնիսկ անոնց քննադատութեանէն առաջ: Ահա թէ ինչու զարմանալիօրէն ընկճուաւոր քառասնամեայ գործունէութենէ մը ետք, Սարոյեան մնացած է իրապէս անխոցելի գրական սլաւամարաններու կամ քննադատներու կողմէ, եւ թէ՛ ինչո՞ւ մինչև այսօր չկայ գառական հրատարակութիւն մը իր գործերուն:

Այդ իրողութիւնը ինքնին իմ յաւակ-

նութիւնս կը հանդիսանայ, ա՛յն յաւակնութիւնը, որ կը յանդգնիմ հետախուզել Սարոյեան երեւոյթը եւ համախմբել բազմերանգ թելերը իր կատարած գործերուն՝ նոր կերպով մը յայտնագործելու համար զինք ընթերցողներուն:

Բազմաթիւ անձերու նման, անկասկած, կարգացած եմ Սարոյեանը եւ դիտած իր թատերախաղերէն կտորներ, տարիներ ամբողջ: (Կը յիշեմ, թէ ստորագրած եմ յօդուած մը վարժարանիս սարբերաթերթին մէջ, «Սարոյեան կը պատուիրէ «Ձեր կեանքի ժամանակը» խորագրով): Մինչևէ այսօր դուք կրնաք գտնել իր գործը բազմաթիւ հրատարակութիւններու կնիքներով. «Լէյտիգ հոմ ֆրընըլ»ի մէջ, «Նիւ Եորք Թայմզ»ի («Օփի, Իտի», կամ «Սանտյ Պուֆ Բիվիու»), «Հարփըրգ»ի, «Աթլէթթիք»ի, «Նիւ Եորքըր»ի

եւ նոյնիսկ «Թիվի կայս»ի մէջ: Վերջերս, Շերթոյի թատրոնը արտագրեց իր մէկ նոր թատերախաղը, «Մարդկային ցեղին վերածննդեան տօնակատարութիւնը Արթի Զապալայի մեկուսի Պրոտուէյ քատրոնին մէջ», եւ 1975ի աշնան, ձոն Հաուզմէնի տեղադրած ընկերութիւնը ներկայացուց 1939ի «Փուլիցրը» մրցանակի արժանոցացած իր հին դասական թատերախաղը՝ «Չեր կեանքի ժամանակը»: Առանց մոռնալու 1975ի ձմեռան, հայոց թեմին կողմէ նոր թատերախաղի մը բեմագրութիւնը՝ «Հայերը» խորագիրով, զոր մեղմէ սմանք բախար ունեցան դիտելու իր կարճատեւ ներկայացման ընթացքին: Հրատարակուեցաւ ինքնակենսագրական գործ մը՝ «Ձաւակները կու գան եւ կ'երթան», բայց մայրերը կը մնան յաւիտեան»:

Կ'ունենանք, կը դիտենք, կը կարդանք Սարոյեանը — Էրեմն հրատարակողը զգացումով, Էրեմն յուսախարութեամբ (ոչ մէկ դրող կրնայ այսքան բեղուն ըլլալ եւ պահել իր գրողի արժանաւորութիւնը), բայց շատ յաճախ ոգեւորութեամբ — որովհետեւ մեր տեսողութեան ան կը բերէ ներգաշնակութիւն եւ ամբողջութիւն — եւ ապա կ'ընթանանք այլ տեղ մը, սոյնարար ներկայ օրերուն աւելի բարդ տեղ մը, լի՝ շփոթով եւ աննորոշ նակութեամբ եւ արդի անլոյծ, կողուն հարցերով: Սարոյեանի մասին մեր ունեցած այս ընդհատ դիտակցութեան մէջ կը փորձենք հղանցիկ ակնարկ մը նետել եւ յիշել կրկնուած սրտը շարժութիւնը, իրենք իրենց մէջ ոչ միշտ այնքան յատկանշական. մենք անկեղծօրէն կը յարինք ցեղային հարցին — աստանդական հօրեղբայրները և զարմիկները, հին-երկրի թափուն հիւմուրը, կեանքի հանդէպ բարոյական անյոյս նախանձախնդրութիւնը: Կամ՝ ապաւինելով մեր ճաշակին եւ ճրգտումին, պիտի համակերպինք — կամ ձերբազատուինք — մարդու բարութեան նկատմամբ իր անշփոթ հաւատքին, կենդանի ըլլալու իր մանկուսակ հրճուանքին եւ ըլլալու անհաղորդ լայն աշխարհի մը եւ իր տուայտանքին հետ: Կան դեռ ուրիշ-

ներ, օրինակ, քննադատները, սրունք պիտի զարմանան, թէ տակաւին այնքան կենսունակութիւն կայ պահուած նախկին տղուն մէջ, մինչ իր կրտսեր ժամանակակիցները՝ Ժ. Տ. Սէլինճըր, Ժաք Քէրլաք, Քարսըն Մքքալլըրզ եւ Թրումըն Քադոթ կամ մեռած են կամ իրապէս զողորած գրելէ:

Միայն այն ատեն, երբ ժամանակ մը անընդմէջ Սարոյեան կը կարդանք, կըրնանք կատարել ճշմարիտ արժեւորումը իր գրական անձնաւորութեան, անկախ այն իւրաքանչեւ լայնքէն, զորս կը սիրենք իր մէջ: Միայն այն ատեն կրնանք բացատրութիւն մը գտնել իր ստեղծագործութեան եւ տոկոսունութեան անսպառ զաղանքին շուրջ՝ քսաներորդ դարու այս մտալիկ զարաշրջանին:

Սարոյեան իր սեփական գործերուն մասին գրած է շարք մը յառաջարաններ եւ ակնարկներ, որոնցմէ շատերը քննադատի մը համար շահեկան ըլլալէ աւելի շփոթ կը պատճառեն: Բայց իր գրածներէն ոչինչ այնքան արտայայտիչ է, որքան այն հաստատումը, զոր ան կը կատարէ իր պալէ-թատերախաղին՝ «Մեծ ամերիկացի խեղճ»ի յառաջարանին մէջ, քաղուած՝ 1941ի «Razzle-Dazzle» իր հատորէն:

«Ոչ ոք ինձմէ գաւտ, — կը դրէ ան, — կը թուի հասկցած ըլլալ, թէ աշխարհը իրական չէ: Թէ իրականութեան մէջ գոյութիւն չունի աշխարհի մեծան բան մը: Անշուշտ թէ գոյութիւն ունի, բայց ըսել կ'ուզեմ գործնական բոլոր նպատակներու համար, երբ կ'ըսեմ գործնական՝ ըսել կ'ուզեմ բանաստեղծական եւ սեփական: Աշխարհը, գոր ինձմէ գաւտ ամէն մարդ կը թուի նոյնացուցած եւ ընդունած ըլլալ իբրեւ Աշխարհ, իրականութեան մէջ յիմարի մը մոգաւանքին մէկ հմարքն է: Ոչ ոք հաւատարար կարենայ ստեղծել որեւէ բան աշխարհի գերիական եւ անհատապի, քան աշխարհը, գոր ամէն մարդ իրական կը կարծէ եւ դժուարաւ կը ջանայ բնակիլ այնտեղ: Արուեստի դերն է, կ'ըսեմ, ստեղծել բնականի աշխարհ մը»:

Մոյն յառաջարանին մէջ ան կը շարունակէ, ըսելով, թէ մինչ խոհականօրէն կ'անդհրատանայ աշխարհը, բայց ամէն ժամ կը պահէ արթուն աչք մը անոր վերայ: «Ներկայ օրերու ռեր, — կը շարունակէ ան, — կը ձգտի փրկել աշխարհը իւրաքանչիւր բանաւեղծութեան մէջ, գոր կը գրեմք...: Բայց հաւանաբար առաւելագոյնը, գոր ռելէ մարդ կրնայ փրկել կամ ունի իրաւունքը փրկելու՝ իր անձն իսկ է: Հարց կու տամ, թէ ո՞ր աշխարհը ո՞ր կը տեսնէք որեւէ աշխարհ»:

Գուք չէք կրնար Երկարօրէն կանդ առնել Սարոյեանի մօտ, Լեթէ չկարենաք ըմբռնել, թէ իր կեանքով եւ անձով ան հաւատարիմ մնացած է ա՛յն համոզումներուն եւ խախններուն, զորս իր գործին մէջ ջատագոյսած է առաջին օրէն: Զէ եղած նկարագիր մը երբեք աւելի սարոյեանական, քան ի՛նք՝ Սարոյեանը այսօր: Ինչ ալ ըլլայ, ան առաւել շեշտօրէն ինքն է, քան եղած է երբեւիցէ: Սո՛ւտարբերութեամբ: Իրբեւ երկտատարդ, ան իր հաւատքը ճանչցող սանձարձակութեան եւ յոխորտանքի ճամբով: Աշխարհ տակաւին պիտի խոնարհեցնէր զինք — ան զիտակից էր այս իրողութեան, որովհետեւ աշխարհ ոչ ոքի խնայած էր, բայց զգայուններէն ամէնէն նուազ զգայունին իսկ: Վաթսուանական թուականներու վերջերուն արտաբերուած իր յանգուզն ահնարկութեան (եթէ կայ հատ մը) յաջողեց զիտակից քմծիծաղ մը, իրր թէ չէր ժխտեր ինչ որ ըսած էր, բայց աչք կը դոցէր իր ըսելու եղանակին, պարզապէս չեշտելու համար իր տեսակէտը, թէ՛ կեանքը իմաստ ունի, թէ՛ արուեստն ու գրականութիւնը յաւազոյն միջոցներն են, զորս ունինք արտայայտելու այդ իմաստը, թէ՛ արժանաւորակել վերապրումը մեղմէ ռեւէ մէկը, այլ մա՛սնաւորաբար արուեստագէտը, կը շահագրգռէ որեւէ բանէ աւելի:

Թող թոյլատրուի հոս, որ վայրկեան մը շեղեմ՝ պատմելու համար թիչ մը Սարոյեանի մասին, այն Սարոյեանի, զոր ես տեսայ 1975ի ամբան, Փարիզի իր միջավայրին մէջ: Կը ճամբորդէի քրօջո՛

զրոյ Աննա Պարաբանի եւ իր աղջկան՝ Սիլվանի հետ, որոնց երկուքին մէջ ալ Սարոյեանը գտաւ ազդակից հոգիներ: Սարոյեան, որ շատ քիչ անգամ կը մասնէ որոշ պաշտօնականութիւն, երբ կը բարբառի լուրջ ճշմարտութեանց մասին՝ հանգստացուց մեզ շուտով: Լու խօսող մը, նոյնպէս լու ունկնդիր մըն է եւ որովհետեւ կը զգայ, թէ մասնաւորաբար ինչ բան կը շահադրուէ իր խօսակիցները, կը սկսի շարունակ առնել եւ տալ: Իր պարզ, անկարգ կահաւորումով, առօնց վերելակի յարկաբաժնին մէջ Օփերայի մօտ, ուր ան կ'անցընէ սարուան քանի մը ամիսները (այդ ժամանակներուն հետո կ'ըլլայ Ֆրեդոնոյէն, Գալիֆորնիա), զիրքերը եւ թուղթերը բժականորէն զիպուած կ'ըլլան, թերթատելու պատրաստ վիճակի մէջ: Այստեղ, իր հետ թէյ խմելով, կամ աւելի ուշ՝ շաւփա (այս օրերուն ան հազիւ կը մօտենայ ալքոլին), կամ խօսակցելով արագ առնուած սուրճի շուրջ «Նիւ Եորք Թայմզ»ի Փարիզի գրասենեակին մէջ — այս րոյտը առիթներով, ան կը յայտնաբերէր մարդամօտութեան ողի, տարածելով վարակումը իր ջերմութեան, իր անխուսափելի բարի հիւժուրին:

Ոչ թէ խոհական, լուրջ կողմը կը պակասը: Խօսելով իր նոր թատերախաղերուն մասին (եւ ունի ամբողջ դէպ մը ձեռագիրներու, զորս ան ցոյց պիտի չըտայ հրատարակչներու), կը ցաւի ամերիկեան թատրոնի ներկայ վիճակին համար, զոր վլխաւորաբար կը մեղադրէ քնդհանուր սոմամբ արուեստները առաւորականներու մեղքով, մեղադրելով նոյնպէս զործակալները, խմբագիրները եւ դրողատները: Անուղղակի ահնարկներ կան սրբապղծութեան եւ զուսպ բարկութեան, որովհետեւ անիկա շահագրգիռ մարդն է: Բայց այս բոլորին տակ կայ մեղմ համակերպում մը կեանքի վերեւ վայրումներուն, երբ չի կրնար դողել անհատը խորտակող ուժերը: Առանց բեռնաւորուելու նիւթական ինչքերով, վաղ երկտատարդութեան Գրեզո — հայկական ովասիսէն ստացած յիշատակները

դեռևս վառ պահելով իր հողին, և նոյն աստե՛ն առանց կորսնցնելու ներկայ վայրկեանին զգայնութիւնը, կատարելով անոր՝ այլ վայրկեանի պահանջները, Սարոյեան նոր տեսակի խորհրդապաշտ մըն է, ազատ ոգի մը, որ կը ճանչնայ կեանքին ճշմարիտ արժէքը և կը պահէ իր եռանդը՝ կարենալ ընելու համար հընարաւորը ի խնդիր նոյն այդ արժէքին յայտնաբերման:

Աշխարհը մերժելու Սարոյեանի ժրխաւումին մէջ չկայ մտաւորական խուսափումը քանակական թուականներու տարազիրներուն. Սարոյեան մաս չէ կայմած փորձառական որեւէ զրական խմբաւորումի. ան պարզապէս կը կատարէ իր աշխատանքը, կը նայի շուրջը, լուսօքնափ կը հազորդակցի բնիկներուն հետ (թէեւ կը հասկնայ Քրտնսերէն, բայց մեծ ճիգ չի թափեր դայն խօսելու): Ան ձեռքով նշան կ'ընէ ազնկին՝ ծակելով պատուհանէ մը դուրս փողոցին միւս ափը և կը սպասէ, որ պլտիկը փոխադարձէ իրեն անշան մը իրենց հասարակաց մարդկայնութեան: Այս օտարտիկ հողին վրայ, եթէ կայ անեղծ բան մը, այն ալ ամերիկեան իր որակն է, շեշտուած աւելի քան երբեք: Այլ որակը կը յայտնաբերուի ո՛չ միայն իր զգեստով, որ պատահական է և հանդատուէր (նոյնիսկ պարկածեւ), ո՛չ միայն իր արեւմտա-ամերիկեան շեշտով և արտայայտութեան շոյլուրթեամբ, այլև՝ աւելի նուրբ կերպով, որոնք կ'արտայայտեն կարօտը միշտ լնդդինք ըլլալու, հանդարտ պահելու ամէնէն սովորական օտարակրան խեղ, խոնարհեցնելու պերճութիւնը, և աւելիաբելու ոչինչ նուազ քան անկարելին: Արդարև, կը փորձուինք եզրակացնել, թէ Սարոյեանի լաւատեսութեան ահուճը ամերիկեան կեցո՛ւածքի իր իւրացումին մէջ կը կայանայ — անշուշտ բնիկ ամերիկացին, «կեանքի, ազատութեան և Լըջանկութեան փնտռութիւն» հանդէպ իր բնածին հաւատքով:

Բայց եթէ միայն ասոնք ըլլային ահուճքը իր կեցո՛ւածքին, ինչո՞ւ ան աչքի պիտի դարձէր իբրև տեղացի: Յիսուսա-

կան թուականներու անտէր պիթնիքներն ու նորափթիթ մանուկները, իրենց ճամբուն ընթացքին կոնակ դարձնելով ճնշիչ Հաստատութեան մը (Establishment), նոյնպէս կը թուէին առաջ եկած ըլլալ ամերիկեան բնիկ կազապարով: Հաւատքի ո՞ր հիմնական պակասը մղեց զանոնք պատրանաթափութեանց գառիթափն ի վար՝ հաճոյալի փախուստով մը յանձնըւելով զեղահատերու և հակա-ընկերային արարքներու: Եթէ Սարոյեանի լաւատեսութիւնը աւելի ամբօրէն տարածուած է, կրնանք ենթադրել, որ այլ լաւատեսութիւնը առաջ կու գայ ո՛չ թէ փախուստ մը՝ իր իսկ անձէն, այլ՝ ճակատամէ մը այդ անձին հետ: Այլ աստանդական և անտան հայ հօրեղբայրները և զորմիկները, այլ անպիտակ և մտխոյ անձերը, որոնց մբայ Սարոյեան կը կեդրոնացրի իր խանդաղատանքը՝ չեն վիպականացած երբեք իբրև «ազնուական վայրենիներ», ինչպէս կը կարծեն կարգ մը քննադատներ: Խորհիլ խեղալուպաշտական հօր մասին՝ «Սիրտս լեռներում է» հատորին մէջ, կամ Հոմերի մօր մասին՝ «Մարդկային կատակերգութիւնը» գիրքին մէջ և խորհիլ Սարոյեանի բազմաթիւ մանուկներուն մասին, որոնք կրնան անմեղ ըլլալ և բաւական անսեթեւեթ՝ իրենց կենցաղով, բայց անոնք ունին կերպիւր և խորթափանց մտքեր, որոնք կ'աօրնչեն զիրենք իրենց նմաններուն. անոնք բնականօրէն մշակուած ըլլալով չեն շփոթուիր «վայրենիներու» հետ:

Իր վաղ երիտասարդութեան զրուած «Յանդուգմ երիտասարդը քուչոզ մարգաճողին վրայ» անուն իր առաջին հատորի պատմութեան մէջ, Սարոյեան կ'ըսէ.

«Ձեմ կրնար դիմադրել որեւէ օրէնք ձաղկելու փորձութեամբ, որ ծրագրուած է արգիլելու մարդու հոգին»:

Քննելի բարձր սոյն նախադասութեան մէջ «հոգին» է: Ան կ'ուզէ, որ մարդու հոգին, ա՛յն՝ որ զինք մարդկային կը դարձնէ, պահպանուի ընկերութեան ապահանգ ճշունքներէն: Եւ ասոր փաստը կը կայանայ ա՛յն իրողութեան մէջ, թէ



Մարոյեանի ուրոյն ըմբոստները — ան-  
 ւանեցէջ զանոնք «հոգեկան ըմբոստներ»  
 — չեն ուրանար տունը, մերժեք ընսա-  
 նիքը կամ համայնքը, չեն խորշիք իրենց  
 դրացիներէն կամ դատապարտեր հաճոյք-  
 ները համետ ընկերակցութեան: Ընդ-  
 հակառակն, Մարոյեանի մարդիկը կը թը-  
 ւին գոյատեւել՝ մարդու եզրայրութիւնը  
 հաստատելու առաջադրանքով:

Եւ ապա, կայ անշուշտ Մարոյեանի  
 ցեղային տարողութիւնը (dimension): Ոչ  
 մէկ ազգեցութիւն, որքան ալ հակաճառու-  
 կան թուի, չէ կրցած դերաշահեցադէս գո-  
 րացնել Մարոյեանի պահանջը իբրև ա-  
 մերիկացի գրող, որքան իր հայկական  
 ժառանգութիւնը և Լեյթաճողը (\*): (Կ'ակ-  
 նարկեմ հոս կրկին ամերիկեան այն նախ-  
 կին, ոչ-ժամանակակից սճին, որ իւրա-  
 ցուցած է իր մէջ այնքան բաղձաթիւ օ-  
 տար ազգեցութիւններ): Մարոյեանի ման-  
 կութեան իորձառութիւնները, Զրեզնօ-  
 հայկական միջավայրի իր ազատ եւ բազ-  
 մերանց փորձառութեանց մէջ, ձգած են  
 յատկանշական ազգեցութիւն մը ո՛չ մի-  
 այն իր նկարագրին, այլև՝ իր պատմե-  
 լու իսկական կերպին վրայ: Կ'ահնարկեմ  
 արեւելեան առակներու կամ երկար հե-  
 թխաթի այն յաճախ երկարացատուժ, ան-  
 ուղղակի կերպին («Հագար եւ մէկ գիշեր-  
 ներք», օրինակ), որ միշտ լաւադոյնն է,  
 երբ կը ցոյցանէ յատկութիւնը պատմո-  
 ւոյն անձնաւորութեան: Եթէ Մարոյեանի  
 մէջ այս մէկը չի յատկանշուիք իբրև օ-  
 տարականու քիւն, պատճառը ա՛յն է, որ



ան կը բազալըրուի ուրիշ աւանդութեան  
 մը հետ, ամերիկա-արեւմտեան բոնասօր  
 աւանդութեան (այնքան կատարելապէս  
 օղտազործուած իրմէ առաջ Մարք Քուէյ-  
 նի և Ռինկ Կարանըրի նման գրողներու  
 կողմէ), զոր Մարոյեան իւրացուց իր ըն-  
 թերցումներուն և միջավայրին ընդմէ-  
 ջէն: Աւելի՛ն. իբրև մանուկ մը իր բազ-  
 մանգամ ընտանիքի շրջանակին մէջ, ան  
 մնաց տոտապէլի դիւթանքին տակ, որ,  
 իր կարգին՝ մոզից զինք այլարանութեան  
 և իրականութեան ա՛յն յաւելեալ տարա-  
 ծութեան, զոր իբրև երկրաստարդ խնչա-  
 լտապաշտ մը ջանաց ըրազերծել: Հոս եւս,  
 իր ամերիկեան միջավայրին մէջ, առաս-  
 պելին ազգեցութեամբ՝ աուեալ ազգեցու-  
 թիւն մը կը վերածէ բարոյական ուժի  
 մը: Թէև ան յաճախ ինքզինք կը նկատէ  
 իբրև խորհրդասպաշտ մը (mystic) (և կը  
 խօսի կրօնքի խորհուրդին շուրջ), այսու-

(\*) Վերջերս, «Նիւ Եորք Թայմզ Պուք Րի-  
 վիու»ի մէջ տպուած հարցազրոյցով մը Խոուըրո  
 Հոլլիէտ կը ծանօթագրէ ա՛յն իրողութիւնը, թէ  
 Մարոյեան, «նորարարական իմաստով՝ եղած է  
 խորապէս «ցեղային» (ethnic) գրող մը — ա-  
 առջինը ամերիկացի գրողներու մէջ»: Այս կա-  
 պակցութեամբ պէտք է ակնցնել, թէ Մարոյեան  
 առաջին ցեղապաշտ գրողն էր, որ ցեղային տար-  
 րը փոխակերպեց համայնականի: Մարոյեանի  
 ինքնատուրութիւնը կը կայանայ բնականութեան և  
 անբնագրօս տուեալներու մէջ, որով՝ ան կըր-  
 ցու կերպրկել սոյն այլափոխութիւնը (trans-  
 mutation).

հանդերձ, կրօնական յատուկ տէնտրիկութիւններ իր գործին մէջ կը բնորոշեն Երկրահայկան եկեղեցին, որուն կիրակնօրեայ դպրոցը յաճախած է եւ կարճ տունն մը երգած երգչախումբէն: Մինչեւ այսօր, Սարոյեան խանդավազեղ ակնածանքով կ'արտայրերէ հողեւոր երգեր:

Իր վաղ տարիներուն կային բարոյական այլ ուժեր, որոնք բազադրեցին ամերիկեան եւ հայկական ազգեցութիւնները: Կար օրինակը իր զաղթական այրի մօր, որ կը սլալաբէր ընտանիքի ասլուստին ի խնդիր. կար պատմական փաստը մարդու վերապրելու վճռականութեան՝ հերոսական պատմութեանը մէջ իր սեփական հայ ժողովուրդին: Հայոց տառապանքը եւ տոկունութիւնը դարերու ընթացքին անխուսափելիօրէն միաձուլուեցան իր մտքին մէջ աշխարհի մը, անձկութեան հետ՝ աշխարհամարտի մը սեմին, եւ խորունկ սխրութեան հետ Ամերիկայի՝ ի մասնաւորի Տրիբլէշընի (Depression) տարիներուն: Այն տարիները հարթումի ժամանակ մըն էին, երբ ան կը յայտնուէր իրբեւ զբող մը — երեսունական թուականներու կիսուն. ձերմակ օձիքով դործաւորներ, աշխատուողներ, մտաւորականներ զոյուլթեան ի խնդիր միացան հասարակաց նպատակի մը շուրջ: Տնտեսական ճնշումները իրարու մօտեցուցին մարդիկը, որովհետեւ անոնք բարեկամութեան մէջ փնտռեցին միմիջարանք, հիմուրի մէջ՝ թեթեւացում, եւ սիրոյ մէջ՝ յոյս: Ստացած ըլլալով սոյն բաները փայլալայել գաստիարակութիւնը, իր առաջին պատմութեանը քննարկէ սկըտեայ, Սարոյեան խորհեցու բերել առուել խորհրդապաշտական ըմբռնողութիւն մը Ամերիկեան երագին: 1934ին, ան կը զբրէր. «Ես փրոփակեցիս մըն եմ եւ այս միեւնոյն պատմութեան մէջ կը փորձեմ վերահաստատել մարդը իր բնական ատրիբանին եւ ազնուութեան մէջ: Կ'ուզեմ վերահաստատել մարդուն ինքնութիւնը: Կ'ուզեմ ամբսխելն անջատել զինք ու մղել դէպի իր սեփական մարմինը եւ միտքը: Կ'ուզեմ վերցնել զինք պատմութեան մը դաւաճանքն ու մղել դէպի կանգարտ երազը

իր սեփական հոգիին, հարագատ ժամանակագրութիւնը իր նմաններուն»:

Կրկին անգամ կարդալով «Յանդուգն երիտասարդը թոչոյ մարգածողին վրայ» գործը, կը տպաւորուինք ա՛յն հասկան յրջութեամբ, որ կը տարածուի հատորին ամբողջ տարածքին: Հատորին բացայայտած տիեզերական դիտակցութիւնը եւ հետադիմութիւնը կը պարունակեն արձագանքներ Շէրվուտէնի տրեքսէն եւ Թոմա Վայթին, պարագայական հակումով մը դէպի սակաւախօս Հիմնիուէյը: Սարոյեանը յատկանշող հիմուրը տակաւին չէ ձերբազատուած խորհրդապաշտ բնապաշտութեան բնօճ: Բայց պատմութեանը ներս իր յաջորդական հատորներով — «Երկրչնչում — արտաչնչում», «Երեք անգամ երեք», «Մանուկները» եւ «Անուս Արամ է» — Սարոյեան գիտցաւ անջատել ինքզինք իր ախարհներէն, կամ աւելի ճիշդ՝ պահել որոշ միջոց մը անոնցմէ, կարենալ ըմբռնելու համար զանոնք մարդկայնութեան աւելի լայն լուսարձակով մը:

Սկզբնական այս հատորներուն առթիւ, դրադատները ընդհանրապէս հրապարտած էին իր ազգային նկարագիրներուն աշխարհայնութեամբն ու զբաւշտութեամբը, կազմուրիչ բացակայութեամբը քաղաքական եւ ընկերարանական քարոզչութեան ա՛յն պահուն, երբ «չարժումը» ամէն մարդու բերանն էր, սրտատուչ հիմուրովը եւ մարդկայնութեան հանդէպ ասածած այն յոյսով, զոր իր պատմութեանը ընդհանրացուցին: Աւելի ուշ, աւելի ու պղախոտ քննադատներ անհամբեր դարձան, նոյնիսկ ձանձրացան, որովհետեւ փոխանակ նոր թեմաներ (plots) եւ թատերական կացութիւններ ստեղծելու, Սարոյեան կրկին օղտագործեց իր նիւթը, յայտնադրծելով նոր նրբերանդներ հիմնական թեմաներու մէջ:

Միջանկեալ կերպով, այստեղ կ'ուզեմ ըսել, թէ Սարոյեան (որ կը սիրէ ամէն տեսակ երաժշտութիւն) մասնաւորաբար կը սիրէ Շոփէն ունկնդրել. ան կ'անկնդրէ Փարիզի մէջ, հին ձայնապնակի մը վրայ, որ բուսական երաժշտութիւն

կը փոխանցէ մէկու մը երեւակայութեան :  
 Հետաքրքրական — որովհետեւ ես ըմբռո-  
 նած եմ իր պատմութեանը երաժշտու-  
 թեան կապակցութեամբ, ինչպէս Շոփէնի  
 երաժշտութիւնը, որ կը յառաջանայ մը-  
 նայուն առանցքէ մը զէտի սահմանները,  
 որոնք, այնուամենայնիւ, կանխորոշուած  
 են զարմանալիորէն դուրս գալու իրենց  
 էական նոյնութենէն : «Օփերա, Օփերա»  
 խորագիրով կարճ թատերախաղի մը յա-  
 ռաջարանին մէջ ան կը գրէր . «Արուեստի  
 նշմարտութիւնը յուզումի նշմարտու-  
 քիւնն է, եւ ոչ թէ՛ իմացականութեան :  
 Յուզումը եւ իմացականութիւնը էապէս  
 կամ վերջնականապէս անբաժանելի են եւ  
 մէկուն որակը կախեալ է միւսին որա-  
 կէն» : Այդ յուզումին ետին կայ սեւեռա-  
 բիր սեւիլքը մարդկային տարողականու-  
 թեան — իտէալ մը, զոր մեղմէ շատեր,  
 կեանքի ընթացքին, յաճախ չեն տեսներ :  
 Այդ տեսիլքը վառ պահելու համար, ան  
 շարունակաբար մեր աչքերուն առջեւ կը  
 զետեղէ բեկորներ, զորս կը կոչէ աշխարհ  
 մը, «սր բնակելի է» :

Ի՞նչ էր մարդկային ցեղը, զոր ես  
 գտայ Ֆրեյդուի մէջ», — հարց կու տայ  
 «Մարդկային ցեղի տունը» գործին մէջ ու  
 կը շարունակէ .

Իմ ընտանիքս էր, դրացիներս, բա-  
 րեկամներս, վարժարանի ուսուցիչներս,  
 դասընկերներս, փոռոցներու օտարական-  
 ները, եւ ինձի ընտանիքս, ամէն բանէ աւելի  
 ինձի ընտանիքս :

**Եւ կը շարունակէ .**

«Օտարականները բարի՞ էին որեւէ  
 կերպով . կարելի՞ էր հաւատալ անոնց ու-  
 րեւէ կերպով : Կային բարիներ, բարի եւ  
 անյոյս, եւ ահաւասիկ ինչո՞ւ ես գտայ  
 սրուեստը, որովհետեւ չէի ուզեր, որ ան-  
 ճոխ անյոյս ըլլային» :

Մարտիան դիտար, որ միայն ար-  
 ւեստով կրնար պահել անոնց արժանա-  
 պատուութիւնը :

Մարտիանի անմեղները մանուկներ  
 չեն միայն, թէպէտ մանուկները իր ըս-  
 տեղծագործութեանց լուսագոյն մասը կը  
 կազմեն : Չափահաս անմեղներու կողքին



կան անհամակերպները (non-conformisti),  
 անփնաս, տարակեղրոն անձեր, ինչպէս մօ-  
 րեղրայրը, որ սրտչեց նուննիներ աճեցը-  
 նել անպատահին մէջ, առանց վախճալու  
 անխուսափելի ճախորդութեան ուղղաբա-  
 րութիւններէն . անոնք առանց պայմանա-  
 տրման երիտասարդներ են, որոնք թոյլ  
 կու տան, որ իրենց սրտերը ըլլան թիւր-  
 պրօզը իրենց արարքներուն, ինչպէս բան-  
 աթի մը խոհանոցին մէջ ա՛յն երիտասար-  
 դուհին, որ կը պատուախոնէ բանասր-  
 կեալի մը տատապալի կանչին՝ «Հէլլօ,  
 Խոն՝ դարսը» իր թատերախաղին մէջ : Ա-  
 նոնք «կորսնցնողներն» են, ինչպէս զրա-  
 ցէտ Ռոբ Վակրամ՝ 1951 թուականին հը-  
 բաստրակած իր համանուն վէպին մէջ,  
 որոնք կ'ապրին հաւատալով «իր արուես-  
 տի սուտերուն, որ կ'ակնարկեն եւ կ'ը-  
 սեն, թէ ինքն է մ'իսկը» : Բայց յաւագոյ-  
 նը անոնցմէ, թէպէտ երբեմն հաղիւ հա-  
 տատալի, խոհական անմեղներն են — ա-  
 զաս հոգիները, որոնք կոնակ կը դարձը-  
 նեն նիւթապաշտ աշխարհին՝ մշակելու  
 համար կարեկցութիւն, դեղեկցութիւն,  
 սէր, առողջութիւն, հիւմոր :

Նոյնիսկ քաջութենէ աւելի, հիւմորն

է, որ կը պահէ այս ազատ հոգիները: Հիւժուորը, Սարոյեանի մարդկային ընտանիքի պարագային, փրկարար շնորհ մըն է, բալասա՛նը, որ կը բուժէ, վարքագիծը, որ իրեն կը թողու վախն ու անհրապոյրը: Յաճախ, իրապաշտը եւ խորհրդապաշտը ձեռք ձեռքի կ'ընթանան՝ ստեղծելու անհեթեթութեան զգացում մը ա՛յն տարակարծութեանց մէջ, որոնք կը բաժնեն աշխարհիկ կեանքը՝ զայն ըմբռնելու իր իւրայատուկ կերպէն: Մարդու մահկանացութեան նկատմամբ իր մշտադոյ զգացումին ընդմէջէն, Սարոյեան իր նայուածքը կը սեւեռէ բնական աշխարհի վրայ, այդ հարուստ, իրաւ, հոգային վայրը՝ արուեստական Մարդկային Կատակերգութեան միւս ափը, ուր չկան գերեր կատարելու համար եւ ուր արտայայտութիւն կը գտնէ անձի մը ճշմարիտ ոճը:

Մտազրուութիւնը չունիմ հոս պատճառաբանելու յաջորդական ձախողութիւնները, որով Սարոյեան տառապեցաւ Համաշխարհային երկրորդ պատերազմին յաջորդող տարիներուն, երբ կարճ պատմըւածքէն անցաւ վիպազրուութեան: «Մարդկային կատակերգութիւն» հատորի բացառութեամբ, զոր ան նախապէս գրեց Հոլիվուտի համար, կը թուի, թէ Սարոյեան չհարցաքննուեցաւ վիպական սեռի ընտրութեամբ: «Ուէզլի ձէֆընի արկածախնդրութիւնները» թեթեւ փորձ մըն էր երգիծական վէպի, բայց ո՛չ «Ռոճ Վակրամ»ի (որ կը զրազի զաւիկ եւ հօր փոխյարաբերութեան հինաւուրց հարցով), ո՛չ ալ «Միծաղաշարժ բաներ»ու պարագային (Օ՛նէյլեան ընտանեկան աւանդավէպ մը) կար որեւէ իրապէս նորարական գրութիւն: Վէպով ան չէր կրնար ընդարձակ պատասառի վրայ լուսարձակել մարդիկը, որոնք իր փոխյարաբերութիւններն էին մարդկութեան, ոչ ալ կրնար իր անձնական դրոշմը դնել ոճի տեսակէտէն: Եւ, վերջապէս, Սարոյեանը մասհոգող հարցեր են ասոնք:

Քննադատի մը տեսանկիւնէն, Սարոյեան պիտի նպաստաւորուէր, եթէ հրատարակած չըլլար իր վէպերէն քանի

մը հատը. անոնք ո՛չ միայն բնձեռեցին իրեն թերի տպազրուութիւն մը, այլեւ մըթագնեցին ճշմարիտ յայանարեւումը իր հանճարին: Երբ 1939ին թատերազրութեան անցաւ ան, աւարտելով ամերիկեան արդի թատրոնի դասական թատերախաղերէն մէկը՝ «Ձեր կեանքի ժամանակը», բացայայտեց թատրոնի մէջ նորարար մը ըլլալու իր սուղազբանքը: Եւ քննադատները ուշադիր նայեցան իրեն: Օ՛նէյլ եւ Թորնթըն Ուայլըրը («Մեր ֆադաք») թէպէտ քանդած էին ամերիկեան թատրոնի կարգ մը բնապաշտական արգելքները, սակայն մինչեւ Սարոյեանի բաւական անպաշտօն եւ ինքնակամ մուտքը ոչ մէկ զգայի փոփոխութիւն տեղի ունեցած էր ամերիկեան թատերադեմին վրայ: Անշահադրդիո՛ւ նկարագրային շարժառիթներուն եւ աւանդական հասկացողութեանց հանդէպ, անտարբեր՝ ընկերային ձեւերու եւ անկատար թատերական կացութեանց կամ անբնական մղումներու նկատմամբ, Սարոյեան փորձեց վերածել թատրոնը «վերջին հանդիսարանին, ուր ամէն բան կարելի է»: Թատերաբեմը, այնուհետեւ, պիտի դառնար իր խիստին տանը, օգտագործելով միայն հատ ու կինո կերպով ինքզինք իր բողմերանդ ստեղծագործութեանց ընդմէջէն: Այս միջավայրին մէջ, ան զիւրութեամբ պիտի իրագործէր արուեստին պահանջած խրուճը: Սարոյեանի թատերաբեմը պիտի դառնար վայր մը, ուր մարդկային էակներ կարենային հեղուկ կեանքէն վիճակւած սխալ դերերը, ստանձնելու համար իրենց կողմէ նախասիրարար ընտրուած որեւէ դեր: Եւ այսպէս, կը ծնէին Սարոյեանի «Գեղեցիկ մարդիկ»ը — ասացածք մը, զոր ինք յօրինեց: (Գժբախտաբար, այս ասացուածքը հետագային պիտի դառնար հոմանիշ մը բեմական յարգարումի, jet-set):

Մինչ «Փուլիցըր» մրցանակի տրժանացած իր թատերախոյզը՝ «Ձեր կեանքի ժամանակը», եւ «Սիրտս լեռներում է» հատորը (նոյնպէս նոյն տարին) լաւ ընդունելութիւն դտան, իր յաջորդ թատերախաղերը, սակայն, չփոթի մատնեցին



քննադատները: Թէպէտ իր գործին բանասեղծութեամբն ու հիւմորովը հրապուրուած մտորիկ կային, բայց ուրիշներ ցաւ յայտնեցին քառասային սեմին հասած կեանքի նկատմամբ իր ցուցարերած շափազանց լաւատեսութեան եւ թատերական ոճի ու ձեւի անբաւարարութեան համար: Գառսնական եւ յիսունական թրւականներուն, սարսիկանական թատերախաղի մը ներկայացումը կարճատեւ եղաւ: Ետիկին Պրոտուէյը չկար՝ իր մասին արտասպասուելու համար, եւ առեւտրական թատրոնը տրամադիր չէր դիմելու Սարսիկանի պէս անհասարակ մը, որ կը յամառէր գործել ըստ իր նախախրած եզանակին: Մէկ պարապայի, իր յաջողութեան ողեւորութեան մէջ, Սարսիկանի փորձեց հիմնել սարսիկանական թատրոն մը: Սն տոմսակներ բաժնեց՝ դիտելու համար «Գեղեցիկ մարդի-

կը» թատերախաղի ներկայացումներուն նախափորձը, զոր անձամբ բեմադրեց եւ արտադրեց: Բայց այդ դիւրարեկ, գողարք, կարճ թատերախաղը, որ ցոյց կուտար ողորմելի բնատրուիթեանց ծնունդը հանդիսացող բնատնիքի մը խենթ քմահանոյցները, ճշգրտորէն չէին յարմարեր Պրոտուէյի ճաշակներուն: Թատերական նիւթի մը (ք՝Յ) ամբողջական բացակայութեան դիմաց, Պրոտուէյը գրեց «Նիւ Եորք Թայմզ»ի մէջ Լղադրգիւ դարձաւ: Ինչօ՞ւ Սարսիկան որոշ եզրակացութիւններով թատերախաղեր չգրեց, հարց տրուաւ ան: Արդեօք թատերական չէ՞ր անիկա:

Իրականութեան մէջ, Սարսիկան թատերական ըլլալու վրայ էր, բայց ասին ձեւով, զոր թատրոնը մոռցած էր ըլլալ: Արդի թատրոնի ծնունդէն շատ առաջ, թատրոնը ներկայացումը միացուց այլաբանական վերացումներու հետ. ան կը նկարագրէր պատմութիւն մը կատարմարդկութեան հետ առնչուած եւ հոն ներկայացուած որեւէ դործողութիւն նրկարարական էր եւ խորհրդանշական: Կարգ մը բացատրութիւններով, Սարսիկանի թատրոնը կ'որդեգրէ նախա-չէյքսփիրեան օրերու Բարոյականութեան թատերախաղը՝ արամաբանական ու բառացի պործողութեան հանդէպ իր անտարբերութեամբ, եթէ ոչ յատկապէս անոր բարոյական ուղղափառ քննադատութեանց: Սարսիկանական թատերախաղի մը մէջ նկարագիր մը իր իւրայատուկ ճակատագրով, երբեք իր անձը չէ, որ կը մարմնաւորէ միայն, այլ յատկապէս մարդկային կեանքի մը էութիւնը՝ հաւանական ճակատագրով մը միայն — ապրելու եւ մեռնելու: Պատճառը այն է, որ իր թատերախաղերը չեն ընծայեր սեփական եզրակացութիւններ, այլ կը պարզեն միայն կրկնորում հաստատումներ:

Կարելի չէ, անշուշտ, անտեսել երկու այլ կարեւոր աղբիւրներ, — դարձեալ բնիկ աղբիւրներ — որոնցմէ առաջ կու գան Սարսիկանի թատերախաղերը. այսինքն՝ ամերիկեան երգախաղը (va-

deville) իր տեսողական և լսողական բաղմերանդ պատահարներով և քայլափոխի ու արամազբութեան արագ փոփոխութիւններով, և մուռն շարժապատկերները, իրենց լայնասիրտ միմտաներով (կը տարուինք մտածելու մտանաորբար Զարլի Չէփլընի մասին) և ներքին երեւակոյտական աշխարհը, որուն խօսեցան այս ժողովուրդները: Արուեստի այս համեաւ ձևերը նպատած ոչտք է ըլլան իրեն՝ հրաժարելու համար առաւել տանդական թատերարեմի թեքնիքներէն և վերադառնալու կշտութաւոր ձևերու և բանաստեղծական զոգորդութեանց, զորս կը պահանջեն այս թեմաները:

Գէպի իրապաշտութիւն միակ դիջումը, զոր կատարեց Սարոյեան 1939 թըւահանին, զոյգ մը թատերախաղերով (ինչպէս որ կատարած էր իր պատմութեանը) իր գործունէութեան հակադրումն էր ընթացիկ աշխարհի տագնապին և սրնանկութեան վարագոյրին դիմաց, որոնց ըմբռնելի կերպով մտանում էր կրկիրը: Բայց, «Գեղեցիկ մարդիկը» հատորով (1941) այդ խորութիւնը (dimension) չըբացաւ, երբ Սարոյեանի անհեթեթ քմահաճոյքը անդորդարձու անգործնակաւորութեան մեղմ հետեւանքներուն. այս պարագային՝ պատանի մը, որ կը մտադրէ միայն իրեն հասկնալի բառերէ բաղկացած վէպեր գրել և, հետեւարար, կը սկսի գրել մէկ բառով վէպ մը — Մառ, և իր թոյրը, որ ս'չ միայն չ'ուզեր մուկեր սպաննել, այլև կը յամուռի կերտիլել զանոնք և պատաստնարան մը տալ անոնց. կարգ մը առաւել կարծ գործերու կողքին — ի շարս որոնց՝ «Ապրումն առաւօտեան քեմէն անգիմ» — այս թատերախաղը հանդիսացաւ բնադաշտական թատրոնի հետ Սարոյեանի խղումին ըսկիցը:

Կը խորհիմ, թէ գրուածութի են դասական խորութիւնները (dimensions) «Ձեր կեանքի ժամանակը» հատորին, որ իր հրատարակութենէն երկու սերունդ ետք, կը վերապրի տակաւին թատերական կազմակերպութեանց կողմէ, Չէխո-

վի, Իրսենի և Օ'Նէյլի թատերախաղերու կողքին:

Վերջերս, կրկին անգամ տեսնելով զայն, ըմբռնեցի, թէ անթերի թատերախաղ մը չէր — անթերիութիւնը, ի դէպ, բան մըն է, որմէ հնարաւոր չափով կը խուսափի Սարոյեան, որովհետեւ անիկա կը ջլատէ ստեղծագործութեան ընթացքը (process), այսուհանդերձ, սոյն թատերախաղը ուժոյնորէն կը խլէ ամերիկեան պատկեր մը, զոր Սարոյեան ակնածանքով սրահած է միշտ, և թէ՛ այս նոյն ակնածութեամբ ան կը մնայ տակաւին անդիմադրելի և հատու:

Բեմադրելով «ամերիկեան վայր մը», ինչպէս Սարոյեան կը կոչէ զայն, «Հանգիքով գիներումն մը»՝ Սան Ֆրանսիսքոյի մէջ, կը ծնի հակասութեանց թատերախաղ մը, որ կը ժխտէ մարդկային կացութիւնը: Իր նկարագրներէն իւրաքանչիւրը կը յայտնակերպուի դիւրաւ ճանաչելի դիմակով — ինչպէս բազմերանդ ցուցագրութեան մը (variety show) դերակատարները — գրեթէ չնական զինեպանը, առանձնացած պոռնիկը, երիտասարդ խաղամուրը, սիրահարը, կովարածը, ձախողած կատակերգուկը, ձանձրացած, թոյլ դիմովը: Կեանքը կը կազապարէ գանոնք, թէ և ոչ վերջնականապէս. ճշմարիտ անձը, հոգին — Սարոյեան կը պարզարանէ — կը մակերեսացնէ, չուզելով ջնջուիլ: Ճոյի դիտաւոր դերով, իմաստասէր-բանաստեղծը, որ զլացած է բարիք ընելու, բայց հանդատուէտ կեանքի լերումով դարձած է այնքան ամուլ գործնապէս աղղեցիկ ըլլալու, Սարոյեան կը թեյաղրէ համոզիչ համեմատութիւն մը իր ժամանակակից Ամերիկային հետ. ան կը մեղմացնէ իր քննադատութիւնը, սակայն թատերարեմի վրայ ժողովրդական կատակերգակ տիպարին ներկայութեամբ՝ Գիթ Գարսընի, որուն հոգոյն մէջ պահուած է նախատիպային ամերիկեան արկածախնդիրը: Գարսընն է, որ վտանգի պահուն կ'ըմբռնէ ներհակ նշանակութիւնը և հետեւանքը թատերախաղի թեմային. «Ձեր կեանքի ժամանակը»

կին, ապրեցե՛ք — այնպէս որ՝ այդ լաւ ժամանակին պիտի չըլլայ ո՛չ տգեղութիւն, ոչ ու մահ ձեզի համար, կամ ու եւէ մէկուն համար, որուն կը հալի ձեր կեանքը...»: Գարօըն բնազօրէն պատրաստ է դործելու անհատի պաշտպանութեան համար, անարգանքին դէմ իր հոգիին:

Թէպէտ իրապաշտական խորութիւնը Սարոյեանի թատերախաղերուն մէջ ամբողջովին բացակայ չէ, սակայն վերջին տարիներուն յայն չափով մը հետացած է ան մեր ժամանակի խնդիրներէն ևւ տազնայնեւէն, որոնք ահունքը կը կազմեն ժամանակակից թատերագիրներու յուսահատութեան: Փոխարէնը՝ ան կըլանուած է քաղաքըրծելով աննշան, ոչ յատկանշական փաստերով մարդոց դործունէութեանց եւ յարաբերութեանց ծաւրերը, որոնք կը նուիրաբերեն իրենց էական մարդկայնութիւնը:

Թէպէտ հոս զոյութիւն ունի տիեզերական նշանակութիւնը, բայց իմացականօրէն ըմբռնելի երևուածութեան բացակայութիւն մը դանոնք «բնազանցական» կը դարձնէ փայլակնային տարողութեամբ միայն: 1949ի իր թատերախաղը՝ «Հեռու որ խեղճ մը», «սպասումի» թատերախաղ մըն է, որ չորս տարիով մը կը կանխէ Սամուէլ Պեքէթի «Սպասելով կոտոյի» զօրծը:

Թատերախաղ մըն է բացայայտօրէն անիկա, խումբ մը աշխարհ մարդոց մասին, որոնք հիւանդանոցի մը յարկարամնին մէջ մահուան կը սպասեն: Բայց հակադրուելով Պեքէթի սրտաուռ դատարկապարտներուն, Տիտի և Կոկօ, որոնց վհատեցուցիչ ունակութեանց՝ Սարոյեանի խումբը օտտուած է կեանքի զերազանց իմաստով մը: Անոնցմէ մէկը, տգէտ սւամօրթ մը, կը խնդրէ, որ բառարան կարգան իրեն սկիզբէն մինչև ծայրուրիչ մը, ամբողջ օրը ուշադրութեամբ Մոցարթի կ'ունկնդրէ. մինչ ուրիչ մը տակաւին կը դիտէ Սան Ճրոնտիսքոյի Ծոցի երկայնքին ծխածանի մը հրաշքը, զրեթէ կոյր աչքերով: Գալով թատերախաղին տարողութեան, զէթ կը հաւատանք իր

հերոսներուն և կեանքի բարութեան հանդէպ անոնց դիտակցութեան: Անոնց հուսաբք, իր անոսահման կարելիութիւններով՝ մինչև և տք կը փարատէ իրենց մահուան երկիւզը: Թէև յանձնարարելի գեղեցիկ թատերախաղ մըն է, բայց չեմ կրնար խորհիլ, որ երբեքից անիկա կըրնայ ներկայացուիլ ժամանակակից հանդիսատեաներու համար: Որովհետեւ, մինչ պատրաստ կը թուինք ըլլալ բնիկելու Պեքէթի մը ծայրայեղ ուշնշականութիւնը, սակայն յատկան պատրաստ չենք ընկալելու երկրային երանութեան մը մասին այսօր անեղծ տեսիլք մը:


Երբ 1958ին «Բարայրի բնակիչները» (թերևս Սարոյեանի ամէնէն ինքնատիպ թատերախաղը) ներկայացուցաւ Պրատուէյի մէջ, Հերոյա Գլորմէն զայն սրակեց «բացարձակ զոյութեան պաշտութիւն»: Դարձեալ նոյն գանգատը. հնարքէ զուրկ էր անիկա և չկար հակամարտութիւնը չարի և ցաւի: Սարոյեանի պատասխանը երևցաւ տղայրուած թատերախաղին ներածութեան մէջ.

«Ամէն քատերագիր, — կը գրէր ան, — կը ստեղծէ մարդկային ցեղ մը: Իր ցեղին ունարտութիւնը չի կայանար մարդկային իսկական ցեղին հետ իր ունեցած նմանութեան մէջ: Կը կայանայ իր ունարտութեան մէջ՝ իբրև քատերագիր, իր չափանիշին մէջ՝ իբրև մարդ. փոյթ չեմ ընել, երբ կը մեղադրուիմ մարդկային ցեղը չատելու պատճառաւ: Այնքան ատեն, որ կը փափաքիմ ըլլալ մէկ անգամը այդ ցեղին, զայն ստեղծով մեղանշած պիտի ըլլամ թէ՛ բնութեան և թէ՛ ունարտութեան հանդէպ»:

Սարոյեանի պատասխանը այստեղ, ինչպէս բաղմամբ թատերախաղերու պարպոյին, զորս ան դրեց անիկ ի վեր և կը շարունակէ գրել մինչև այսօր, կը ձգտի արդարացնել ճշմարտութեան մասին իր սեփական տեսիլքը ստեղծելու արեստագէտի անփոխարինելի իրաւունքը: «Բարայրի բնակիչները» հատորին մէջ, Սարոյեան կը մտաշղթանայ (իսկապէս կը փառատունէ) աշխարհի մը կարելիութիւն-

նը, ուր բռնաթեման պէտք չկայ, որովհետեւ բարութիւնը յաղթած է չարին — և բարութեամբ, ըսել պիտի ուզէի, Սարգսեան երբեք ըսել չ'ուզեր արագ ընդունելի առաքինութիւններ, այլ՝ բնական զգացողութիւն մը, որ հնարաւորութիւնը կու տայ անձի մը ըմբռնելու այլ անձի մը կացութիւնը կամ ճակատագիրը: Իր թատերախաղին մէջ կը ներկայացնէ, թէ աշխարհ դժադրական ձեւով կը բարձրանայ աներակներէն — հոս կը տեսնուի իրրեւ վերագուած, չքուած թատրոն մը (յարմար պատկեր մը, որովհետեւ այս աշխարհի վրայ ամէնքս կը խաղանք մեր գերերբ) — ուր անգործ գերակատարներս խուճր մը սպաստան դուած է: Այս մէկը սարբեր ձեւի «սպասումի» թատերախաղ մըն է: Նկարագրներէն երկուքը իրենք իրենց շնորհած են արքայական տիտղոսներ, թագաւոր և թագուհի (գերեր՝ որոնցմով անգամ մը հանրածանօթ էին), և կը ներշնչացնեն մարդկային կանկներ, որոնք կը սպասեն իրենց օրինաւոր ժառանգութեան գալուն — Երկրի թագաւորութիւնը:

Իսն մը, որ առաւել հրամայական և չիտթեկցողիչ է՝ խորհրդանշութիւնն է «ձիւմ Տաւնոի — գէր մարդը սովի մը մէջ» (հին թատերախաղ մը), որ տեղի կ'ունենայ հաւկիթի կեղեւի մը մէջ, ուր կը տեսնուին Հանրային Գրադարանի մը աներակները: Մութ քարայրի մը մէջ կ'երեւան երկու զարհուրած երեխաներ, իր մասերէն բաժնուած սանդուխ մը, սրահ մը և պղտիկ բանտ մը: Իանաստեղծ մը, որ կը փնտռէ Սուրբ Սկիհը, գրադարանայեա մը՝ կ'զգոպարայի պէս հագուած, թխապարտ մը, որ կը յայտարարէ, թէ ինք ամէնուն բարեկամն է, և հարուստ դէր մարդ մը, որ հագուած է դատարկապետի մը պէս: Թատերախաղ մըն է, որ մարտահրաւէր (challenge) կը կարգայ բնմադրիչներու լաւագոյն երեւակայութեան: Վերստին ծնելու իմաստի այս կոչին մէջ, անասճման երանգ կայ, ձայն, շարժում և ծիծաղելի հնարք: «Ձէի գիտեր, — կ'ըսէ արձակագիրներէն մէկը



(Յիշերն) մտածկոտ մեծախօսութեամբ մը, թատերախաղի տարախն, — թէ իմ մայրս ու հայրս չէին, որ ծնունդ տուին ինձի: Ձի գիտեր միեւեւ այս պահը, թէ ես իբրեւ Յիշերն չեկայ հոս: Եկայ իբրեւ ոեւէ անձ՝ կատարելու իմ բաժինս, ըստեղծելու իմ դերս, ըլլալու համար ո՛ր մէկը որ նախընտրելի ըլլայ: Որքան սըխալ, որքան սխալ է այս, պարզ բան մը այսօրն ուշ տորվիլը»:

Իր բազմաթիւ ինքնակենսագրական զանաչախոսութիւններէն մէկուն մէջ, զոր Սարգսեան հրատարակած է անցիող սասնըհինգ տարիներու ընթացքին, ան կը գրէ Գեղեթի «Ապանելով Կոտայիմ» թատերախաղին մասին: «Այս մէկը միակ քատերախաղը չէ, և եթէ բոլորս իրապէս կը սպասեմք, կան սպասումի տարբեր կերպեր, մոռնալու տարբեր կերպեր, թէ



մենք իրականութեան մէջ կը սպասենք եւ, վերջապէս, տարբեր կերպեր՝ գերծ մնալու բռնուելէ քան բռնելու»:

*Ընդհանուր ազդեցութիւնը ինքնակենսագրական այս մասերուն, — «Հոս կու գայ», «Կ'երբայ, գիտես թէ ով», «Օր մը աշխարհի յետմիջօրէին», «Կեանքի եւ մահուան օրեր եւ փախուստ դէպի լուսին», յիշելու համար մէկ քանին — իսկապէս կը թեւադրէ, թէ իր միջին տարիքին Սարոյեան չէ լրած կեանքի հանդէս իր գործութեան անսակտը: Ապրող գործընթաց մէջ ան սակաւաթիւ այն անձերէն է, որոնց տեսիլքը չէր աղօթած արդէ աշխարհի անհետեւութեամբ: «Առանց պարզ գուարքութիւն կայ ամէն մէկ օր, գոր կ'ողջունեմ, քան անցեալին», ան կը գրէր 1963ին «Չմեռնելով» անուն իր գործին մէջ: Յետագայը անկարկայ մը նայելով այն «դէշ երազին» (չբացատրուած), զոր ունեցաւ 1955ին, երբ մըրտածէց, թէ իր «ժամանակը հասած է», ան կը հրճուի իր ստեղծագործական ուժերուն վերադարձով: Փարիզի իր յարկարաժնին մէջ, իր սրտանի տղուն եւ աղջկան ընկերակցութեան, գրողէտը կը գերազանցէ յանկարծ ինքզինք, իր արտաստը կեանքի վերածելով: Հիմա, աւելի դողուած՝ ան կը գրէ մարզանքի մը պէս, յարատեւ վարժութեան մէջ պահելով ինքզինք, ու կը մատնէ անխոյժ երեւոյթ մը իր գործերուն հրատարակութեան նկատմամբ:*

«Իմ գրութիւնս, գայն աւարտելէ ետք, հաւանաբար փոփոխութիւն մը առաջ բերած ըլլայ մէջս դէպի լաւը, — կը պատմէ

*Սարոյեան իր տղուն, — եւ այդ տարգրութեամբ կըցած է նոյնպէս փոփոխութիւն մը առաջացնել մարդկային ցեղին մէջ դէպի լաւագոյնը, բայց լաւագոյն փոփոխութիւնը կրած եմ գրած պահուս...: Երբ դուն կ'աշխատես նոր գրութեան մը վրայ, տակաւ կը հեռացնես անձոյ բարեկան աւելորդ բաներէ, քրոնք գոյութիւն ունեւին բնութեանդ մէջ: Կը կեդրանահաս ալմիւսն ու ժգոյնէն, որ կերպով մը կը լինի մարմինդ ամբողջապէս, թէպէտ մարմինդ քեզի հետ է միշտ: Միտե՞ր կամ միտքը յանձն կ'առնէ — ոչ երկար տեսն. միտքը երկար ժամանակի պէտք չունի. յայտնապէս յարտեմութեան պէտք չունի: Անկաւ կը գործէ ամբողջապէս վայրկեանին, հիմա, զանց առնելով ժամանակը, գար մենք կ'ըմբռնենք»:*

*Այս մէկը այնքան բացայայտ հաստատում մըն է, զոր կատարած է Սարոյեան իր արտեմութիւն հանդէպ ցուցարեւած ալմիւսն մասնաւոր յարտեմութեան մէջ, զոր պահած է կամ ջանացած պահել, ինչպէս ծօ կ'յոյն Գիթի Գարսբին՝ «Չեր կեանքի ժամանակ»ին մէջ. «Ապրիլը արուեստ մըն է: Հաշուակալութիւն մը չէ: Բաւական աշխատանք կը պահանջուի անձ մը կարենալ ինքզինք ըլլալու»: Ուրիշը՝ Սարոյեանի աշխարհին մէջ, իրականութիւնը եւ երեւակայութիւնը միաձուլուած են: Իր ամէնէն հարողատ փոխակերպումը, ան լրջօրէն — եւ զուարթութեամբ — կը շարունակէ իրականացնել վայրէ մը մէջ, ուր կարելի ըլլայ բնակիլ:*

Հայագոյ՝ Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Յ. Կ Ա Ր Ա Պ Ե Ն Յ

**ԱՆԿՐԿՆԵԼԻ ԴԻԻՑԱԶՆԵՐԳՈՒՆ**

Ժամանակն ու տարածութիւնը տարօրինակ խաղեր են խաղում :

Այսօր՝ քանակէկերօրդ դարի մերձակայքում , այնքան հեռու է թւում հայ ազատադրական սլաքարն ու իր անդուրական երգիչը՝ Սիամանթոն , որ ժամանակակից մարդուց արտակարգ ճիգ է պահանջում ձերբազատուելու առօրեայ մեքենայացուած ու յաճախ բթացուցիչ վազքից՝ վերադառնալու համար հայ հերոսականի քուրան եւ այն բրոնզեայ երդը , որ եղաւ Սիամանթոյինը : Կարծէք տարրեր աշխարհ էր , դիւցազուններով կերտուած գաղափարական մի դար , ուր հայրենիքի ազատութեան հրամայականը իր կրակէ թեւերն էր տարածել հայ հոգիներին ու երգիքներին վրայ :

Մտքերի հորիզոնում ծառայած է մնում Սիամանթոյի դրանիթէ կերպարը :

Ու սակայն երդը աւարտուած չէ : Եղևոնը հազար ու մի ազգակներով շարունակում է հայութեան դիտակցական ու ենթագիտակցական կեանքում : Միացեալ Հայաստանի Լրադը իրականացած չէ : Իսկ աշխարհացրիւ հայորդիները հետզհետէ կսրցնում են իրենց հայութիւնը : Պատմութիւնը շարունակում է : Պատմական այս դիտանկիւնից նոյնքան հրատապ է հնչում Սիամանթոյի շեփորը , որքան հնչում էր հայ յեղափոխութեան զենիթում :

Այլուհանդերձ , այս ներբողական չէ : Իր դործով բանաստեղծը ներբողել է իրեն : Աւելի՛ն . հայ ժողովուրդն է ներբողել բանաստեղծին : Մինչև այսօր էլ Սիամանթոյի երգերը հնչում են հայկական բեմերից՝ ոգորումի ու յարատուութեան թէ՛ սլաքներ ցանկելով սրտերի մէջ : Հայաստանում , յատկապէս նոր սերունդի մօտ , Սիամանթոն ու Վարուժանը քրմական տարածք են ստացել , ազգային ինքնափստահութիւն ներշնչելով երիտասարդութեանը : Ոչ էլ այս դրական վերլուծման փորձ է , ս'չ այն պատճառով , որ Սիամանթոն զերծ չէ մեծ քերթողներին յատուկ դրական տկարութիւններից , այլ որովհետև նման դործի համար անհրաժեշտ է տարրեր մօտեցում ու արամապրութիւն : Մեր նպատակն է , հետեւաբար , մի քանի խօսքով անդրադառնալ Սիամանթոյի ոգուն ու դրական նկարագրին , որը , աւելի լայն առումով , իր գլխաւոր ժառանգութիւնն է հանդիսանում :

Յեղափոխական էր Սիամանթոն : Հայ յեղափոխութեան քորայում էր թրծուել եւ յեղափոխութեան նուիրեց իր սակեհունչ շեփորը : Իր ամէնից մահաշունչ առդերում անդամ յեղափոխութեան կոչ կայ՝ ցնցելու , սթափեցնելու եւ սպորամի ներշնչելու հայ ժողովուրդին : Առաւելապէս , նա՛ եղաւ հայ յեղափոխութեան երգիչը , երբ Արեւմտեան Հայաստանը արխնաքամ էր լինում համիդեան թոնակալութեան ճիրանների տակ : Այս իսկ առումով՝ քաղաքական պատգամարեր էր Սիամանթոն , գաղափարի զինուոր եւ Հայաստանի ազատագրութեան ռահիբրայ :

Եւ մի՞թէ քաղաքական գործիչ չէ ամէն մի բանաստեղծ :

Մի՞թէ արուեստի ամէն մի գործ ինքնին քաղաքական մի պատգամ չէ :

Արուեստի ամէնից անանձնական ու վերացապաշտ գործի մէջ անգամ

քաղաքական աշխարհահայեցողութեան կնիք կայ, նոյնիսկ այնպիսիների՝ մօտ, ովքեր ժխտում են քաղաքական իրականութիւնը:

Սիւսանթոն հրապարակ իջաւ այն ժամանակ, երբ արեւմտահայ մաքի կենտրոնը հանդիսացող Պոլիսը հոգեվարքի մէջ էր: Գարուբանդ էին եղել հայրենի օջախները: Համատարած տառապանքի ու վշտի տակ կըլէ էր հայ ժողովուրդը: Ամէնուր յուսալքութիւն, աւեր ու արիւն: Լուել էին Ալիշանի, Գուրեանի ու Պէչիկթաշեանի քնարները: Նորերը չէին կարողանում դլուխ բարձրացնել: Սուլթան Համիլը պատրաստում էր վերջին հարուածը հասցնելու: Եւ ահա ընդհանուր պարտուողականութեան մէջ բորձրանում է Սիւսանթոյի առնական ձայնը՝ արձագանգելով հայ յեղափոխութեան մարտակոչին: «Իլիցազնօրէն»ը գիւցազնական սիրագործութիւնների միջեց հայրերիներին: Յեղափոխութիւնը դարձաւ օրտալ կարգախօսը եւ հոգեւին վերջապահ առնականացաւ: Հայ ժողովուրդը: Պատտառը աւելի լայնացնելով՝ այս անգամ Սիւսանթոն կերտեց իր հոյակապ «Հայրերիներ» շարքը՝ համադրելով հայ ազատամարտիկների վիթխարի կերպարները՝ շարունակ ըմբոստացման ու պայքարի յորդորելով ժողովուրդին:

Գիւցազներգու է Սիւսանթոն: Այն տարրերութեամբ սակայն, որ Հայոց Պատմութեան գիւցազներին ազատինելու փոխարէն՝ գիւցազնացրել է հայ յեղափոխութեան շրջանի հայդուկներին, յեղափոխականներին, մարտիկներին, ե՛ւ ռանչուարին, ե՛ւ սերմնացանին: Սմբողջ հայ ժողովուրդին: Իր նըպատակը հերոսապատուժը չէ, ոչ էլ գիւցազներգութեան առաքինի ու արդար տիպարների ստեղծումը: Ի հակադրութիւն դասականի, նա միւս ու արիւն է պարգեւել իր հերոսներին ու նաեւ կասելու եւ զոհուելու գիտակցութիւն: Ուստի, Սիւսանթոն է՝ նաեւ ռազմերգու, թերեւս ամէնից մեծ ռազմերգուն հայ գրականութեան մէջ: Հեքիաթների ու պատումների փոխարէն Սիւսանթոն կեանքից է առնում իր հերոսներին եւ դարձնում աւելի մեծ, քան կեանքը, ռուսի եւ՝ իր ժողովրդականութիւնը վիպապաշտ ժողովուրդի մօտ: Ու թէեւ փոթորկալի է իր շունչը, եւ բազմադեղ իր փոխաբերութիւններն ու խոսքուած՝ իր պատկերները, ժողովուրդը աւամայից բնկալում է պատգամը՝ իր ազրումները արտացոլուած աեսնելով հերոսականի մէջ: Խորհրդապաշտութեան, վիպապաշտութեան ու միաժամանակ իրապաշտութեան մի արտասուօր համադրում է Սիւսանթոն, մերթ նոյնիսկ հասնելով բնապաշտական ցնցիչ պատկերներին: «Հոգեվարքի եւ յոյսի քահեր» շարքում, ապա «Կարմիր լուրեր բարեկամէս» գրքում Սիւսանթոն յանդերձեօրէն ու նաեւ մետապաշտ գրասուծով ապուխում է իրապաշտ գրուադների սուսցիկ զրուսորումների՝ ողբալով Կիլիկիոյ հայոց ջարդը եւ մարդաբէաբար կանխատեսելով Մեծ Եղեանը:

Հայի ցաւը ողբալով՝ բանաստեղծը ողբում է հայութեան ցաւը:

Հայութեան ցաւը ողբալով՝ նա ողբում է մարդկութեան ցաւը:

Ազգային սղբերգութիւնը երգելով՝ քերթողը ողբում է համամարդկային սղբերգութիւնը:

Մարդու անիրաւութիւնը մարդու դէմ:

Եւ այդուպից էլ՝ Սիւսանթոյի համամարդկային արժէքը:

Այնքան ժամանակ քանի դեռ գծիւնեմ իշխանութիւնների թաթի տակ կը տրտուեն զանդուածները, երբ դեռ կը շարունակուեն ազգային սպանդները եւ համատարած բանտերի կը վերածուեն հայրենիքները, Սիւսանթոյի ձայնը կը հնչի որպէս ահարկու ազգանշան, որպէս ընդվզումի ու ըմբոստացման անվերջ պատգամ: Որքան անիրաւ են եղել այն քննադատները, երբ Սիւսանթոյին ազգայնամոլ են բնութագրել, երբ իրականում նրա ամէն մի

խօսքը, ամէն մի երդը մի յաւերժական կոթող է յանուն ժողովուրդները ազատութեան ու համամարդկային եղբայրութեան:

Միաժամանակ սխալ է նաեւ ոմոնց այն վերագրումը, թէ Սիամանթոն լալկան է ու յուռտես: Ճիշդ է, նա յաճախ չափազանցուած գոյնեւորով է պատկերել զրուագները եւ ցուել ու արցունքի վերածել իր տողերը, սակայն նա այդ արել է ոչ թէ յուսալքումից տարուած, այլ՝ ցասումի, վրէժի ու ինքնապաշտպանութեան մղելով ժողովուրդին: Ամէնից յուսահատական պահերին անգամ Սիամանթոն գալիք մեծ արշալոյսն է աւետում, յոյս ներշնչում եւ անէծք կարգում անարդ ոտխին:

Հետզհետէ աւելի բերեղացող «կարմիր լուրեր բարեկամէս» շարքին յաջորդող «Հայրենի հրաւեր» գրքում Սիամանթոն այլևս իր դեղարուեստական հասունութեան ծիրի մէջ է, ուր ձեւ ու բովանդակութիւն, խոհ ու արուեստ համադրուելով՝ կոթողական բարձունքների են հասցնում բանաստեղծին: Հայրենի օջախից հեռու՝ հեռաւոր Ամերիկայում է, որ բանաստեղծը սենսում եւ զգում է հայ պանդուխտների կիզիչ կարօտախառ եւ վերադարձի կոչ անում նրանց՝ վերաշինելու հայրենիքը եւ լսելու «Հայ դաշտերուն պաղատաւնք»: Աւա՛ղ, հայութեան սպասում էր աւելի մեծ ազէտը: Սիամանթոն գիտակցարար դէպք արեան ծովը դնաց՝ ժողովուրդի հետ կիսելու մահուան վերջին հոնդիւնը: Բնաջնջուեց մի ամբողջ ժողովուրդ, իսկ մնացորդացը դեռ դեղերում է ի սփիւռս աշխարհի՝ ամէն մի սիրտ կարօտի մի ջահ:

Ասում Եարճանեանը իր ուսանողական տարիները անցկացրած լինելով Փարիզում, ժրնեւում ու եւրոպական այլ ուսումներում, մօտից ծանօթանում է այն օրերի գրական շարժումներին եւ է՛լ աւելի հարստացնում գրական իր բնատուր ընդունակութիւնները: Ստանուածքով խորհրդապաշտ՝ ուղեկցում է Անրի դը Խէնիէին, Մօրիս Մէթերլինիին ու Վերհարին՝ այն ինչ վերաբերում է պատկերների սխիւտիստական կերտմանն ու բանաստեղծական դազափարների ներհուն շաղկապուածութեանը: Ստիպան հենց այդ կէտում է, որ Սիամանթոն բաժանուած է եւրոպացի իր գրչեղբայրներից եւ հետեւում իր հզօր երեւակայութեան բեզասեան թռիչքին: Ահա իր ուժը, իր գրական կուռ անհասականութեւ . խարխալը: Յաճախ խօսքը կըսում է նրա երեւակայութեան յորձանքի առջեւ, կորցնում իր իմաստը: Հարկադրուած՝ բանաստեղծը դիմում է բարդ բառերի ստեղծմանը — մի հանգամանք, որը յաճախ կրկնուելով՝ տկարացնում է պատկերի անմիջական ընկալումը: Պատահում է, որ մի ամբողջ էջ գալարում է ածականների, բայերի, մակբայների ու մակդիրների միմեանց հրմշտող յորձանուտում, մինչեւ որ մի բառ, մի տող, աստղի սլէօ փայլելով՝ լուսաւորում է ամբողջ միամաժ երկնահամարը: Բարեբախտաբար, իր մօտ նոյն ուժգնութեամբ չի ժայթքում յոյզները՝ չնչումը, այլ սպէս նրա երգերը մեկուգրամայի պիտի փոխուէին: Տրամաբանութիւնը շարունակ ներկայ է Սիամանթոնի ստեղծագործութիւններում: Որքան էլ յուզական է տեսարանը, սառն աչքը կամ բանաստեղծի ներքին դաշնը ուշադրութեամբ հետեւում է նիւթի զարգացման ընթացքին եւ ուղղութիւն սալիս իրերին ու երեւոյթներին:

Սիամանթոն իր դործերի մեծ մասը յորինել է մեր դարի առաջին տասնամեակում՝ Պոլիս-Փարիզ-Փրնեւ-Բոստան առանցքի վրայ: 1911-15 թուականները ստեղծագործական համեմատական նուազ արտադրութեան տարիներ եղան նրա համար, երբ բանաստեղծի մօտ զարգացաւ այսպէս ասած «հեթանոսական» գրականութեան դազափարը՝ վեր հանելու հայոց հեթանոսական շրջանի գրուագները: Այդ ուղղութեամբ նախաքայլեր եղան նրա «Նա-

ւասարդեան աղօթքը» եւ «Մուրր Մեսրոպ» կոթողական դործը, որոնք ծրագրուած մի շարք այլ երկերի հետ, նպատակադրուած էին անցեալի մոռացութեան խաւարից փրկել հայ ժողովրդի լուսադոյն աւանդները:

«Մուրր Մեսրոպ» պոեմը՝ բաղկացած «Ներքողական», «Մուրրին աղօթքը», «Տեսիլքը» եւ «Փիւտին փառքը» մասերից, Մաշտոցին նուիրուած լուսադոյն գործերից մէկն է՝ իր մէջ մարմնուորելով հայ մշակոյթի փառքը, հայ քաղաքական մտքի վերածնունդն ու հայ հոգեւոր հարստութեան լոյսը: Գրելուր նարեկացու շունչով Սիւմանթոն ներբողում է հայ իմացութեան ահաւնքը՝ Օշականի Մուրրի մէջ համադրելով հայ ժողովուրդի յարատեւման ու ստեղծագործական առաքինութիւնները: Ամբողջ գործը ջերմ զգացումներով յորդառատ գետ է, որը խորասկզբով պարերի ամբարտակները, աշխարհի առջեւ բացում է այն «անշրջանակ լուսամասը», որտեղից յայտնւորէն ճանաչում է Օշականի լոյսը: Այս գործում այլևս ակնբախ է Սիւմանթոյի դրական յեղաշրջումը, կամ աւելի ճիշդ՝ իր վերադարձը առաջին ուսուցչին՝ նարեկացուն, ո՛չ միայն ձեւի ու կառուցիչ, այլև՝ խորքի ու բովանդակութեան տեսակէտից: Ամէն բան մի աղիւս է, որի վրայ կերտուած է ամբողջ շինութիւնը: Առանց նարեկացու՝ Սիւմանթոն պիտի չկարողանար հասնել Մաշտոցին՝ նրա միջոցով խօսելու Աստծուն:

Ինչպէս ինչպիսի ուղղութիւն էլ ստանար Սիւմանթոյի ծրագրած նոր «հեթանոսական» ճամբան, հիմնականում նա է՝ ու կը մնայ հայ գրականութեան անկրկնելի զիւցագնդուին, լայնորձակ պատաստների հօր նկարիչը եւ անուղղայ յեղափոխականը:

Գրական նոր ուղղութիւն բացեց Սիւմանթոն թէ՛ որպէս թեմա եւ թէ՛ որպէս սճ: Նա ցայտուն շարկուող հանդիսացաւ հայ միջնադարեան ու արդի գրականութեան միջև՝ իւրաքանչիւրից տանելով լուսադոյն տարրերը, ապա իր ուրոյն անհատականութեան բովից զտելով այն ներկայացրեց ժողովրդին: Իր մօտ, ինչպէս շեշտեցինք, տիրական մնաց ազգային, քաղաքական ու հասարակական ջիղը: Իր քնարը նուիրեց հայ ազատագրական պայքարին՝ երգելով հայ ժողովրդի տառապանքը, վիշտն ու յուսաբեկումը, ապա՝ հոգեվարքի վալարումներից ըմբոստացման ու յաղթանակի մղելով հայտնիներին: Նա եղաւ, առաւելարար, ազատութեան երգիչը:

Սիւմանթոյի ոճը պերճ է, կուռ ու շքեղ: Իր անյանդ, ազատ ու արձակային բանաստեղծութիւնը յագեցած է ներքին հուժկու կշռոյթով, որը ընդձուլեայ խոռով ալիքների պէս անակնկալօրէն ճեղքում է խաղաղ մակերեսը՝ յոյգերի կրակ տեղալով չորս դին: Տաղաչափութեան, մետաֆորների ու պատկերազմման տեսակէտից նա շարունակ հարազատ է մնում իր առաջին ուսուցչի՝ նարեկացու արուեստին, թէև իր ոտանաւորի ազատագրումը նա արդէն հռչակել էր Եւրոպայում, յատկապէս իրեն դրչակից ունենալով բելգիացի Վերհարնին: Հին ու նոր ազգեցութիւններ կրելով հանդերձ, Սիւմանթոն կերտել է իր ուրոյն սճը — Սիւմանթոյականը, որը համադրումն է հակակշռուած ազատութեան, պերճաշուք յասակութեան եւ բանաստեղծական արուեստանքի կատարեալ տիրապետութեան:

Սիւմանթոյի երեւումը հայ գրականութեան երկնակամարում ասուպային խոր ակօսներ պեղեց խաւարում, փայլեց, շողարձակեց եւ ասուղի պէս մարելու փոխարէն՝ դարձաւ անվերջանալի աստղ՝ իր ցոլքերը ցանելով հայ սերունդների կեանքի ու նկարագրի վրայ:



# Բ Ա Գ Ի Ն Հ Ա Մ Ը

Երկի երգեր էի գրում,  
Բառերն ուրիշ համ ունեիմ...

ՀԱՄՑ ՍԱՀԵԱՆ



Նահատակ մտաւորականներու ուժեղ զէմբե-  
րէն մէկը՝ Գարեգին Խաթակ, Պոլսոյ մէջ տրուած  
վարութանեան ասուլիսին (1913) ընթացքին, հե-  
տեւեալ տարբերիչ յատկանիշներով կը բնութա-  
դրէր ժամանակակից հայ բանաստեղծութեան եր-  
կու մեծերը:

«Սիւսանքոյնի ո՛ր էր բանա՛ Սիւսանքո Է,  
վսեմ, շքեղ, դիւցազնակամ: Վարութանի ամէն  
մէկ էջին մէջ նոր վարութան մը կը գտնես՝ նոր  
փայլով, նոր ուժով, նոր գեղեցկութեամբ»:

Եթէ Խաթակի այդ զեչ մը ծայրայեղ սահ-  
մանումներուն լոյսին տակ դիտենք հայրենի բա-  
նաստեղծ Համո Սահեանը, պետի հաստատունք  
խսկոյն, որ վարութանի երակով բանաստեղծ մը  
չէ Սահեան, այլ՝ ուելի կը մտտենայ Սիւսան-  
քոյնի ձգած ընդհանուր տպաւորութեան: Ընդ-  
դրկումներով թէ կատարողական առումով բա-  
նաստեղծի միշտ նոյն տիպարն է ան՝ նրբազգած,  
պայծառ, յափշտակուող ու սրտայոյզ, թախմա-  
լից, զուարթ նոյն ատեն, զուարթարար մա՛նա-  
ւանդ:

Այս իմաստով, օրինակ, նոր հատորը՝ «Ի-  
րիկնահաց», շատ չի տարբերիւր «Բացուիր, Սե-  
զամ» անունով կնքուած նախորդին ընդհանուր  
միջավայրէն ու միջոցորտէն, այնուամենայնիւ,  
նոյնը չէին կրնար ըլլալ անոնք եւ նոյնը չեն,  
կամ այնքան նոյնն են, որքան նոյնն են անցեալ  
տարուան գարունը եւ այս տարուան գարունը,  
անցեալ տարուան վարդը եւ նոյն թուրին այ-  
սօրուան փթթումը, անցեալ տարուան աղբիւրէն  
վերցուած կոյժ մը ջուրը եւ այս տարուան կոյժ  
մը ջուրը, թռչունին երգը, ամպը, արեւուն ճա-  
ռագայթը, հողին բոյրը:  
Մշտահոլով բնութեան պէս ու հետ հարով-

ւող խոռնուածքային իր այս դիժին անմտօթ  
չէ Սահեան ու դժգոհ չէ ի վերուստ իրեն ըն-  
ծուած այդ մասնաւոր շղթային համար: Ընդ-  
հակառակն, հպարտ է անով, որ բնական բիւտ  
ըլլալէ ետք՝ վերածուած է զիտակցուած փելի-  
ստփայութեան:

Ահաւասիկ համեմատութեան օրէնքով կա-  
տարուած կրկնութեան քանի մը օրինակներ:

Հազար անգամ ինձ կրկնում եմ ամպի պէս,

Ուրիշ մը՝

Ազրիւրները մանկութեանս կրկնում,  
Գարեյն ի վար անցն եմ տալիս ու գնում:

Երբուրէ տեղ մը՝

Ժպտալ լոյսի պէս, ամպի պէս լալ, —  
Կրկնելով կրկնել բնութեամբ:

Նոյնն է եւ աշխարհը՝

Աշխարհ իմ, իմաստուն մանուկ,  
Ամէն օր կրկնում ես գուր քեզ,

Գարձեալ՝

Ինչքան էլ քեզ «կրկնում»,  
Գեռ բանաստեղծ ես մնում,  
Աչքերդ վկայ:

Կրկնութեան մասին եզած ակնարկութիւննե-  
րը մէկտեղեցինք, ընդգծելու համար կրկին, որ  
պարտոյն յանկերպային չէ հոս, այլ՝ նրբերան-  
գային:

Կարևորը, անշուշտ, գոյություն ունեցող երևույթները չեն, ամառը չէ, ոչ ուլ աղբիւրներն են, լոյսը կամ միւսները, այլ՝ զանոնք մասնատր վիճակներու մէջ բռնող ու սպիտակ թուզթին վրայ շարժման մնայուն լծակներով օժտող շտրհն է: Միևնոյն պատկերին, կարկուտին կամ շարժումին մէջ նոր շող մը, հունչ մը, սոժ մը կարենալ սրտալու բեղուն ոգևորութիւնը:

Յիշատակուած նախորդ հատորին մէջ Սահեան ունէր պատմութիւնը, աւելի ճիշդը՝ հեքիաթը, խորհուրդը գետի մը, — հասանքն ի վեր սլացող գետ մը, իսկ ներկայ հատորին մէջ ունի նորէն գետ մը, հաւանաբար դարձեալ Ոչոտանը, դարձեալ նոյն կիրճերուն («Այտեղ, ի նարկէ, ձեզ հետ չեմ վիճում»), բայց գետը նոյնը բլլալով հանդերձ, նոյնը չէ անոր հոսանքն ի վեր կամ հոսանքն ի վար տեսնուած մղումը, թափը, անձնատրուածները, մարդկային կեանքին ու բանաստեղծներու ճակատագիրին առնչուող վաշկածներ լուսաորելու միտումները, ինչպէս նաեւ՝ հայրենիքի ու յաւերժութեան հասկացողութիւններուն հաղորդուած նոր որակը:

**Առաջին գետը՝**

Ինչ-որ խորհուրդ կայ մի անպատմելի Լուրթ ալիքների լարերիօրնուսում-Գետը ներքեւից վերեւ է հոսում, Չուաղբումն է կարմրախայտերի: Նայում եմ գետին ու խորհում եմ ես, Յզացումներս էլ, լինում է մի պահ, Գնում եմ դէպի տիումները պազ. Կարմրախայտերի վտառների պէս:

Կարմրախայտերու կենտրոնայ խոժոժումով հոսքի հակադիր պատրտոր մը յայտնարերսոյ գետին վիճակը բանաստեղծական ինքնարու ոլատակեր է հարկաւ, բայց միայն այդ չէ թելագրուածը, անկէ հնարաւոր չէ անջատել խայտանք առթող մեր բնաշխարհին կարմրախայտային հարստութիւնը: Ու գարդացումը բանաստեղծութեան, որ երբ տկանքներէն կ'աննէ իր թափը, կ'օժտուի «ներքեւից վերեւ» գետեր հոսեցնող ուժով մը:

Ու ահաւասիկ երկրորդը, «Իրիկնախց»ի գետը, դարձեալ ամբողջութեամբ.

— Ի՞նչ ես նախընտրում, երբ հաստատ գիտես, Որ երկրի վրայ  
Ու երկրից անդին սուտ է դրախտը:  
Ասա, ազանու համապագորեայ  
Հաւատարմութիւնն իր բնի հանդէպ,  
Թէ արագիլի իմաստուն գաղթը:  
— Ծս նախընտրում եմ գետերի բախտը,  
Որ եւ մնում են սեփական տանը,  
Եւ հեռանալով գնում, խառնում  
Անխում ծովերի, ովկիանոսների  
Բուռն ու ալեկոծ յաւերժութեանը:

Կարելի չէ ստուգապէս ըսել, որ գաղափարակա՞ն թելագրանքներէ, թէ անձնական փորձառութիւններէ բաղուած է բանաստեղծութեան «գրախտի» բաժինը, բայց միջանկեալ բան է՝ անկա եւ բոլորովին անյարբը է ընդհանուր կատային՝ «երբ հաստատ գիտեմ, որ երկրի վրայ ու երկրից անդին սուտ է դրախտը» երկուբուկէս տողը: Գրախտին սուտ կամ իբաւ բլլալը վճռական մ'չ մէկ նշանակութիւն ունի կատարուած նախընտրութեան հետ: Եթէ գրախտը իբաւ ըլլալը՝ օր մը գոյն վայելելու հետանկարին համար պիտի հրաժարէ՞՞նք միթէ՞ երկրային սերունդներէ ու նախընտրութիւններէ: Չենք կարծեր:

Հակադրութեան միջանկեալ եզրին առիթով կատարուած այս միջանկեալ դիտարութեանն անկախ՝ հետաքրքրական են Սահեանի գետային գիտերը, մէկուս մտակցումը եւ միւսին հետապումը, եւ երկուքին ճարգկայնացումը՝ «այսպէս անհանգիստ» մօտ ու ճանկական տունը՝ մնալու բարդ ապրումներու հոլովութի մը մէջ:

Հասանքն ի վեր ու հոսանքն ի վար ընթացող այս երկու գետերուն պէս ու իրարմէ ասոնց ունեցած տարբերութիւններուն նման՝ Համօ Սահեան նախորդ եւ այս հատորին մէջ ունի լոյսեր, շշուկներ, ալիքներ, մշուշներ, ախունքներ, հաւերքեր, լորեր, սարեր, քարակներ, քարեր, լիճեր, հովիտներ, ու ինքն իր մէջ սարուած մարդկային պահեր, — սաղմապի, խնդութեան, կոտորածի, բերեղացման, սիրոյ ու անքնութեան ժամեր, գինովութեան ու մորմոքի. ինչ որ բնութեան մէջ կայ, ինչ որ բնութեան մէկ մասնիկը համարուող բնական մարդուն մէջ կայ՝ կ'ան հաս, ամէնքը ներքին նոյն միջոյրակն բրած, բայց ոչ մէկը միւսին նման: Օրինակը տալինք արգէն: Երկու գետերը:

Մանրամասնեք զէչ մը աւելի:

Վերջերս, 23 Մարտ 1979 թուակիր «Լր Մոնտ»ի զբական էջին լոյս տեսած հարցազրույցի մը մէջ, Կոթանտունին մօտեցող Մարտ Ծրել կը յայտարարէր.

«Նկատեցի. որ յաւերժութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ արդէն գոյութիւն ունեցող բաներուն կրկնութիւնը»:

Գժուար է ըսել, թէ Մարտ Ծրել ե՞րբ նկատած էր իր «նկատածը», բայց գիտենք, որ Համօ Սահեան տարիներէ ի վեր սպառը կ'ընէ նոյն մտերմութեան, «գոյութիւն ունեցող բաներուն» չկրկնուած երևանքը կրկնելու եւ իր հոգիին մէջ կարօտին բացած տարածութիւնները ամբողջացնելու մնայուն տենդէ մը բնուած:

Իրեն (էբբ թէ) յիշեցուած կրկնութեան այդ երևույթին անդրազատնալով, տեսակ մը իր դրական կենսագրութիւնը բացայայտող մէկ բանաստեղծութեան մէջ, ան կը զրէ.

Ու կանգ եմ առնում կրկնութեան վրայ,  
Փորձելով պարզել խորհուրդը նրա...

Ու պարզուած խորհուրդին համաձայն, տե-

զի ունեցած կրկնութիւնը երեւութական է, ու կրկնուածութեան սպասողութիւն ձուգող ուրիշ բան չէ, եթէ ոչ «ուրիշ մի կնճիռ», «ուրիշ մի թրթիռ», «ուրիշ մի փրփուր», «ուրիշ ծիածան», «յասակին ուրիշ մի քար», «ուրիշ նկար»։

Ուրիշ՝...

Կը նշանակի, թէ եղածը կրկնութիւն չէ, այլ՝ շարունակութիւն, սարբեր իմաստներ, ներբանդաներ, հնչեքանգներ, համեր ու գողեր բռնելու, սպրկեցնելու ներքին հրամայական, հարկադրանք։ Ատիկա, ինչ խօսք, նիւթի ու արարչահնչութիւն սով մը չի մատներ, կրկնուողին բազմածալ խորհուրդը կը բացայայտէ ու կրկնողին ընկալելու բողման շոթհար։ Ամէն նիւթ չունի այդ յատկութիւնը ու ամէն բանաստեղծ չունի հրամայական այդ ուժը։ օժտուածները միայն կրնան որսոյ անորսային, շատնայ, շատութիւնը կտահել։ մեծ է «կրկնութեան խորհուրդը»։

«Կրկնութեան խորհուրդ»ին մէջ, բանաստեղծը կը թուէ նաև ուրիշ պատճառ մը, նպատակը իր տեսածներուն, գործ

Տեսնում՝ եւ յետոյ ձեզ ցոյց եմ տալիս, Որ ձեր աչքերը տեսնել սովորեմ։

Համօ Սահեան («Աչքերը վկայ») սպասով կարողութիւն մըն է այս գետնին վրայ։ Առանց վերապահութեան կարելի է ըսել, որ մարդկային իր թրթռուն շաղխելի կողք, տնոր ամէնէն սուր զգայարանքը տեսողական ուժն է, որ այնքան կ'ընկալութիւն, թարմութիւն ու հրապոյր կը հայթայթէ բանաստեղծութիւններուն։ Դեռ վերջերս, «Սովետական գրականութիւն» (թիւ 1) ամսագիրին մէջ լոյս բնծայած իր նոր շարքին մէջ բանաստեղծութեամբ կը յիշեցնէր։

Թող որ աչքերիս լոյսը խաւարի,  
Թէ առանց սրտի մի բառ եմ գրում...  
Բայց դուք ներքէ ինձ ու եղէք բարի,  
Մէկ-մէկ էլ աչքով,  
Մէկ-մէկ էլ աչքի համար եմ գրում։

Բնութեան հետ այնքան մօտ ու անոր հետ գրկիլ նոյնպէս բանաստեղծին համար նկարչական հակումը ինքնանպատակ չէ, բնական մթղում է։ Բաշխուելու բարիտով մը ծնածներուն համար նոյնիսկ հրամայական է տեսնուածը ուրիշներուն հողորդելու անապարանքը։ Տեսնելու արժանի բան կայ խաբարհի մէջ, մասնաւորաբար մէր աշխարհին մէջ, հրաշայիքներ կան, որոնցմէ կրկնուած ապրիլը՝ կ'ըսէ յաճախ Սահեան ու ըսել կ'ուզէ միշտ՝ կրկնաբններուն սարսափելին է, ու կը խայտայ հողին, երբ տանն չեա է, եւ արիստալով կ'ափոսոսայ, երբ հետու է։ Ու փոխ առ փոխ կ'ապրի եւ զգայի կը զարձրէ հրճուանքը, զայրոյթը, որբութիւնը, պատնէութիւնը։

Իմանալ մայր բնութիւնը, որ մարդկային բնութիւն մը ունի եւ իմացնել մարդոց, որ ի-

մանտն բնութեան հրաշքը, մանուսնոց ուր բնութեան մասնաւոր մէկ անկիւնը, որ մեր կրկնի է, անոր ձգողականութիւնը։

Բնութեան ընկալումները այնքան փառ հրապոյրներով, աւելնով ու մարդկայնութեամբ օժտած է Սահեան, որ չենք կրնոր երբեմն մեր տեսածները՝ արեւը, ամպը, անձրեւը, մէր տեսածները չգիտել իր աչքով, ու չկարօտալ միայն իր կողմէ կոտորածներուն։ Սահեանի գրականութեան զարդանիքներէն մէկը։

Բնութեան ծոցին մէջ ամէն ինչ կեղեցիկ է ու թափիչ է Սահեանի համար, ու անմիջական է իր արուեստը, որ գիտէ այլակերպութեան զոտանիքը, ու սալ գիտէ՝ զեռին խորհուրդ մը, զոյնին՝ շարժում մը, լերան՝ նկարագիր մը, հողին՝ յուսութք մը, քարին՝ լինելութիւն մը, արեւին՝ արբեցում մը։

Եթէ Համօ Սահեան Հայաստանի մէջ ծնած չըլլար ու բախտաւորուած չըլլար հոն ապրելու իրականութեամբ, չենք դիտեր, պիտի ունենա՞ր արդեօք իր այսօրուան բանաստեղծական աւելներ, կամ՝ Եթէ Հայաստան Սահեանի մը ծնունդ տուած չըլլային, այսօրն համարփիռ պիտի ըլլային անոր կարգ մը անկիւններուն հրապոյրները՝ աշխույժին, յուսնային ու կիշերային պահերու։

Այս արդիւնքը, ի հարկէ, հիմք ունի բանաստեղծին ճանաչողական խոր պատճառը ու ամէն ոք գիտէ, որ ճանաչումը աստիճանային տրեւայնելն է ստեղծարարական արարքին մէջ։ Վանդի ճանաչումէն կը սկսի թափանցումը, թափանցումէն՝ խորհուրդին ընկալումը, ու ընկալման ամբողջականութենէն՝ հողորդարարութեան թարմութիւնը։

Երեւի այսպէս եղած է միշտ եւ սրել է երեւոյթ բուն ու բանաստեղծութիւն չէ գործած, ասանց ենթակային ու նիւթին զօրեղ փոխներկործման, ամբողջական միաձուլումին։

Նոյն պայմաններով է, որ Համօ Սահեանի մօտ, օրինակ, քարը քար չի մնար, այլ ամբողջ մշակոյթ մը կը ծաւալի անոր վրայ, կը զգացուի մօտը կատարուած շնչառութիւնները, խորքին թափած լոյսերը, նոր մարդուն հետ ունեցած բարխուսն ու խոստմանից սուղնութիւնները։

Ոճական համակարգի վերածուած այս փոխարարներութեան մէջ երբեմն դժուար կ'ըլլայ նայնիսկ ճշդել, թէ ո՞վ աւելի բուն, կենդանութիւն, երանկ ու շարժում փոխանցած է միւսին, բնութիւնը բանաստեղծին, թէ բանաստեղծը՝ բնութեան։ Մինչեւ անդամ երբեմն կը զրատ, որ Սահեան տարբացած է բնութեան հետ, ու սահանացած են մեր բնութեան կարգ մը անկիւնները։ Հով մը կ'անցնի Սահեանի բառերուն մէջէն՝ հայրենի հովը, մարդ մը կը խօսի բնութեան մէջէն՝ Սահեանի լեզուն։

Օրինակները շատ են։

Կը հետեւի ուրեմն, որ բանաստեղծի բարձր կուսման արժանի են միայն անոնք, որոնք կը տանին ընթերցողը իրենց նախընտրած տեղը, եւ



Հոն, նախընտրում բարձունքին, անդունդին կամ տարածութեանց վրայ՝ չնչելի կը դարձնեն իրենց շնչած օդը, — միւսը՝ Սահեանի խառնուածքին ամէնէն ցալասուն դիժերէն:

Չգտել եմ եւ ինձ նման լինելի.  
Եւ նման լինելի բնութեանը:

«Ինձ նմանը» ինքն է, մարդը, որ մէկն է արարչութեան հրաշալիքներէն, ու բնութեան նման, որ էլ կրորդ հրաշալիքն է, ու կրբորդ հրաշալիքը՝ այդ երկուքին միաձուլումը, — բանաստեղծութիւնը, մարդուն գերագոյն արարչութիւններէն մէկը, որ կը ստացուի, երբ հնարաւոր ըլլայ զա՛րձեալ

... Արարողի խոնարհութեամբ  
Սխալկից լինելի բնութեանը:

Ուրիշ ուժի մը եւս «սխալկից» է Համօ Սահեան, ժողովուրդին, ժողովրդային բառ ու բանին:

Պիտի բուէր յիշել պատկերներէն մէկը միայն, ընդամէնը 2) ասոյնոց «Վիպակ»ը, պատմութիւնը տնո՛ր, որուն «մեղրամսի վրայ ձիւն մազուեց»:

Անհրաժեշտ պղտիկ մանրամասնութիւններէն առաջ, անհրաժեշտ ուրիշ մէջբերում մը,

Երբ գտել եմ իրար  
Ներշնչումն ու հողը,  
Եւ իմ արեան մէջ է  
Ճշմարտութեան դողը,  
Ինձ չէ վախեցնում  
Արձակուևակ տողը:

Իրեն հետ, այդ պայմաններուն մէջ, ի հարկէ, ո՛չ ոքի վտի կը պատճառ արձակուևակ տողը, որովհետեւ երբ ճշմարտութեան զօրը կնքէ զիրար դտած «նեղունումն ու հողը», շունչն ու նեւթը, արձակուևակ տո՛ղ չի մնար արկէն: «Իրիկմանաց»ին մէջ «նեղունումն ու հողը» իրար դտած ըլլալու պայմանով աչքի զարնող «արձակուևակ» քիչ բանաստեղծութիւններ չկան, որոնցմէ մէկը անպայման վերը յիշատակուած «Վիպակ»ն է.

Առադատուն հագի դուրս ելած՝ քանոթեակ կրիտասարդը պատերազմի կ'երթայ. թիկունքին՝ աշխարհ կու զայ մեղրամսիս յղացուած դուստրը: Կ'անցնի չորս տարի, բայց երիտասարդ հայրը տուն չի մերձադանոր. տղան տարիքով կ'անցնի հայրը, կը հասնի ամուսնութեան տարիքին, կ'ամուսնանայ ու կ'ըլլայ ա՛յլ չորս գուակներու, որոնց մեծ մայրը՝ քանէն վար տարիքի մը այրի մնացած կիներ, կը պտտէ քան տարեկան մեծ հօր քաջութիւնը, «Եւ աւարտում է իր խօսքն այսպէս.

Թող ծառը ծաղկի, արտը ծաղկի,  
Թող ծաղկի քարը միմչել անգամ,  
Ուրախութեան չափ չլինի...

Եւ էլ աշխարհում ոչ մի անգամ  
Քսան տարեկան պապ չլինի:

Միայն վերջին պատերազմին հազարաւոր Երիտասարդներ քսան տարեկանին պապ կգան կամ հայր բնու շեղան, ու հազարաւոր տուներու մէջ նման սղբերգութիւններ պայթեցան ու զսպունջան, եւ ժողովրդային տարերքին մօտ աղբոս բանաստեղծը, բնական է, պիտի պահէր հարսպատութիւնը միջնորդին ու հերաներուն արտայայտական պարզութիւնը, առանց ոճաւորման որեւէ փորձութեան դիմելու, բաւարարուելով ինքն իրեն բաւող յարումին խորունկ մարդկայնութեամբ: Պատերազմի թոհուրահին մէջ եւ սպա խողովրդական օրօք կրկարածուած խաչածեւ յուզումներուն փորձառութիւնը գեր ունի հարկաւ այս արդիւնքին մէջ: Սահեան լաւ կը ճանչնայ այդ սղբերգութիւնը: Իբրև զինուոր թէ՛ կրակներու վրայ դանուած բանաստեղծներէն է ան, որ ընկերներ ձգեց պատերազմի դաշտին վրայ, տանձինն կամ ժողովուրդին հետ լեց ու աեսաւ «թեւառի լուրքը, անիւն մարդիկ», այլ ճիշդ ժողովուրդին սէս դիմաւորեց հարուածը ու վեհութիւն միայն հաղորդեց սղբերգութիւններ պատմող բառերուն:

Սխալած չէնք ըլլա՛ր, Լի՛լ բանը, որ այս հատորին մէջ բանաստեղծը առուելադոյն չափով մը օղատարծած է ժողովրդական տտաղձը, պարզագոյն մարդոց ծով յուզումները մբմնջացող ձեւերէն մինչև տառելայոյն աշուղին ծովացած շորհներուն լեզու տառոց ստացուածքի յարգուն կերպերը:

Անձնականին մէջ ժողովրդականը եւ ժողովրդականին մէջ անձնականը խորհրդանշող ընդհանրութիւնները քիչերուն կողմէ նուազալի հանդամները կգտնեն արուեստին մէջ եւ Սահեան քիչերէն է արդէն, որ ունի այդ արուեստը, կ'սպրի իր ընդգրկումներուն հմայքին մէջ ու հմայիչ կը դարձնէ մեր ժառանգութիւնները, փորձութիւնները զիմայրուելու եւ շարունակականութեան բնագոյն կտալելու մեր ժողովուրդին անկրկնելի մշակոյթը, հոգեկան արութիւնը անոր, վիշտերը յաղթահարելու վեհութիւնը, տղամարդութիւնը:

Այս հակումին արեւթեր կամ հակադարձը՝ ճշմարտութեան ուրիշ գիծ մը, ա՛յն՝ որ բուն շահագրգռութեամբ անկիւնի մը կապուած խառնուածքները երբեք անտարբեր չեն կգտն աշխարհի միւս մասերուն նկատմամբ եւ զուպահեռներու կամ հակադրութեան ճամբով ստուգած են անոնց ծոցին թաւալած կեանքը, գտած կամ կորսնցուցած ճշմարտութիւնները:

Նոյնն է եւ Համօ Սահեանի պարսպան:  
Որոտանի «կերճում» թէ Զանգեզուրի ու Գեաղարկի վրայ ան յաճախ բնդհտեց իր սէրը, երգը, արբեցումները, ողոթները, ու երգող, սիրող, արբեցող ու աղօթող մարդու իր նախասի-

բութիւններով չափեց իր ժամանակը, միշտ ներսին առնելով իր մղումը, մնալով հաւատարիմ իր բնօրինակ, առանց բանաստեղծի կոչումը վերաբերող տարրեր խառնելու իր խոհերուն:

Այս ճամբով է, որ ծառին, անտառին, ծաղիկին, քարին ու քարափին, լեռան ու ձորերուն մտերմութենէն անդին, և արիւնի մասնաւոր հունաւորումներէն դուրս, պարզապէս սարածութեան մէջ ընչպէս մեր ժամանակի մարդուն սիրանքներն ու անձկութիւնները ևս եկած ու լեցուած են «Իրիկնախաղճին» մէջ: Հալատակ կեղծ, դացող և դեռ բարբառող խոստուններուն, ան՝ մարդը, ըստ բանաստեղծին, գեռ կը մնայ հողածին, իր բացատեղան կողմերուն աստղարէկ բացող յախուռն զործօն մը:

Իմաստունները ինչքան խելօք,  
Ինչքան շիտակ խօսքեր արիւմ,  
Բայց, ի՞նչ արած, անտէր մնան,  
Մուռն ու սուտը չվերացան:

Իմաստուններուն շտկել չկրցածը չկրցան շտկել նաեւ գիտութեան մարդերը, որոնց սաւառնումները, մտրակային նուաճումները և կատարած երեւութեան վերափոխումները, ըստ բանաստեղծին, ոչինչ են, անարժէք, երբ խոստացուած երջանկութիւնը չէ բռնած աշխարհը, ուր, քուն մասն խիղճին քովն ի վեր՝ կուրբուս-գծուին մահուան թակարդները և սարսափն ու վիշտը կը շարունակեն իրենց աւերը հողիներուն մէջ:

Այս գնահատանքին տակ կ'իյնան «Թոն-բատնից երկնաքեր մասն» մեր ժամանակի մարդուն անցման արագութիւնը, Միւր-կաթիւնը նուաճելու և «աստղի մէջ աստղեր վառելու» անոր բոլոր սիրանքները, բոլոր՝ ոչինչ, երբ մեկնուել մահարեւր գործիքներ կը տեղաւորուին դարձելու ու բնական մարդը, նոյն նուաճումներուն հետեւանով կ'աղճատուի բուրբովին, երկնաքերներու թէ «աստղեանեայ լաբիրինթոսներում», երբ ներքնապէս կը հարստահարուի բարձունքներու վրայ կամ «մեր այս երկնասոյգ քաղաքներէ մէջ»: Այս ցուրտ, վառարկան, լըղըրճող իրականութիւններուն դէմ է, որ բնութեան ու բնական հրաշալիքներու կողմէ կը ձգէ իր քարափը, ձորը, լորը, մարդը, մարմանդը, դայլայիները, բոլոր մեզմ ձայները ու կը սախուի սրտատալ, մնալով միշտ ինքը, հաւատարին:

Իմ չլինելուց ես չեմ վախենում,  
Ես չեմ վախենում իմ բաժին մահից:  
Սակայն ծնկներս դողում եմ անվերջ  
Մեր յոգնահանքս, բայց խեղճ ու անճար  
Այս մոլորակի  
Անվախճանութեամ վախճանի ահից:

Ո՛չ կործանարար ուժերու, ո՛չ կորիզային գնեքի, ոչ ալ ահարկու որեւէ ուրիշ նիւթի յիշա-

տակութիւն, բայց այդ ամէնուն պոռոցայ մրդաւանջը կայ վերի վեցեակին մէջ, որ ժամանակակից կեանքին սահեանական ընկալումներուն մէջի ցայտուն վիպաութիւնն է, խոսքեամբ թէ սփռնութեամբ:

Չարեւոյն Լաք, չունինք թերևս բանաստեղծի կոչումին ու բանաստեղծութեան էութեան մասին սեփական կարծիքները շոյաքի դարձուցած երկրորդ բանաստեղծ մը, որքան բրած է ասիկա Համօ Սահեան: Ուրիշ բանաստեղծներու աշխարհը, ներդրումները, բախտը, ողբերգութիւնները, ինչպէս նաեւ իր խոհերուն կէտը, սպրտմաներուն տարողութիւնը, չափերը, եղանակները, սիրտին մօտ պահածը և քամիին տրամածը, նորին ու հինին բողբոջատեղան արդիւնքը կամ այդ փորձութեան անհեթեթութիւնը («Նորքն ու հինը ո՞րն է»), բոլորը խոսոված են Համօ Սահեանը ու գիրքերու էջ դարձած:

Արուեստի տեսութիւններուն շուրջ բարբառած մտորումներ են նոյնպէս քիչ տառջ յիշատակուած Երկու գետերը, սրունք կը յուզեն իրաւութեան, սպային խորքի և միջապային մակարդակի հարցեր: Ներշնչուել «պաղ» ահունքներէն, աղայինը՝ հաւատարմութեան միջապայէն, ու այդ Երկուքին դորութեամբ՝ բոց ծաղիկներու բունն ու ալեկոծ յուերթութեան խոսնընելու փոռքը, սպահով ու աննորայ: Ունենալ ինքնութեան երաշխաւորային մը, էլլել սահմանէն, խոսնուել ծովուն և ալեկոծիլ ինքնօրէն, առանց ընկուղման վախի, յաւելումներ բերած ըլլալու իրաւունքով:

Ազգայինի և միջազգայինի նմանութիւններուն ու տարբերութիւններուն մասին եղած խօսակցութիւնը հրատարակ խնդրի եղած է միշտ և անոր բերած Համօ Սահեանի բանաստեղծական լուծումը փրօֆեսորական կուսակցութիւններէն աւելի տերմոսոս կը թուի, սրովհետեւ բնութեան սնուտ սկունքներէն կ'առնէ իր լոյսը և օժտուած է անմիջական հնչեղութեամբ:

Ես նախընտրում եմ գետերի բախտը...

«Բանաստեղծները», «Կարսիա կորգա», «Ճորտեր եմ դառնում բռնակալները», «Ես ծառայ չեմ», «Իմ երգերը ձեզ անձամբ եմ», «Գեռ ամառիկը որոտում», «Նայեցե՛ք խորքին», «Ես իմ շիկացած մամոնակներին», «Թէկուզ բիրտ ու վայրի», «Ես այժման բարդ ու հասարակ» և «Կրկնուրբան խորհուրդը» խորագրերներով ու սողերով սկսող բոլոր բանաստեղծութիւնները նիւթ ունին ստեղծագործական այդ բնույթաւոր, անոր տեղերը, բնականները, բերկրանքներն ու խաչակրութիւնները:

Վէ՛ճ կայ այդ բանաստեղծութիւններուն մէջ, մազէ անցած բաներու լուր, հաստատումներ, հերքումներ, յիշեցումներ, լուռ պայքար մը, ա-

դերս ու զգաստութեան հրաւեր, կան մա՛նաւանդ իբր աշխարհին սահմանները ճշգրտ եւ սկզբութունքները տարագրող խիստ հաւաստի ձեւակերպումներ:

Ինքզինք հողի, քարի, ձորի ու սարի երգիչ կը դաւանի Սահեան, «օրերի եւ դարերի» երգիչ, պարզելով միաժամանակ ոճական իր նախասիրութիւնները, կատուցողական յատկանշիկները հրդերուն, որոնք ձեռք բերուած են երեք ուրակներու զուժարումով՝

Քո թարմութեամբ  
Անկարելի,  
Քո վարժութեամբ  
Անկարելի,  
Քո պարզութեամբ  
Անկարելի:

Քարմութիւնը՝ պայման, վարժութիւնը՝ կենսական, պարզութիւնը՝ պսակ:

Համօ Սահեանի բանաստեղծութեան մէջ մտնող տնճը առաջին խի ակնթարթին կը հաստատէ արեւնատար այդ տարբերուն գոյութիւնը եւ հրճուանքով կը հաղորդուի անոնց արձակած բոյրերուն, լոյսերուն ու ճշմարտութեան բերկրանքին:

Ի հարկէ, միշտ նոյն արդիւնքին չի յանդիւր բանաստեղծը, զրուած ամէն բանաստեղծութիւն իր սկզբունքներուն համապատասխան լիութիւն մը չի ստանար: Պարապայտական այդ տկարութեան անզլտակից չէ նաեւ ինք, եւ ինքն է դարձեալ ըսողը:

Կեանքս դժուար է մտնում տաղի մէջ,  
Տողս կեանք մտնել չի կարողանում:

Ստեղծագործական նոյն սկզբունքին մասին է դարձեալ խօսքը: Կեանքը տողի մէջ պէտք է մտնէ, որպէսզի տողը արին ունենայ ու բարախէ, տողը կեանքի մէջ պէտք է մտնէ, որպէսզի բան մը թնայն ներսը ու բանաստեղծութիւն ըլլայ: Այլպէս մէկու մը ո՛չ կեանքը պէտք է մտրոց, ոչ ալ տողը: Համօ Սահեան այդ նախանձարնչութեամբ վարուած է իր կեանքին ու տողին հետ, այնուամենայնիւ, կարելի չէ ըսել, որ իր մատուցածը տողի մէջ մըտած կեանքն է միշտ եւ կեանքի մէջ մտած տողը: Մարդկային են նաեւ այսպիսի պահերը: Մարդ ամէն օր նոյն բարեխառնութիւնը չի կըրնար ունենալ, ինչպէս ամէն օր կամ ամէն նիւթի հետ բանաստեղծ ըլլալ, մնալ: Ըստ մեզի, այդ կարգի կենսագրիկ կամ սակաւարեւն տղերով կառուցուած են «Ալիքը», «Սարերի գրլխիմ ձիւն տեսայ», «Ինձ վտտեհիլ էին», «Մտակի ձորձորն ի վեր», «Շաղառ, շաղառ մուր էր», «Ամպերս վաղունցիմ անցան», «Պայքում է հունտը հողի տակ» բանաստեղծութիւնները եւ հասնաբար նոյնքան ալ ուրիշներ:

Սահեանի բանաստեղծութիւններուն մէջ կոտհելի է նաեւ ուրիշ տկարութիւն մը, որ մէկ զգալի է նոյնիսկ համոզ կտորներուն առիթով, ինչպէս են, օրինակ, «Քարը» բանաստեղծութեան որոշ մասերը: Տասնթէկ տուն կը հաշուէ բանաստեղծութիւնը, ուր երկար շունչով և ճանաչողութեան խորութեամբ նրբօրէն կենսագրուած է հայրենի քարը ու յանգած վախճանական սա ձեւակերպումին:

Քարը՝ անցեալ ու ապանքի,  
Քարը՝ երթ...  
Քարը՝ Գեղարք, քարը՝ Գառնի,  
Քարը՝ երգ:

Ինքն իր մէջ անշուշտ գեղեցիկ է մէջբերուած քառատողը: Երթի եւ երգի ոգեւորութիւն ներշնչող քար է մեր քարը եւ անոր դերագոյն արտայայտութիւններէն կը հանդիսանան Գեղարքն ու Գառնին: Այդ մասին չէ սակայն խօսքը: Բանաստեղծութեան հիպոկրսրդ տունին երկրորդ երկտողը կ'ըսէ.

Քարը՝ գորեղ, քարը՝ զինուար,  
Քարը՝ մեմք:

Արագ անցնելու համար պարզասլա ըսենք, որ եթէ «մեմք»ին յիշատակութեամբ վերջանար բանաստեղծութիւնը, ո՛չ միայն աւելի կը շահէր անոր ճարտարապետական բաժինը, այլև օժտուած կ'ըլլար թեղապիտան ուրիշ մեծ սովորութեամբ: Գառնին ու Գեղարքը աւարտած յաղթանակներու մասին կը վիպեն, մինչդեռ մեմքը ունի շարունակականութեան խորհուրդ մը, հեռանկարային խոստումներով յղի:

Որովհետեւ մեմքը ժողովուրդն է, աւելի ապահով ուժը, մշտնջենական լինելութեան մէջ գտնուող այն գօրութիւնը, որ կրնայ վաղը կամ հեռուոր օր մը տելի մեծ ներգործներ կատարել և նոր Գեղարքներ կառուցել, եւ Գառնի, ու չնախատեսուած հրաշալիքներու առջեւ զնել ինքզինք եւ աշխարհը: «Քարը՝ մեմք»:

Այս մէկ-երկու դիտողութիւնները մեծ բան չեն պահանջներ «Իրիկնահաց»ի ամբողջէն, որուն մէջ վարձատրուած պիտի զգայ ինքզինք ընթերցողը, մանաւանդ՝ ա՛յն բանաստեղծութիւններուն առջև, որոնք կը կոչուին «Ձի քանաչում», «Ձեմ էլ իճացել», «Ես հարուստ եմ», «Գիշեր», «Բաշխուելով բաշխուել», «Ձեք տան տեղը», «Ինձնից ինձ խլեց գգուանիք վայրի», «Մտուերը», «Ու միտք եմ անում», «Ես կը մաղքէի», «Տրարում եմ օրն ի բուն», «Կը որոտամ», «Այս աշխարհի քանապահից», «Բեք մեղայ», «Առանց քեզ», «Ինչ-որ տեղ չկա՞ն», «Միայն քէ վառի», և այլն:

Ընդգծուած նիւթերուն, սկզբունքներուն, որոշ զգայնութիւններուն ու կառուցողական բընազդին եղած պզտիկ անդրադարձներուն առն-

թեր, մենք պիտի ուզէինք խօսիլ Համօ Սահականի արուեստին կարգ մը ուրիշ միջոցներուն մասին, ի՛ մասնաւորի կուտակած «անօգուտ» գեղեցկութիւններուն մասին, բայց արդէն երկարեցան կարճ դրսիստականի մը սահմանուած այս էջերը: Այդ սահմաններուն մէջ կ'իյնային ստուեր բանաստեղծութեան լոյսը, լերան հասակը չափած կայծակին կայուն ցոլքը, կակալներուն մրրիկը եւ, անշուշտ, «Ծննդիմ Գեազբելիս մութն անուշահոտ»-ի մութը, որ լոյսի մը չափ ուժգին է հոս ու լոյս կը նետէ շրջապատին վրայ, գոց աչքերս'ն անգամ տեսանելի դարձնելով ծագիկին, ծառին, ժայռին, ջուրին ու հողին անուշահոտ ձգողութիւնները:

Շարքին մէջ կը գտնուի նաեւ ծովը՝ «Ինքզինք չի քանաչում», որուն մօտ անսպասման կանգ կ'առնէ մարդ, տարուելով այս անգամ Սահականի արուեստին մէկ տարբեր միջոցէն, որ այլաբանութիւնն է:

Ինքն իր դէմ շարժումի ելած, փրփրող, գոռացող, ինքզինք կուլ սուտ ու ինքզինքն փախչող, հանդիսով խորակին կամ ափին ինքզինք փչող ամէնուն ծանօթ ծովն է Համօ Սահականի ծովը, ինքն իր մէջ ննջող ու ինքզինք ահաբեկող ծովը, բայց եղբայրակիչ բնութագրումը բուրբովին տարբեր ակզեր կը տանի րնթերցողին երեւակայութիւնը, կասկէ կու տայ միաժամանակ քանի մը եկթառեխտել:

Ծովը չի խզում ինքն իրեն,  
 Ծովը ինքն իրեն չի քանաչում:

Իբրեւ ծով՝ անոր տարածութեան, գոյններուն, շարժումներուն, ձայններուն ամբողջութիւնը ընկալելէ հետք, ի դէմս այդ հեղուկ ու յարաշարժ տարածութեան ո՞վ ունի արդեօք բանաստեղծը մտքին մէջ, ընկերութիւնը, վարդապետութիւններէն մէկը կամ մի՞ւսը, պետութիւններէն մէկը կամ մի՞ւսը, ո՞վ: Թերեւս բուրբ ալ, թերեւս բուրբին շարժիչ ուժը հանդիսացող մարդը. մարդկային կացութեան նկարագրութիւնն է հոս ծովը, ծովը մարդն է, որ չի խզար ինքն իրեն, «Ծովը ինքն իրեն չի քանաչում»:

Անիմանալի թահուրհ, սպասիչ տակնուլքայութիւն, զուր բարդութիւն, դարձանք, զոլքուած յուզում, խոր դառնութիւն մէկ կողմէ, եւ ժիւս կողմէ՝ կեանքին միւս երեսը, պարզութիւնը, հրճուանքը, վերաթարմացումը եւ զարմանալու հրաշագոր ունակութիւնը.

Կեանք, բարի լոյս...  
 Եւ քայլ տուր քա «բարի լոյսով»  
 Քսանհագարեորդ անգամ քարմանալու  
 Եւ անիւտ քա ականջին,  
 Որ քեզ վրայ եւ մաքաւանգ գեռ ինձ վրայ  
 Պատիւ ունեմ զարմանալու:

Աշխարհի սկիզբէն ի վեր նոյնն են եղած մարդուն բացուած աշխարհին աւագ երկայթնները եւ նոյնը եղած են տնոնց առջեւ ապրուած հիացքները, զագերը, նոյնը եղած են արեւը, լոյսը, մութը, փոթորիկները, ծովը, հովը, դունավառումներն ու գունտփոխութիւնները, որոնց հանդէպ որդեգրուած վերաբերումներէն կը գանգանուին մարդերը եւ կը զոյանան արուեստին տարատեսակները:

Համօ Սահականի խառնուածքային տարբերիչ յատկանիւններէն մէկը, եւ այդ գծով նաեւ իր բանաստեղծութեան ամէնէն ուշագրաւ առանձնայատկութիւնը պարզ բաններուն առջեւ դարձանալու բուխ արձագրութիւնն է, ու պարզ բաններուն դարձանալի մարդկայնութիւն մը հաղորդելու ջերմութիւնը, անձին անմեղութիւնը, մաքրութիւնը, ծանօթը արժեւորած վերադարձընելու հնարքը:

«Իրիկնահաց»ին առջեւ, իրաւամբ, երբեմն կը թուի, թէ գրուածը մեր գիտցածն է, նկարածը՝ մեր տեսածը, կենսապրումայ՝ մեր առօրեան, կը թուի թէ նորութիւն չկայ, մեկի անծանօթ ոչինչ կը հաղորդուի, բայց ընթերցումէն հետք կը դաաս, որ բան մը աւելցած է սրտիդ, աչքիդ, լսողութեանդ մէջ, խայտանք մը, լոյսի խաղ մը, կշռոյթ մը: Կը նշանակէ, որ մինչ այդ մեր ու մե՛ր միջեւ, եւ մեր ու աշխարհին միջեւ կար մտտամբ գտտարիչ, մտտամբ ամայի ու մտտամբ անխելու մաս մը տարածութիւն, որ պիտի մնար այնպէս, թերի՛, եթէ չողողուէր բանաստեղծին շունչով, զունային կասկածներով ու ձայնեղէն հրապոյրներով: Վերջին տառնամեակին՝ այլակերպելու այս յատկութիւնը քեզ անգամ դաւաճանեց Համօ Սահականին:

Երեւի նման առիթով մըն է, որ ժան Ռոստան արտասանած է իր նշանաւոր մէկ խօսքը.

«Իսկական գրողը ա՛ն է, որ կը զարմացնէ մեզ՝ ըսելով ա՛յն, որ մենք վաղուց գիտե՞նք»:

Կ'արժէ նաեւ ընդդէմ «Իրիկնահաց»ի մէջ աչքի դարնող Համօ Սահականի ոճական մէկ այլ յատկանիւնը, որ տարբերային կարգ մը ուժերու ու բացասական գործողութիւններու ազնուացումն է.

Ասեւանգիր, ով առաւօտ,  
 ձերմակ խաւարն իմ յօճեքին:

Քիչ կը մնայ, որ ընթերցողը հրճուի ճերմակներու սահմանին հասած Սահականի տարիքին համար, ինքզինք երախտապարտ դրայ այդ փաստին, այլապէս դժուար պիտի ըլլար երեւակայել այս հնչեղ հակադրութիւնը, այս ներմակ խաւարը, որ սպիտակ ունի իր մէջ, եթէ չհաշտենք բանաստեղծական սղիտակութիւնը: Երեւի տողջարար թախիծ բացատրութիւնը՝ ման պատկերներու շիճաց զտած են մարդիկ:

Արդարեւ, սկսածը ողբերգութիւն մըն է թէեւ, բայց ողբերգական չէ, սրտասուչ է պարզապէս, իրաւ մարդու մը կեցուածքին զրսեւտումը: Ինչ իօտ, որ միւս կողմէ կ'երեւայ Սահակի գրական տարիքը, որ բռնկելու զօրութեանս վիճակն է միշտ, ա՛յն վիճակը, որ ենթական կը մղէ այսպիսի Լըրտասարգ գեղեցկութիւններ սրտալու: Սահակն յաճախ նման շոգշողուն գեղեցկութիւններու տոջեւ կը գնէ ընթերցողը ևւ աւերկա սնորհ համար, որ բանաստեղծը կը մնայ ծանրաբեռն

**Պատանութեան անհուն  
Պաշարներով**

Գրականութեան պատմութիւնը կը հաստատէ, որ հողին, ժողովուրդին, արիւնին, սուրբներուն, սրմասներուն, ժառանգական ոսկիներուն ամբօրէն կտուցած մարգերը, առ այդ «Ճենճերոզները» ի վերջոյ կը դառնան ամէնէն իրանները եւ բառերը կը հնչեն համադաստասիան վարակումով: Վասնզի սնունք, իրանները, սեւտարս գոհարեբական վիճակի մը մէջ կ'ապրին ևւ իրենց արտաբերած վիճակները կը բխին զոհարեբութեան մղող նոյն ակունքներէն, տաք հանքերէ, վստահելի բովերէ:

Ախ, դու, քայլող մի վանք,  
Ես վանքի ծառ էի...  
Ես իմ առջեւ ընկած  
Մատաղի գառ էի:

Մատաղի դառ՝ ամէն տեղ, վանքին, քարին, հողին, լոյսին, բազմանքներուն, երազանքներուն, կեանք մը արժող բոլոր մարդերուն, կըրակներուն մօտ, մէջ:

Համօ Սահակի դառը եւ մենք, քարը ևւ մենք, ևւ տակաւին բառը ևւ մենք, մեր լեզուն, որ իր տաք ապրումին ու բիւրեղացուցած իմաստութիւններուն մէջ մեր խիղճն է, մեր հացը, հոգու կանչը, համը, «մեր լեզուն ծուխն է մեր տան», կըլուր, «էս քեան խորհուրդը», մեր աբիւրը, մեր բուրմունքը, գոյնը՝

Մեր լեզուն մե՞ք ենք ու կանք:  
Նա պիտի մեր առաջին  
Ու վերջին սէրը լինի,  
Ի՞նչ ունենք էլ աշխարհում,  
Որ այդքան մերը լինի:

Միայն հայրենական բնութենէն վերջուած պատկերներուն մէջ թարմ չէ Համօ Սահակն, այլ՝ թարմ է նոյնպէս այս ամէնուն ծանօթ ու բազմաթիւ բանաստեղծներու կողմէ հրդուած նիւ-

թին մէջ: Նախանձանդիկ նոյն վերաբերումին արդիւնք է նաև այս: Որ իրեն հասած մասերուն կը մօտենայ սրբութեամբ եւ բաժին կը հանէ բնութենէն, ախանքի երեսներէն՝ գոյներ, անտես խորքերէն՝ խորհուրդ, ու ծոցին կազմուած մարդուն մարդկայնութենէն՝ ջերմութիւն:

Խոնարհ երգերիս խոնարհ աշխարհում  
Ու խոնարհ տանը  
Պահպանել եմ ես նրա բառերի  
Գոյնը նախնական, բոյրը նախնական,  
Նախնական համը:

Պահուածը նախնական չէ, «նախնականին» մակարդակով գոյնն է, բոյրը, համը: Ի՛նչ նախնական, երբ ընթերցողին սրտուածը խոնարհաշատ լեզու մըն է, լեռնամասեան լեզու մը, նախասեղծօրէն վճիտ, աստղաջրուած, գարունուտուած, բարդերէնէն հակադրուած մարդերէն լեզու մը, շնորհիւ Սահակին անպամ մը եւս ու սասիճան մը աւելի ամենամերը եղած:

Նըրազպագոգութեան տարբեր ցոլք մը.

Երէկ երգեր էի գրում,  
Բառերն ուրիշ համ ունէին...

Քով քովի դրուած պարզ խօսքեր, որոնք սակայն կը բովանդակեն իրական ու էպպէս ապրումն փորձառութիւն մը: Երբ գրած ատեն, մա՛նաւանգ կըր իրար զտած են «ներշնչումն ու հողը», ու ստացած «ճամարութեան զոգ»ին օծումը, պարզ է, որ մարդ նոյնը չի մնար, ինչպէս նոյնը չի մնար սերած ատեն, ու հըրկիզող գաղափարի մը համար կախ մղած ատեն: Նման պահերու կը փոխակերպուի մարդ, կը հանդիպի իր զերազոյն էութեան, ու նոյն մթնոլորտին մէջ պարզուած պայթուցիկ լարումին մէջ նոր բովանդակութիւն կը հաղորդէ բառին, էակին, կախին: Բանաստեղծութեան պարապային բառը հող է, որ նոր համ կը ստանայ, հո՛ն՝ ուր կեանքը տողին մէջ կը մտնէ ևւ տողը կը մտնէ կեանքին մէջ:

Երէկ երգեր էի գրում,  
Բառերն ուրիշ համ ունէին...

Ասանց բառերուն այդ համը զպալու առաջին ուժին ևւ առանց այդ համը փոխանցելու երկրորդ ուժին՝ չկայ բանաստեղծութիւն:

Ու բառերը, ամէն ոք գիտէ, համ կը ստանան սակզմագործական բովին մէջ միայն, ստեղծուածին հետ ստեղծուելով կամ նորոգուելով, ինչպէս է օրինակը Համօ Սահակի մօտ:

# ԼԿԱՐՃ ԳՐԱԽՈՍԱԿԱՎԱՅՐ

## Ե Ր Զ Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

(ԱՐԱՍ ՀԱՅԿԱԶ)

(ՊԵՂՐՈՒՔ, 1978, 236 էջ)

Արամ Հայկազի այս նոր հատորը՝ «Երջանկուքիւն» խորագրով, լոյս տեսած է 1978ին, հրատարակ հանուելով Համազգայինի «Վահէ Աէթեան» տպարանէն. անթերի տպագրութիւն, 238 մեծադիր, պայծառ էջերով՝ իմբրագրութեամբ Պ. Սնայեանի, որ գիրքին վրայ տարածած է բազմեան ստուգումի խտտագոհանջ հոգածութիւն մը:

Ա. Հայկազ կը խոստովանի, որ այլևս վերջինն է իր գիրքերուն «Երջանկուքիւն» հատորը: Մեծցած ամերիկեան արևին տակ, հաշտուած միջավայրի խորթութիւններուն, վարք ու բարքին: Հանգստեան կոչուած մէկը, որ կրէնիք է, բայց ոչ մեծ հայր կամ պապիկ՝ ամերիկեան թոնկներու լեզուին վրայ: մէկը, որ ապաւինած տարիքին տուած փորձառութիւններուն, գերծ հոգեբանական կաշկանդումներէ, մշակուած միտքի տէր, կը նայի շուրջի մարդոց, երեւոյթներուն, բնութեան՝ լաւատես իր բնաւորութենէն մաս-մաս բաժին հանելով զինք լսողներուն կամ իր պատմումներուն: Եւ որովհետեւ «Երջանկուքիւն»ը լեցնող նիւթերուն առանցքը հեղինակն է, Ա. Հայկազի լաւատեսութիւնն ու հաշտուողական ոգին, կարծիր երիզի մը պէս, երանգաւորումներովը անուշ քմիծածաղի մը, որ կը խուսափի մեծ ու պղտիկ ամէն տաղտուկէ — կ'անցնին ամբողջութեանը վրայէն գրեթէ բոլոր պատկերներուն: Ու կու տան անոնց պատմումի եւ ընկալման յղացք մը, զոր կարելի է կոչել հայկազեան վարքադիմ:

Ա. Հայկազ կը պատկանի սփիւռքահայ գրողներու անդրանիկ սերունդին, որուն արժանները կամբռնեցին եւ արտաշխարհին միջեւ ինկած բացը. այդ կամբռնումը եղաւ նաև առաջնութիւն մը, որով հիները կրցան փոխադրել սփիւռքեան դրական շուկաներուն վրայ Երկրէն բերուած հայեցի սովորոյթներ, նկարագիր եւ վարք ու բարք:

Իր «Երջանկուքիւն»ը, սակայն, շատ բան չունի դասականացած անցեալէն, այլ միայն մէկ քանի պատկերներ — «Հաշտուի՞մ Աստուծոյ

հետ», — Աստուծոյ խոստով եւ հայկական դժոխքը ապրած Նոյեմի մայրիկին խոստովանութեան խոսովիչ նկարը: Առասպելի համ տըւող՝ «Հրձիգն ու տագար շինողը», — միամիտ, բարի ու աստուածալախ Տէր Արսէն քահանային խելացի մէկ արարքին պատմութիւնը, ուր ան գիշերով կ'այրէ գիւղին փոքր, խորխած մատուռը, ի վրն պետական արդելքին, անոր մոխիրներուն վրայ բարձրացնելու համար հայաշատ գիւղի մը վայել տաճար մը: Նշելու համար հայեցի նկարագիրը «Այլիքն ու «Մեր դրացի թորմանեմները» պատմուածքին, ուր վէճի մէջ են հին ու նոր մտայնութեանց վարքն ու բարքը, ողբերգական աւարտով, մնացեալ ամբողջութիւնը «Երջանկուքիւն» հատորին, դրուեցաւ արդէն, լեցուած է ամերիկեան միջավայրէն առնուած պատկերներով: Ա. Հայկազ հոս եւս չի թերանար իր դրական կոչումին մէջ եւ մեզի կը հրամցնէ մէկ քանի տարօրինակութիւններ ամերիկեան սովորութիւններէն: Առանց մեկնաբանութեան՝ հակադրութիւն կը ստեղծէ իր «Մարդը եւ արեւահար շունը» պատկերով: Երբ մենք, Միջին Արեւելքի մէջ, կը ղթանք մուրացկանին ու քացի կու տանք փողոցի մէջ թափառական շունին, Ամերիկայի մէջ մարդոց ուշադրութիւնը կը փնջուի գորովի զգացումով մը հանգէպ արեւահար շունին եւ կ'անտեսուի վերաւոր, անթացուպով մուրացիկը, որ պատկած է շան քովը, արեւին մէջ:

«Արդարութեան պալատից մէջ», որ նախ լոյս տեսաւ «Բագիւն»ի մէջ եւ րիթմերգողին ծանօթ է նիւթը — այլ պատկերացում մըն է ամերիկեան քաղաքացիական պարտուորութեան, ուր սեւէ անձ կրնայ դատական ժիւրիի անդամ ըլլալ՝ 7 տարբորովարձով: Այնքան ալ դիւրին պատկերացում է, երբ նկատի ունենանք սարգոտաշային դրութիւնը, ուր ինկող ճանճ-մարդը այլևս ազատուած չունի...: Ան կաշկանդուած է սարգ-մարդերու կողմէ յօրինուած օրէնքին անտեսութեամբ: Ու տարօրինակութիւններու աշխարհին մէջ ընաւ անբնական չէ, որ պարզ քաղաքացի

մը փորձուի երազել նախագահական աթոռը, բայց հայկազան հիւմուրով մըն այ գանէ իր ձախողութիւնը, խճողուած ու արտուոց խորագիր կըրող — «Թէ ինչպէ՞ս Նոյ նահապետի տապանը վիժեցուց Միացեալ Նահանգներու նախագահական քեկնածութիւնս» գրութեան մէջ:

«Երջանկութիւն»ը յեցնող 20 պատկերները, իրենց տխուր եւ ուրախ խորքով, սյայծառ ու անկայլ սճի մը բարիքներով, հաշտ, մտերմիկ շունչին ապախնած, բարեխառնուած ինքնածին, ջերմ հիւմուրով՝ կը թողուն ընթերցողին վրայ, արդարեւ երջանիկ մարդու աշունը թեւտիտիտ հեանքէն մառ-մառ սեւեռուածի ապաւորութիւն, առաջին դէմքով պատմուած կ'երաշխտուրէ հարազատութիւն մը, որ ուրիշ զբողներու մօտ յաճախ խուսափած է շնորհ մը ըլլալէ: Ա. Հայկա-

զի լեզուն պահած է հին սերունդին հայեցի մաքուր դրոշմը. չի առտալիր ռոմանթիզմէն, հարազատ է իրապաշտ պատմութիւն, բայց հիւմուրը, այնքան մտերմիկ ու ներկայ՝ կը նեակ անոր վերայ քնարական շունչին կապուտ շղարշը, որուն շնորհիւ պատկերները կը լեցուին կենդանութեամբ մը: Ու ընթերցուածը կը գառնայ հաճելի պատեհութիւն. չէք ձանձրանար. քալել կ'ուզէք, սակայն, համոզում կը գոյացնէք, որ հայկական արամութիւն մը պիտի չզանէք հոն, քանի որ երջանկութեան միջավայրը ամերիկեան է, յօրինուածքով ու կլորոթով: Իսկ հատորին հեղինակն ալ զիտէ գիտել, սեւեռել ու յուսանկարչական մեքենայի օժանդակութեամբ տեսանկերը պատկերել, տնայ վրայ նեակելով գրողէտի իր բարեխառն շունչը:

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

# Մ Ա Մ Լ Ե Կ Ը

(ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ)

(Իսթապուլ, 1977, 117 էջ)

«Կենսակամը լաւ ըլլալը չէ, եղածեզ աւելի լաւ երեւիլն է: Կենսփին ամբողջ իմաստութիւնը այս մէջ նախադասութեան մէջ է տիաւառիկ» մտածումը, որ կը գրուարտի «Մամլեկը» թատերախաղի հերոսներէն Ներսէսի կողմէ, 50րդ էջին վրայ, այն դիտար յատկանիչն է, որուն հանդուցնելով իրարու կը զօգուին վերոյիշեալ թատերախաղին գրեթէ բոլոր հերոսները:

Արդարեւ, իրենց գիտակիցէն կամ ենթագիտակիցէն բխած այլեւայլ կեցուածքներու եւ մրտածումներու ընթացքին, սոյաւհայ երիտասարդ թատերադիր Արման Վարդանեանի հերոսները կ'առաջնորդուին «եղածէն աւելի լաւ երեւելու» «իմաստութիւնէն», եթէ խորութեան այս սճի կարելի է բնորոշել «իմաստութիւն» սահմանումով:

Բայց խորութեան, ինքնախորհութեան եւ հոգեկանօրէն քայքայուած զոհերուն մթնուրտէն ներս թափանցելէ առաջ, քանի մը խօսք «Մամլեկը» գրքոյի հերոսներուն ներքին կուսուցին, անոնց մտածումներուն եւ կեցուածքներուն մասին:

Այս միարար թատերախաղը, որուն «դեպ-

քերն ու գարծաղ ամներու տնունները երեւակայական են», բեմ կը բարձրացնէ եօթը հերոսներ, հինգ ազամարդ եւ երկու աչքիներ:

«Մամլեկը» թատերախաղի հերոսները կարելի է ներկայացնել հետեւեալ ընտրու կէտերով:

1) Մեարոյ Առաքելեան.— Ուշադրաօրէն հին հազուստներ հազած, յիւսունը անձ, կանոխ ծերացած նուազածու մը, որ իր մամանակը կ'անցընէ զլարինթի նուազելով: Զախուեր ամուսնութիւն մը, ամուսնալուծման յաջորդող երկրորդ ամուսնութիւնը քայքայած ձախորդութիւններու շարքէն եւ տխուր յիշատակներէն չկարենալ ձերբազատուելու իրողութեան իրբեւ հետեւանք՝ ան վերածուած է մահուան զազախորին հետ մտերմութիւն հաստատած կրաւորական ներկայութեան մը:

2) Տիգրան Գարբիէլեան.— Երեսուն տարեկան եւ ներկայանալի արտաքինով այս երիտասարդը կը մասնէ պողպարին, խորամանկ եւ սատլիք խառնուածք մը: Ան սնդուար արգահատայից յայտարարութիւններ կ'ունենայ զինք զարգատող Անի ձեռագրեանի նկատմամբ եւ կը

հանձնանայ իր խօսակիցները ծուղակը ձգելու փորձերուն յաջողութեան ի տես:

3) Անի ձեռնապահ.— Միամիտ, ինքնահասան, բայց իր դարպասած տղամարդուն առջեւ շարունակ ստրկացող ներկայանալի այբի մը, որ մեծ անհամբերութեամբ կը սպասէ իր հօբաքոյրներուն մահուան, որպէսզի ժառանգէ անոնց թանկարժէք աղամանդները:

4) Արչաւիր Պօղոսեան.— Քառասունը քիչ անցած միականի մը. կարճահասակ, տղեղ արտաքինով, անհաստատ բանականութեամբ երկրորդական հերոս մը, որ առհասարակ ենթարկուող է, իսկ քիչ պարադոքներու՝ դիմացինին վերայ իր ուղեցուցիչը ձգող ներկայութիւն մը:

5) Ներսէս Վարժապետեան.— Վաթսունի մօտ, կոկիկ արտաքինով եւ սուսյգ երեւոյթով սափրիչ մը, որ մասնագիտութեան վերածած է ընդօրինակելու եւ կապկելու մոլորութիւնը: Ունեցած է ոճերներով յատկանշուող սատիք անցեալ մը: Հետեւաբար, ան կ'ապրի թափառական կեանք մը, որպէսզի իր կարողութիւնները եղածէն աւելի ցուցադրելու առիթներ ընծայուին իրեն, եւ միւս կողմէ՝ խուսափի իր վատահամբաս անցեալին ուղղուած ծանօթ մարդոց ակնարկութիւններէն:

6) Նուպար Մելքոնեան.— Քառասունը քիչ մը անցած երկարահասակ, անհանդարտ, յարափոփօր անձ մը, որ իրեն հետ կը պտտցնէ պատի ժամացոյց մը, որպէսզի ամէն մարդ տեսնէ, որ շատ ժամանակ չունի:

7) Եւս Մկրտիչեան.— Իզական սեռին պտուկանող թատերախաղին երկրորդ ներկայացուցիչը եւս զեղակագմ այրի մըն է, որ իբր թէ կը վնասէ «թուխ, միջահասակ, նիհար երիտասարդ մը», բայց խորքին մէջ ան ճամբայ ելած է աղամարդու մը ուշադրութիւնը դրուելով՝ անոր կողակիցը զանաւարտ իրձէն թելադրուած:



Քատական կառոյցով ծանօթ թատերախաղ մը չէ «Մամլիկը»: Հոն չենք հանդիպիր թատերագիրին կողմէ ընտրուած նիւթի մը եւ ոչ ալ յաջորդական դրժուողութիւններու, որոնց լրումով թատերագիրը սահասարակ կը զբաւորէ իր տեսլականը, երբ դիտաշարը կը հասնի զաղթանակէս-դործողութեամբ թատերախաղը միաձուլող աւարտին:

Այս իրողութիւնը անոր համար յատկապէս, որ «Մամլիկը» գրքոյկի էջերուն պաշտօնի կոչուած անձերը, հակասակ զիրենք մատնող նկարագրային փոքր պիծերուն, պորձող անձնաւորութեանց չեն վերածուիր, այլ կը մնան նոյնանըման անձերու սահմաններուն մէջ, զուրկ՝ իրենց ներկայութիւնն ու արտայայտութիւնները անհաստականացնող կենսական ազդակէն:

Աւելին. նոյնիսկ կեանքի մը մէկ օրը կամ րանի մը ժամը ներկայացնող թատրոնին պտուկանող փորձ մը չէ Արման Վարդանեանի երկրորդ գրքոյկը: Հոն, «Մամլիկ» էջերուն, մենք ակնաստես կ'ըլլանք պատահարը իրարու հանդիպող անցորդներու, որոնք իրարու հետ կը շատախօսեն անէն ու ձախէն, առանց տրամաբանական կապերու:

Աւելի ճիշդ՝ երկու անձերու միջեւ ծայր ալուած սովորական խօսակցութիւնը կը սկսի ճապաղել ձանձրացուցիչ ըլլալու աստիճան, երբ պատումին կը մօտանկցին երկուքէ աւելի խօսակցողներ:

Անոնք կը պատմեն մանկութեան եւ անցեալի յուշեր, կը շողակրատեն այլեւայլ հարցերու մասին, կը զուարճանան իրարու խեղճութիւնները մերկացնելով, կը կատարեն օղին մէջ արձակուած այլեւայլ յայտարարութիւններ, մահուան շուրջ արտասանուած խօսքերէն կ'անցնին դատաւարութեան մը «անուղղայ ընթացք»ին, «զարտուողի ծնունդներ»ուն, «քրոնիք տեսլիսիս անընդունաբեան մէջ կը տուայտիմ»՝ թատերախաղը զնելով անորոշութեան ու պատահականութեան փապուղիին միջեւ:

Պատահական խօսքերու, մտածումներու եւ կեցուածքներու շարանէ մը բազկացող «Մամլիկը» կը սկսի ընթանալ դանդաղ քայլերով, որովհետեւ անոր էջերուն մենք չենք հանդիպիր այն պարզացող յարաբերութեան, որուն ներդրուող էնտունականութեան շնորհիւ միայն կ'ընայ սասալանալ թատերախաղ-հանդիսատես (այս պարտազանն՝ ընթերցող) հաղորդակցութիւնը:

Մինչդեռ, ինչպէս Պերթոտ Պրեխթ կ'ընէ. «Մարդիկ քառորոն կ'երթան, որպէսզի հմայուին, տպաւորուին, խաղաղապաշտուին, ցնցուին, սարսափին, գրաւուին, ազատագրուին, հոգերէ քեքեւան, հանգարտին, առօրեային դուրս գան, պատրանքներով հարստանան: Այս բոլորը ինքնին այնքան հասկնալի է, որ արուեստը կը ստանաւորուի իրրեւ գրառոյ, բարձրացնող, ազատագրող: Արուեստ չի կրնար ըլլալ, եթէ այդ բոլորը չկարենայ իրականացնել»:

Արման Վարդանեանի փորձը կը մնայ շատ հեռու այս հասունութենէն, որովհետեւ հոն տեղ գտած խօսքերը ապրումին ջերմութեամբ չեն բերեղացած, իսկ միւս ու ոսկոր ունեցող տղուն անձնաւորութիւններու փոխարէն՝ «Մամլիկ» էջերուն տեղ գտած են նոյնանման սրուող բրկներ:

Այսպէս, հեղինակը զանազան դէպքեր բեմ կը բարձրացնէ, որպէսզի փորձի աւարտին երթալուցնէ, թէ կեանքը խաղ մըն է, իսկ կեանքի մէջ ամէն մարդ իր խաղը կը խաղայ: Հաւանաբար, Արման Վարդանեան աւելի բուարար արդիւնքի մը հասնէր, եթէ այս մեկնակէտ-մտածուած յաջողէր զետեղել զարգացողական հորովոյթի հունին մէջ, անշուշտ, առանց կրկնելու վերեւ յիշուած թերութիւնները:



Միայն ասոնք չեն Արման Վարդանեանի «Մամլեկը» թատերախաղին խոցելի կոպմերը: Եանրորէն վերաւոր է նաեւ հեղինակին լեզուն, ուր քիչ պարզասներու կը հանդիպենք խօսակցական լեզուին ջերմութեամբ եւ գրաւուելիամբ նպատակած ժուժկալ հատուածներու:

Քանի մը նմոյշ հեղինակին լեզուական «գիւտ»երէն՝

Ես գիւ գիտնալէս ի վեր (էջ 8),

Անոր հետ նոյնիսկ մտերմութիւն ունիմ կիւմա (էջ 13),

Մարդ որչափ ալ անպէտ, աւելւորդ մէկը ըլլայ (էջ 26),

Վերջապէս օր մը անդրադարձայ, որ շփոթութեան մատնուած էի (էջ 55),

Անհամար աւելորդութիւններ հոն (էջ 85),

Եւ զիս հինգերորդ կարգէ անհատ նկատած եմ (էջ 87),

Ամէն մարդէ նախանձիլ սկսայ զիմքը (էջ 90),

Այն ատեն ամէն մարդ երկար այս նիւթը խօսեցաւ (107)...

Արման Վարդանեան պէտք է գիտնայ, որ մէկը ինքզինք կը նամնայ, մտերմութիւն կը հաստատէ (այսինքն՝ մտերմացայ), որչափը չի կըրնար փոխարինել որքանը, իսկ «շփոթութեան»

մատնելով ծնունդ տուած է լեզուական շփոթի մը:

Տակաւին. աւելորդութիւններ չկան մեր լեզուին մէջ, այլ՝ աւելորդ բաներ, մարդ ինքզինք հինգերորդ կարգի անհատ կրնայ նկատել, բայց ամէն մարդէ նախանձիլ սկսայ զիմքը արեւմտահայերէն չի կրնար ըլլալ, իսկ «այն ատեն, մէն մարդ այս նիւթին մասին երկարօրէն խօսեցաւ» ըսելու փոխարէն՝ կարելի չէ գրել «եքկար այս նիւթը խօսեցաւ»:

Եզրակացնելու համար ըսենք, որ լեզուական եւ ուղղագրական տասնեակ-տասնեակ սխալներ գրուի կը ցցեն գրքոյկին դրեթէ իւրաքանչիւր էջին վրայ: Օրինակ, Հանդիմանեցի, Ձի տաս, Ձարուիր (այսինքն՝ չ'ուրուիր), հիմա՞, զիջանձ ես (զիջած), հա՞ձէ, ի՞նչէ, փարձ, յօդւած (խօսքը մարմինի յօդերուն կը վերաբերի), Դգրուկ, դպէ, եւայն...

Արման Վարդանեանի «Մամլեկը», որ նախ արեւմտահայերէնի պէտք է թարգմանել, ձախակեր խաղ մըն է, որուն հեղինակը, ըստ երևոյթիւն, անծանօթ է Եւ հայերէն լեզուի խաղերու օրէնքներուն, Եւ գրականութիւնը հասարակ բարտուղարութենէն դուրս բերող ստեղծագործ խաղին կանոններուն ու նախապայմաններուն:

Ս. Կ.

# Մ Ե Ր Վ Ա Ջ Ք Ը

## (ՀՐԱՆԴ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ)

(Երեւան, 1978, 237 էջ)

Հ. Մաթեւոսեանի «Մեր Վազքը» գործին տունչութեամբ՝ խոցելի կամ թիւրիմացութիւն ստեղծող միակ կէտը գիւրջին սկզբնաւորութեան հրատարակութեան ներկայացուցած ծանօթագրութիւնն է: «Մեր Վազքը» կը հրամցուի իբրեւ պատանիներու համար գրուած աշխատանք, մինչ պարզապէս հեղինակին պատանութեան մասին գրուած մտքովական գործ մըն է՝ արձակ կրտորներու մէջ բամբուած:

Գիրքին վեց կտորներէն արդէն «Մեր գայլը» գրեթէ ամբողջութեամբ վերցուած է «Սովետական գրականութիւն» ամսագրի մէջ լոյս տեսած «Նումիար»էն, որ որոշ մշակութաբան կը ներկայացուի այստեղ, իսկ «Նումիար»ը պատանիներու մասին չէր գրուած:

\*\*

«Կանաչ գաշտը», որ առաջին կտորն է գիր-

քին, արդէն սկիզբէն յարաբերութիւններ կը յատկացնէ գրութեան, հեղինակին եւ անոր մանկութեան վերջին տարիներուն կամ պատանութեան միջեւ:

Իր մտրուկը (Հրանտ Մաթեւոսեան կ'ըսէ ջուռակ) պաշտպանելով կը մեննի մայր ձին, իսկ փոքրիկ հովիւր կը հասնի այնտեղ, երբ գայլին զէմ ճակատումի միջոցին արզէն մեռած է մայր ձին: Մտրուկը այլ ձիւ մը կը կաթով կը մեծնայ եւ կը վերածուի «Աստղածաղիկ նակատով» ձիուն, որուն աչքերուն մէջ կ'արտացոլան «...ժայռը, կաղնիք, ծաղկած մաւրեմիք, կանաչ հովիտը եւ կապոյտ երկիմֆիմ սպիտակ ամպերը»:

Հոս, երբ կը թուի, թէ աւարտած է «պատմութեամբ», յանկարծ փոքրիկի մը ձայնը կը միջամտէ, խնդրելով պատմողէն, որ պատմութեան մէջ մայր ձին չմեննի: Այսպէս, երեւան կու դայ,

Թէ այդ բոլորը պատմողին պատանութեան մէկ յուշն է, որ կը պատմուի իր գուպին կամ այլ փոքրիկի մը: Պատմողը կ'ըսէ, թէ ինք չի կրրնար տարբեր ձեւով աւարտել դէպքը, որովհետեւ ճիշդ այդպէս պատահած է եւ փոքրիկ հովիւր ինքն է, հեղինակը: Փաստօրէն մարդուն կրտարած պատմութիւնը եւ գրութիւնը հոս կը միաձուլուին. երկու եզրերը կը հանդիպին իրարու: Իսկ ճշգրտահաստութիւնը, որ կը ցուցադրուի, իրարացումութիւն ցուցաբերելու մտահոգութեանն չի գար, այլ կը բխի ներքին-հոգեբանական շարժարեւութիւն մը կամ փորձ մը պարզելու բժանիղլութեանն: Խորքին մէջ, մտրուկը, գայլի զգուանքէն մեռած մայր ձին եւ պատմողին մանկութիւնը ներքին մտրողականութեամբ իրականութիւն մը կը պարզեն:

Այլուր, երբ տղան դէպք մը կը պատմէ հօր մասին, ի միջի այլոց, կ'ըսէ.

«Հօր հագին գուցէ իրօք բանակային վերարկու լինէր, չիմ յիշում: Տղան, այո, ես եմ, բայց նրանցից այնքան եմ հեռացել, որ նա այլեւս իր համար առանձին գոյութիւն է»:

(էջ 81)

Արուեստը միշտ ալ ինքն իրեն համար առանձին գոյութիւն է, իր օրէնքներով ու ներքին ամբողջութեամբ ասորոց: Իսկ Մաթեոսեան կը փորձէ վերլիչել ու վերակազմել ամբողջ շրջան մը, որ իր պատանութիւնը կը զգած է:

Հեղինակը կը կարգայ, թէ Թուամեանի շրջանի Գուկ գիւղին մէջ հովիւներու միջին տարիքը եօթնամասն ասորեան է: Այսինքն՝ ո՛չ միայն նոր հովիւներ չկան այլեւս, այլև՝ հովիւի հոսանքազուտութիւնն իսկ սկսած է կորսուիլ, եւ ահա, իր մէջ կը վերակենդանանայ Վանին, Վանիի ամուսնութիւնը, Թուրքերը, Չուէնը եւ այն բոլորը, որոնք այն աշխարհին հետ կապուած էին:

Այս բոլորը հեղինակի կազմութեան տարիներուն մաս կը կազմեն եւ առանձին աշխարհ մըն են, որ միշտ կենդանի կը մնայ: Ինք քաղաք անցած է եւ ուսանողութեան տարիներուն գիւղը վանին է, շուները, կարկուտը... եւ նամակ կը գրէ.

«Մարիոյի կարկուտը հալուե՞լ է», գրում էի ես եւ ջնջում: «Շնիրը ո՞նց եմ», գրում էի ես ու ջնջում: Արտեքը դեղնե՞լ են, մտքը հասե՞լ է...

բուրբն ու վանի՞ն չե՞ն կտուել, պապն այգում կանգնած է, Արովենց բալը չի՞ կարմրել... Աստուծոյի անուցը դեռ մայր՞ը է...:

(էջ 207)

Փաստօրէն, ասոնք չե՞ն, որ Մաթեոսեանի համար զրականութեան կը վերածուին: Ինչ որ սիրելի էր ու մօտ այդ պատանիին, յուշ դարձած է արգէն եւ ապա զրականութիւն:

Մակայն հիմնականը այն է, որ Մաթեոսեան յատկանշական տաղանդը ունի այդ աշխարհին կապուած ամենապարզ զէպքերն ու մտրած-մասնութիւնն/ըն անպարզ դարձնելու կենդանի: Շօշափելի, մինչև իսկ Փիղիբական Թուացող նկարագրութեամբ մը, զոյները, ձայները, բոլորերը կը վերանշաւուրուին եւ իրենց տեղը կը ստանան.

«Մայրիկն ինձ աշտակ մետեց, մէկ էլ սեսայ մերկ եմ, չեմ քոզնում լրիւ մերկացնի, ինքը ներքեւ է փաշում, ես՝ վերեւ: Ինքը ծիծաղելով իփեց ձեռքերիս, ուզեցի լաց լինել, մէկ էլ սափ ջուրը լցուեց քերանս, վառեց գլուխս: Հասուում էի, մէկ էլ օտար բռնեց աչքերս, փակեց քերանս... Կարծում էի ձեռքերս ներքեւում պահում են ներքնաշորս — ներքնաշորս հագիս չէր: Գա արդէն քոզոքելով ոռնալու բան էր, բայց ջուրը վառեց, եւ ձեռքերս քառն գլուխս պակելու: — Տաճաասա՛: — Բերանս ջուր մտաւ, օտարը ձեփեց աչքերս եւ ստանութիւնը կծեց ուսըս: — Սառնա՛ս: — Թաց ձեռքի ապտակ լսուեց ու Հրայրի ծիծաղը, (սառն ուրեմն Հրայրն էր լցրել), յետոյ փափուկ ջուրը փաթաթուեց ինձ վերից վար, փաղափշեց, շոյեց ու գուրգուրեց... ու փափուկ ցամքոցը կրծքի պէս գրկեց գլուխըս»:

(էջ 171)

Տակաւին իր եւ հօր միջեւ, իր եւ մօր միջեւ, հօր եւ մօր միջեւ տարածուող հոգեբանական կապերու նուրբ ցանց մը կայ, որուն հոլովութիւն շատ զգուշօրէն ու մերկ անկեղծութեամբ մը կը հետեւի հեղինակը:

Պատերազմը, գիւղը, քաղաքի ուսանողութեան տարիները, Վանին, շուները եւ այս բոլորին ամբողջական աշխարհը կը բերէ «Մեր վագրը»:

# ԱՐՈՒԷՍ

## ... ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ԽՈՍՏՈՒՄԸ

Տարին «Մանուկներու տարի» է ամէնուրեք: Զեռնարկներ եւ հանդէսներ երկրպագունտի չորս ծագերուն: Նա' եւ՛ հոս, տակաւին իր վէրքերը չդարձանած այս հողակտորին ամբողջ ստարածքին, նոյնիսկ Հարսի անշնչիչ մթնոլորտին մէջ:

Զեռնարկներ՝ նա' եւ մեր պիւմերներուն եւ սրահներուն մէջ: Մանուկներու տարուան օտիթով եւ մեր մշակութային յարկերէն ներս կողմակերպուած հանդիսութեանց շարքին, առանձնապատուկ ուշադրութեան արժանացաւ «Համագրային» Սնթիխտի մասնաճիւղին նախաձեռնած «Յարսեղ Կանաչեան Երգի մրցանք»ը, որ տեղի ունեցաւ Երկու հանգրուանով:

Շուրջ 40 մանուկներու մէջէն շնորհալի 14 ձայներ առանձնացնելէ ետք, Կիրակի, 20 Մայիս 1979, կէսօրէ առաջ ժամը 10ին, «Յակար Տէր Մէլքոնեան» հանգիստօրհասի բեմին վրայ սկսան էլոյթ ունենալ աւարտական մրցումին հասած 14 թեկնածուները:

Առաջին հերթին, վերոյիշեալ մրցումին մասնակից տղանքն ու աղջնակները մեկնարանեցին Բարսեղ Կանաչեանի «Ճախարակ»ը, ապա՝ Ալեքսան Մնակեանի յօրինած «Գարունք»՝ սրահը քերթարանելով մանկական ձայներու շնչող հարդակահանութեամբ:

Արդարեւ, իրենց «մրցակից»ներուն մէջէն առանձնացող զեղեցիկ ձայներուն զուգահեռ՝ նոյնքան ուրախօթիթ երեւոյթ էր հայ դասական երաժշտական առողջ ուղիէն ներս մեր մանուկներուն նետած պայծառ քայլերը, որոնք ձեւով մը կու գային հաստատուելու, թէ «էսթրատային» պիտակին տակ առհասարակ մեղի ներկայացուած «հայ» երգը անցողակի ալիք մը ըլլալու դատարարուած է, պայմանաւ, որ այս մրցանքները չվերածուին տօնական կամ յորելինական ստիթներով կազմակերպուած պատահական ձեռնարկներու:

Կարելոյը հետեւողական աշխատանքն է: Մեր ուսումնական ծրարքէն ներս հայ երգի ուսուցման իր արդար բաժինն ու կարեւորութիւնը առաւել որոշումն է, որպէսզի մանկավարտէզի սեզաններուն վրայ՝ մեր մտադաշ սերունդներուն լսողութիւնը շթուակորուի «Լինտա-Լինտա» եւ նմանօրինակ անդիմադիծ երգերով:

Մեր մշակութային միութիւնները եւս իրաւունք չունին ձեռնածալ մնալու այս գեանին վրայ: Ընդհակառակն, անոնք պարտաւոր են լուրջ եւ հետեւողական հողածութիւն ցուցաբերել մանկական թատերախումբերու, Երգչախումբերու, պարախումբերու եւ նկարչական թէ՛ երաժշտական

որոշ շնորհ մը մատնող մանուկներու նկատմամբ:

Արովհետեւ՝ Մշակութային պայծառ եւ կենսունակ ապագային թէկուզ վտիտ, բայց միակ զբաւականներն են մանուկները, յոյսի նշույլներն են անոնք, իսկ պայծառ հեռանկարներու կարօտով տաղնապող պատասխանատուները չեն կրնար անտես ընել վաղը ծաղկուն ծառեր դառնայ խոստացող այտօրուան ծիլերը:

Այս լուսործակիւն տակ մենք կը դիտենք մեր մանուկները հայ մշակոյթի կենարար աւելով գօտեպիղել նպատակադրող իւրաքանչիւր ձեռնարկ, եթէ նոյնիսկ անիկա ուշադրաւ որակով մը շներկայանայ մեզի՝ իր սկզբնական քայլերուն մէջ: Առաջին հերթին, կարելոյը արդիւնքը չէ, հաստատ քայլերն են: Վասնզի առողջ հունէ՛ մը ներս թափ առած ընթացքով կը պայմանաւորուի վերասլաց երթը, իսկ պատահական ձեռնարկներով դժուար թէ ձեռք բերուի հետադիմութեամբ նպատակը:

Այդ իսկ պատճառով, նմանօրինակ ձեռնարկներու յաջողութեան հիմնական դրաւակները հանգիստացող կենդանական դէմքերու չափ՝ իր նշանակութիւնը ունի այդ աշխատանքներու ընթացքին եւ հետեւողական թափին վրայ դուրս դուրս չաւաքական ուժերու մասնակցութիւնը: Այլապէս, «Քնար» երգ ու պարի խումբին կամ «Մեծղայ»ին տխուր պատկերները կրնան կրկնուիլ զանազան առիթներով, իսկ մեր մշակութային յաջողութիւններն անզամ առուսպային կեանք մը կ'ունենան՝ իրենց յաղթանակին հետ հնչեցնելով նաեւ նահանջի փողերը:

Յաղթանակները իսկապէս յաղթանակ կը դառնան ա'յն պարապային միայն, երբ կը յաջողինք ապահովել անոնց յարատեւութիւնը: Եւ հետեւողական աշխատանքը հիմնաքարն է յաջողութեան յաջողութիւն ընթացող յաղթանակի երթին:

«Բ. Կանաչեան Երգի մրցանք»ին միջոցաւ հայ երգին արձանագրած խրախուսիչ յաղթանակը պէտք չէ վերածուի նոյնիսկ տարեկան բնոյթ ունեցող ձեռնարկի մը, այլ պէտք է դառնայ մեր կենսութեան վաղուան հաշտին մղուող ամէնօրեայ զուպարի մը:

Իր յաջողական նախաձեռնութիւններով՝ «Համագրային» Սնթիխտի մասնաճիւղը կուտայ այդ խոստումը: Եւ խոստումը ուրախացուցիչ է, որովհետեւ «կամենայր կարենալ է» որոշ չափով, ինչպէս կ'ըսէ ժողովրդային իմաստութիւնը:

# Նզճարներ

## ՈՐՓՈՐԹԱԺԱՅԻՆ ԿԱՄԱԿՈՐՈՒԹԻՒՆ...

Անցեալ տարուան Դեկտեմբերի առաջին շաբթուն, «սովեական գրողներէ թերթը»՝ «Լիտերատուրնայա գազետա», Լիբանան գործուղեց իր թըղթակիցներէն Չօրի Բալայեանը, որ փորթաժ մը պատրաստելու համար ի մասին պատերազմական իրադարձութեանց վերջին փուլին, որուն ենթակայ հատուածներէն մէկը եղաւ նաեւ լիբանանահայութեան մէկ զգալի տոկոսը:

Վերադարձին, Չօրի Բալայեան երկու տարբեր առիթներով հանդէս եկաւ իր պաշտօնավարած յիշեալ թերթին մէջ, առաջին անգամ կարճ անդրադարձով մը եւ, աւելի ուշ, ընդարձակ գրութեամբ մը:

Բալայեանի այդ երկու գրութիւններն ալ թարգմանարար ներկայացւեցան հայ ընթերցողին, առաջինը՝ Նրեանի «Գրական քերթ»ին միջոցաւ, իսկ երկրորդը՝ «Սովետական գրականութիւն» ամսագիրին:

Վերջինը — «Երկու սուրի մէջ» — կը հաշուէ յիսուն մեծագիր էջ, ուր պատկերուած են թղթակիցին տուած ու ընդունած այցելութիւնները, տեսածները, լսածները եւ խորհրդածութիւնները:

Մենք եւս ուշի ուշով կարդացինք Բալայեանի որ փորթաժը:

Կարդացինք ու գարմացանք:

Համարեա՛ բոլոր էջերուն գիմաց:

Արդարեւ, եթէ իրողութիւնը միայն այս չափով յարզ կը վայելէ ուր փորթաժ կոչուած գրութիւններուն մէջ, այսինքն՝ եթէ արտօնուած է երեւակայութեան ու ցանկութիւններու այսքան յայտնակ տակ տալ, ապա, ուրեմն, կարելի է դարմանալ միայն, թէ ինչո՛ւ թերթ մը պէտք կը զգայ այսքան հեռուները թղթակից զրկելու... — Տաղնապը հողեպէս ու Փիղիքապէս գիմագրուած ճշմարիտ դերակատարները անտեսելու միտում ու դերաճեցուած ուժերու անվերջ տաղանցք, եւ ընդարձակ տեղ մը՝ յաճախ անդոյ կամ տասներորդական բաներու, անդոյ գործիչներ, անդոյ թերթերու առաջնորդող ազգեցութիւն, լիբանանահայութեան կորովը բարձր պահած ներշնչման անդոյ աղբիւրներ, ինքնախոտահութեան տնդոյ կուսաններ, տնորոշ անձերու կենսագրութիւն, ուրիշներու շրթներուն գրուած անյարիր խօսքեր, ինչէ՛ր ու ինչէ՛ր, բարոյական կողոպուտի բացայայտ փորձ, որ փորթաժային շտեմարում կամակորութիւն:

Այնուամենայնիւ, մենք հարկ չենք աններ ըստ էութեան անդրադառնալու կանխակալ տրամադրութեամբ սարքուած Չօրի Բալայեանի չափազանցութիւններուն, գունաւորումներուն ու քաղաքական յայտնութիւններուն: Ատիկա կ'ընեն հաւանաբար ուրիշներ: Կ'ուղէինք սակայն իրողութիւններու, անուններու, հանդամանքներու, տրամաբանութեան ու տիրող սկզբունքներու առնչուած բազմաթիւ թիւրիմացութիւններէն ուշադրութեան յանձնել մէկական օրինակ՝ առ ի գիտութիւն:

ԴՐԱՄԱՏԻԿ ՊԱՏԿԵՐ, էջ 59

«...Բայց այսօր ամբողջ Բէյրութում չկայ աւելի դրամատիկ պատկեր, քերես, քան հայկական քաղամասերի տեսքը: Երջաններն այստեղ

բոլորը հայկական անուններ ունեն ու գրեթէ բոլորը սկսում են նոր բառով՝ Նոր Կլիկիկիա, Նոր Սիս, Նոր Մարաշ, Նոր Ամանոս: Այստեղ կան Արագած եւ Արաֆս քաղաքներ, «Էրեբունի» եւ «Ղարաբաղ» խանութներ, «Սարդարաբաւ» ակումբ: Այդ ամէնը կան եւ հիմա: Բայց բոլորը, կարելի է ասել, չկան: Աւերուած են»:

*Կան ու չկան: «...Չկան: Աւերուած են»:*

*Աւերուած:*

*Ըսինք, որ «Լիտերատուրնայա գագետա» Թերթին Թղթակից Չօրի Բալայան Դեկտեմբերին այցելեց Պէյրութ ու Դեկտեմբերին Հայկական Թաղամասերը այլևս «գրամատիկ պատկեր» բնաւ չէին ներկայացներ: Եւ յետոյ՝ վնասուելը եւ աւերուելը տարբեր բաներ են: Յիշատակուած Թաղամասերն ու հաստատութիւնները վնասներ, ճիշդ է, կրեցին, բայց երբեք չէին կանգուն ըլլալէ չզաղրեցան: Ըստ երեւոյթին, Թղթակիցը իր տպաւորութիւնները քաղած է մէկ-երկու Թաղամասերու մէկ-երկու անկիւններէն եւ ընդհանրացումը կատարած է Հայկական բոլոր Թաղամասերուն վրայ, որոնցմէ ոմանք, մինչեւ անցած հոկտեմբերեան ոմբակոծումներուն՝ զերծ մընացին «գրամատիկ» տպաւորութիւններ ձգող «տեսք»երէ:*

**ԱԶԻԶԵԱՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ, էջ 62**

«Ազիզեան հայրենակցական (այժմ արդէն ռազմական) ակումբում գրութեամբ էինք Բուրժ-Համուդի եւ այլ քաղաքների բնակիչների հետ»:

*Պուրճ Համուտի մէջ «Ազիզեան Հայրենակցական» ակումբ չկայ, կայ «Ազիզեան ակումբ», որ մէկն է Դաշնակցութեան շրջանի ակումբներէն:*

**ՖԱՇԻՍՏՆԵՐԸ ՊԱՅԹԵՑՐԵԼ ԵՆ, էջ 62**

«Ամբողջ աշխարհն այսօր գիտէ, որ յաշարձանը պայթեցրել են: Ես այդ բանն իմացել էի դեռեւս Լիբանան մեկնելուցս երկու շաբաթ առաջ, երբ Ուիլիամ Սարոյեանի հետ այցելեցինք Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Առաքինին, որը եւ յայտնեց մեզ տխուր նորութիւնը: «Բէլլութում փաշիստները պայթեցրել են եղեռնի գոհերի յաշարձանը»:

*Մենք չէինք խորհիր, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Առաքին այս բառամթերքով տեղեկութիւններ տուած ըլլայ իր այցելուներուն: Ամենայն Հայոց կաթողիկոսին բառամթերքը, ինչպէս ծանօթ է իր գրութիւններէն ու քարոզներէն, զիչ մը կը տարբերի կարգ մը կուսակցութեանց պահանջներէն:*

**ԿՈՄԿՈՒՍԻ ՆԱԽԱԳԱՀԸ, էջ 80**

«Բէլլութը մի տեսակ պայծառ է, աւելի ճիշդ՝ խայտաբղետ: Մի պատի վրայ մօտ տասը դիմանկար կայ, չհաշուած արաբերէն գրուած լոգուիցները: Գրեթէ բոլոր դիմանկարները, բոլոր դէմքերը շատ քէ քիչ ինձ ծանօթ են: Եւ ես որոշեցի նրանց անունները գրել իրար մօտ: Ու արտագրեցի՝ Սարգիս՝ Լիբանանի պրեզիտենտ, Ասադ՝ Սիրիայի պրեզիտենտ, Արաֆաթ՝ Պաղեստինի ազատագրական կազմակերպութեան գործիչմի նախագահ, Ջումրիլաթ՝ Լիբանանի կոմկուսի նախագահ (սպանուած)...

*«Լիտերատուրնայա գագետա» Թերթին Թղթակիցը իր ուրփորթածին մէջ Թոյլ տուած է անհամար սխալներ, որոնց սրբագրութեան համար մարդ բռնաւ զժուարթութեան չի մտանուիր: Վերջին մէջբերումին մէջ կատարուած վերջին «հաստատումը», սակայն, անմիջական հերքումէ մը աւելի՝ հարցումներու դուռ կը բանայ:*

Կոմկուսի նուիրապետութեան մէջ բա՞ն մը փոխուած է արդեօք :

Առաջին քարտուղարներու փոխարէն՝ կոմկուսները սկսած են նախա-  
դահներո՞ւ ցուցմունքով վարել իրենց դործերը :

Եւ յետոյ՝ կոմկուսները ներսէ՞ն կ'ընարեն իրենց նախադահները, թէ  
դուրսէն :

Չենք դիտեր : Ատոնք կուսակցական զազունիքներու ծիրին մէջ կ'իյնան :

Միայն թէ՛ ձոմպլաթ կոմունիստ չէր, որ կարելի ըլլար քիչ մը տրա-  
մաբանութեան մօտեցնել իրեն շնորհուած կոմունիստ կուսակցութեան նա-  
խադահութիւնը :

ձոմպլաթ կուսակցապետն էր Ընկերվարական Յառաջդիմական կու-  
սակցութեան :

Լիբանանի կոմկուսի առաջին քարտուղարը՝ Նիքոլա Շաուի :

#### ԱՅՆԹԱՊԻ ՏԱՃԱՐՈՒՄ, էջ 95

«Եղայ Այնթապի տաճարում : Հանդիպեցի Կիլիկիայի հոգեւոր առաջ-  
նորդների՝ հորէն եւ Գարեգին Երկրորդի հետ» :

Չօրի Բալայեան անձանօթ չէ կաթողիկոս բառին եւ կաթողիկոս բա-  
ռին խնամեալ յայտուումը կը դրկէ նախադասութիւնը տրամադրութեան ա-  
ռողջ հիմքերէ, իսկ տաճարին անուանափոխումը յաւելեալ զաղափար մը  
կու տայ որփորթածին մէջ կիրարկուած լրջութեան չափին մասին, թէեւ  
Անթիլիասը Այնթապի հետ շիտթելու մեղքին ամբողջ բեռը կրնայ թղթա-  
կիցին վրայ չձանրանալ այս պարագային : Այսքան բան, կը կարծենք, կրբ-  
նար գիտնալ նաեւ որփորթածը հիւրընկալող «Առվեստակամ գրականութիւն»  
ամսագիրը...

Չօրի Բալայեան իր որփորթածին մէջ երախտադիտութեամբ կը յիշէ  
այն թերթը, որ «իր քաթակիցին է ուղարկում, որ գրի ամբողջ նշմարու-  
թիւնը, որպէսզի պատմի նրանց մասին, ովքեր գրկուել են տնից ու տեղից,  
որպէսզի իր որփորթածով ինչ-որ չափով օգնի տուժածներին» :

Ճշմարտութի՛ւնը, ամբողջն ալ հետը, «որ գրի ամբողջ նշմարու-  
թիւնը» :

Բայց մօտեցման ա՞յս եղանակով :

Երբ մարդ մը շօշափելի իրականութեանց առջեւ անզամ փոյթ չէ ը-  
րած ճշգրիտ ըլլալ, չենք դիտեր այլեւս, թէ ինչպէ՞ս կը յուսայ, որ ուրիշ-  
ներ հաւատք ընծային իր ճշմարտութեան, որ ճանչնալու, խորանալու, կըշ-  
տելու, խղճմտութեամբ վարուելու եւ տրամաբանութեան մօտ ըլլալու աւե-  
լի մեծ պատասխանատուութիւններ կ'ենթադրէ :

Չօրի Բալայեան ասարելգով բժիշկ է, փառասիրութեամբ՝ զրազէտ,  
պաշտօնով՝ թղթակից, ուխտով՝ կուսակցական :

Բայց, ցաւօք, տուեալ որփորթածը խմբադրած պահուն իր մէջ ներ-  
կայ չեն եղած այդ մարգերէն առաջին երեքը արժեւորող դործօններէն եւ ոչ  
մէկը, ո՛չ բժիշկը — ախտաճանաչման նախանձախնդիր հետամուտ, ո՛չ զրա-  
զէտը — խղճմտանքի խորհրդանիշ, ե ոչ ալ թղթակիցը — ճշգրտութեան դոր-  
ծիչ : Չինք վարողը եղած է իր հանգամանքներէն վերջինը, կուսակցականը,  
այս պարագային՝ հին օրերը յիշեցնող կուսակցականի կողմնակալութիւնը,  
որուն առաջացուցած հետեւանքներուն մէկ մասը տեսանք արդէն, իրողու-  
թեանց ճշգրիտ պատկերէն աւելի՝ իրողութեանց տակնուվրայութիւն, մէկ  
ծայրէն միւսը...

### « Յ Ա Յ Տ Ն Ա Բ Ե Ր Ե Ց Ի »

Կանխող էջերուն մէջ մատնանշուած անյարիր յայտնութիւնները Զօրի Բարայեանի կամայական վարքը հաստատող առաջին նշանները չեն: Անոր գրիչին տակ յաճախողէսք են վառ երեւակայութեամբ խմբադրուած դրութիւնները: Մէկը՝ Ուիլքըմ Սարոյեանի հետ ունեցած զրոյցը, որ նախ լոյս տեսաւ «Լիտերատուրնայա գագետա» թերթին մէջ, ապա՝ անդրերէնի թարգմանուեցաւ «Սովիէթ լայֆ»ի էջերուն, «Սովիէթ լայֆ»էն մասամբ արտատպուեցաւ «Հայրենիք ուիլի»ի մէջ, իսկ հայերէնով հիւրընկալուեցաւ Երեւանի «Գրական թերթ»ին կողմէ, 26 Նոյեմբեր 1976ի համարով:

Ասիկա առաջ սակայն, ու անոր կարգ մը կէտերը արագ բողոքայտելու համար՝ կարողանք Կարպիս Սուրճեանի և Սարոյեանի միջեւ տեղի ունեցած զրոյցին սա հատուածը.

**ԿՍՐՊԻՍ ՍՈՒՐՃԵԱՆ.** — Ուրիշ պատմութիւն մը կապուած է Բերնար Շոյի հետ: Ուզեմ էք այցելել Շոյին, անիկա կատակով դսեր է, որ իր ժամանակը սուղ է, իսկ դուք մեծ գումարի չէք մը դրկեր էք:

**ՈՒՐՃԵԱՆ ՍՍՐՈՅԵԱՆ.** — Ձէ, ատիկա ցիւղ չէ: Ինչպէ՞ս ալ կը հեւրեմ, աղբար: Մարդուն բնատրութեան համեմատ կը յարմարեցնեն:

Կը պարզուի, որ կոյ և և ատոր ճի՛շդ հակառակը: Այսինքն՝ կրուցակիցները ո՛չ միայն Սարոյեանի բնատրութեան համեմատ բաներ յարմարցուցած են, այլև՝ իրենց բնատրութիւններէն բաւակա՛ն բան մուծած են խնդրոյ առարկայ թուղթերուն մէջ, — քմահաճ կողմնորոշումներ, հաշիւներ, ազաւազումներ:

Զօրի Բարայեան հաս և և կու գայ առաջին դիժի վրայ:

Երկար պիտի բլբար կրալիլ խնդրոյ առարկայ իր զրոյցին մէջ տեղ դրած թուականներու տեղափոխութիւններով ու տարիքային վերլոյսայութեաներով, ամէն քայլի Սարոյեանի բերանը դրած զեղումներուն ու փրփականտային յանձնատութեանց բոլոր անհեթեթութիւններով, երկար և աւելորդ աշխատանք, մնաց որ, ամբողջին մասին ստոյգ դազափար մը կու տայ ստորեւ ուշադրութեան յանձնուած հատուածը:

Տարբեր այցելութիւններու ընթացքին Հայաստանի մէջ նշմարուած փոփոխութիւններուն շուրջ հրաւերի մը՝ Սարոյեան, ի միջի այլոց, կը պատասխանէ.

«Փոփոխութիւններն, ընդհանրապէս, երկու խօսքով դժուար է բնորոշել: Ես միայն կարող եմ ասել, որ առաջին այցելութեանս հայ գրակա-նութիւնն այստեղ յայտնաբերեցի ի դէմս Զարեցի, Խաչակեանի, Դեմիրջեանի, երկրորդ այցելութեան՝ Մահարու, Քոչարի, Զարեանի: Իսկ այժմ, ահա, նոր սերունդն է՝ երիտասարդութիւնը»:

«Յայտնաբերեցի» բարը, Սարոյեանի լեզուին մէջ, կը նշանակէ ո՛չ թէ կարգացի, այլ՝ անձնապէս ճանչցայ:

Եւ իրապէս, իր առաջին այցելութեան՝ Սարոյեան ճանչցաւ Զարեանը,

Երկրորդին՝ երկար տանն եղաւ Մահարիի հետ, չբնադայեցաւ Քոշարի կողմին, իսկ Գեմիւրջեանի եւ Զարեանի յայտնաբերումներուն մասին մենք ուրիշ տեղ բան չենք կարգացած, չենք դիտեր, կրնայ ըլլալ:

Մնաց յայտնաբերումներէն մէկը՝ Իսահակեան:

Զօրի Բալայեան ո՞ր հրաչքով արդեօք Սարոյեանին յայտնաբերել կուտայ Իսահակեանը, երբ անդլիտղիք զրադէտին առաջին այցելութեան տարին (1935) Իսահակեան «այտեց» չէր:

Ըստ կենսագրական տուեալներու, Իսահակեան արտասահմանէն երկու անգամ գնաց Հայաստան, նախ՝ կէս դրօսաշրջիկային հանդամանքով, եւ ապա՝ վերջնականապէս, առաջին անգամ՝ 1926ին եւ մնաց երեքուկէս տարի, մինչեւ 1930, իսկ երկրորդ անգամ՝ 20 Յոգոտոս 1936ին:

1930էն մինչեւ 1936ի երկրորդ կէսը ո՛չ յայտնօրէն եւ ոչ ալ դադանօրէն Հայաստանի հոգին սօք գրաւ ան:

Ուրիշ իօսքով՝

Սարոյեանի առաջին այցելութեան տարին, Իսահակեան կը գտնուէր Փարիզ, ուր, ուրիշի մը կողմէ յայտնաբերուելու փոխարէն, լծուած էր անձամբ ինքզինք յայտնաբերելու եռանդուն աշխատանքի մը, կեցցէներո՛վ եւ անկցիներո՛վ:

«Կեցցե՛ր Մեծ Միւսիւնը Առցիպիստական Խորհուրդներին»:

Եւ, հակադարձաբար՝

«Գաշնակցութիւնը հոգեվարքի մէջ է, բարոյապէս, միւսապէս սնանկ»:

Հարցը այն մասին չէ անշուշտ, թէ Իսահակեանին ինչ արժեք փառարանիչի պաշտօնը եւ ինչ չափով ծանրացաւ յիշատակին՝ կեանքի փաստով ի գերեւ ելած պոստիւմնի մարդարէութիւնը: Մենք այդ փաստերը յիշեցինք իրենց կապուած թուականներուն ու գրառման վայրերուն համար, ու ա՛յն բանին համար, որ ողբերութեան այդ երկերես յայտնութիւնները (կեցցէ՛ եւ անկցի՛) ոմանց մօտ աւելի սուր պատճառներ պէտք է ըլլային Իսահակեանի տեղը միտք պահելու համար:


Ո՛չ, գրողի մը ներելի չէ չդիտնալ իր գրութեան մէջ յիշատակուած ուրիշ գրողի մը կենսագրականը եւ աւելի՛ քան աններելի է հայ գրականութեան քիչ ծանօթ ուրիշ մը հաշուախնդրօրէն բեռնաւորել սուտ տպաւորութիւններով:

Վերի դիտողութիւնը քիչ մը կը վերաբերի նաեւ Զօրի Բալայեանի գրքոցը «Լիտերատուրնայա գագետա» թերթին իր էջերուն փոխադրած «Գրական քերթ»ին, որ տպագրութեան յանձնելէ առաջ գրոյցին թարգմանութիւնը, եբրեք չէ փորձած քննական ակնարկ մը նետել անոր վրայ:

Նոյն դիտողութիւնը պէտք է արձանագրուի նաեւ «Հայրենիք ուրիշի»ի հաշտոյն, որ Բալայեանի գրոյցը արտատպեց «Սովիեթ լայֆ»էն, սուտնց անոր խորտուտ մասերը մատնանիշ բնելու:

Ռուսերէն եւ անդլերէն հրատարակուող թերթերու խմբագիրները կըրնան մանրամասնօրէն չդիտնալ մեր գրականութեան պատմութիւնը, «Գրական քերթ»ը կրնայ փափկանկատ հաշիւներով աչք գոցել անճշտութիւններուն հանդէպ, բայց մենք, աշխարհի այդ մասերէն արտատպումներ կատարելու տան՝ պարտուոր ենք աշալուրջ ըլլալու, որովհետեւ դեռ Զօրի Բալայեաններ կան հոն...





### ՄԱՀ՝ ՎԱՐԴԱՆ ԳԷՈՐԳԵԱՆԻ

Ուրբաթ, 18 Մայիսի երեկոյան, Պուէնոս Այրէսի Արմենիա Մշակութային Ընկերակցութեան կեդրոնական վարչութիւնը կազմակերպած է յուշահանգէս մը, ողբկոչելու համար յիշատակը «Արմենիա» օրաթերթի երկարամեայ խմբագիր և զրագէտ Վարդան Գէորգեանի, որ իր վերջին շունչը փչեց 29 Մարտին, իր ետին ձգելով բեղուն վատակ մը:


Վարդան Գէորգեան ծնած է 1893ին, Տրապիզոն, ուր ստացած է իր նախադասութիւնը: 1909էն մինչև 1910 կը հրատարակէ «Պոնտոս» ամսագիրն ու «Շարժում» շաբաթաթերթը: 1911ին կ'անցնի Փրանսո և կը յաճախէ Սորպոնի համալսարանը՝ մինչև 1914: Այդ, չորս տարի Գահրէի մէջ իբրև ուսուցիչ պաշտօնավարելէ ետք, 1919ին կը ստանձնէ Ատանայի Կիլիկեան վարժարանի տեսչութիւնը, իսկ յաջորդ տարի՝ Պուլոս Ազգ. Խնամակալութեան որբանոցին տեսչութիւնը:

Պոլսէն կ'անցնի Ռումանիա և կործ ժամանակ մը Լաք (1924) կը հաստատուի Լիբանան, ուր կը մնայ մինչև 1938՝ վարելով անօրէնութիւնը Պէյրութի Ս. Նշան վարժարանին (այժմ «Սուրէն Խնամիրեան» գոլէճ):

1938ին կը հաստատուի Պուէնոս Այրէս, ուր մինչև խոր ծերութիւն կը գործէ կրթական, հասարակական և մամուլի կալուածներէն ներս: Ազգ. Արշակունի Կեդրոնական վարժարանի (ներկայիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ հաստատութիւն) գրասեղաններուն առջև, կազմակերպական աշխատանքներու ընթացքին թէ «Արմենիա»-ի էջերուն, շուրջ երեք տասնամեակ, Վարդան Գէորգեան եղաւ նորահաս սերունդներուն հայեցի շունչ և զազափարական ոգի ներարկող կայտառ նուիրեալը, որ մանկավարժի, մտաւորականի և զազափարի զինուորի իր կոչումներուն ծառայեց ամենայն նուիրումով և հրճուանքով:

Վարդան Գէորգեան յաջորդաբար հրատարակած է «Պոնտոսի ձայնը» (1909), «Շամաղալ» (1910), «Թրիվալէ» (1928), «Մոսկուա երգը» (1947) և «Ոսկի սափոր» (1949) շաբաթական հատորները, ինչպէս նաև՝ «Գրական հարցեր», «Մտածումի եւ հաւաչանքի շիրեր» և «Հայերէն-հայերէն տառնոյն բառարան» անուն գիրքերը:

Նմանապէս, ան կատարած է թարգմանչա-



կան աշխատանքներ, գլխաւորաբար կեդրոնական լով Հ. Իրսէնի, Մ. Մեթերլինկի, Լ. Թալստոյի, Կրիմ Եղբայրներու և Փրանսական գրականութեան կարգ մը ուշադրաւ դարձերու հայացման վրայ:

Հայ լեզուին, մշակոյթին և լսարկերուն նըկատմամբ իր ունեցած պաշտամունքը կիրքի վերածած Վ. Գէորգեանի անտիպ գործերն են՝ «Խորակալած շղթաներ» (վէպ), «Բարձուցմանը համար» (Թատերախաղ), «Մեզի պարտէզին մէջ» (լեզուական նշմարներ), և սփիւռքահայ մամուլի էջերուն լոյս տեսած բողոքաբան ուսումնասիրութիւններ և գրական, մանկավարժական ու հրատարակարական յօդուածներ:

### ՄԱՀ՝ ԱՇՈՏ ԱՐԾՐՈՒՆԻ

Չորեքշաբթի 16 Մայիսի առաւօտուն, Պուէնոս Այրէսի «Մեթրոփոլիթանո» հիւանդանոցին մէջ, սրտի կաթուածի հետեանքով մահացած է «Արմենիա» օրաթերթի նախկին խմբագիրներէն Աշոտ Արծրունի:

Աշոտ Արծրունիի մահով՝ Արժանիիի հայ զազուրը կը կորսնցնէ հասարակական և լրագրական կալուածներուն նուիրում ժրջան դէմք մը, որ աւելի քան յիսուն տարիներ, Հայաստանէն մինչև Եւրոպա և Հարաւային Ամերիկա, իր կեանքը նուիրեց հայրային ու մշակութային ծառայութեան:

Աշոտ Արծրունի ծնած է 1902ին, Քանաքեռի



մէջ, բարեկեցիկ ընտանիքի մը յարկին առի: 1920ին, կ'աւարտէ Երևանի սուսական երկրորդական վարժարանը:

Հայաստանի խորհրդայնացումէն ետք, ինչպէս շարք մը այլ մտաւորականներ, ան կ'ս կը ձերբակալուի եւ կը դատաւարտուի Երեք տարւան բանտարկութեան: Արժրունի կ'արձակուի մէկ տարի ետք՝ Հայաստանի խորհրդայնացման առաջին տարեդարձին առիթով:

1921էն մինչեւ 1924՝ Աշոտ Արժրունի կը յաճախէ Երևանի պետական համալսարանը, իրբեւ պատմութեան եւ գրականութեան ճիւղի ուսանող:

1924ին, կ'անցնի արտասահման:

Այնուհետեւ, Աշոտ Արժրունիի կեանքը կ'ըլլայ ամբողջական նուիրում մը՝ զազութասայ Հանրային - կազմակերպական աշխատանքներու ծիրէն ներս: Կը մասնակցի Հ. Յ. Դաշնակցութեան 10րդ եւ 11րդ Ընդհանուր ժողովներուն: 1937ին, պաշտօնով կը փոխադրուի Արժանիին, ուր գործեց մինչեւ իր վերջին շունչը՝ իրբեւ Հանրային դործիչ, հրատարակագիր եւ «Արմենիա»յի խմբագիր:

Աշոտ Արժրունիի ամէնէն մնայուն եւ օգտաշատ գործը կը նկատուի սպաներէն լեզուով

խմբագրուած Հայոց Պատմութեան Հատորը, որ նաեւ խմբագրուեցաւ փորձուկալերէնի:

Վերջին շրջանին, ան յծուեցաւ աւելի քան 300 էջոց յուշադրական Հատորի մը խմբագրութեան, որուն տպագրական աշխատանքները սկըսած էին, երբ պատահեցաւ մահը:

# ՆՈՐԻՉՈՆ

Ե Ա Ր Ա Յ Ա Թ Յ Ե Ր Թ

Այս տարի, Հայաստանի Հանրապետութեան հուշակման 61րդ տարեդարձին օրը՝ Մայիս 28ին, գտնատահայութիւնը հիմը դրաւ իր սեփական շարաթաթերթին՝ «Հորիզոն»:

Իր աստղադրանքները ձեւակերպող առաջին խմբագրականին մէջ՝ «Հորիզոն», ի միջի այլոց, կ'ընէ.

«Մոնթրէալէն մինչեւ Թորոնթօ, Հեմիլթըն, Սէնթ Քաթերին, Քէմպրիժ, Պրենսփըքտ, Կուէլփ, Լանտըն, Ուիմազըր, Օքսփալ եւ մինչեւ վաճառուիլը, իր մէկ ազգի պատկանելիութեան գիտակցութեամբ, Գաճատայի հայ զազուրը գործնական քայլ մը եւս առնելով՝ կը ներկայացնէ իր բարձրասօսը՝ «Հորիզոն»ը, որ պիտի դառնայ իր ամբողջականութեան պահպանման հնոցը, իր գոյութեան փաստը, իր ներկայացուցիչը»:

Շարաթաթերթին Պէյրութ հասած առաջին չորս-հինգ թիւերը կազմուած են նոյն ողիով եւ տարբեր սիւնակներու մէջ արդէն տեսանելի է օրրտօրէ աշխուժացող այդ զազութին քաղաքական, բնկերային ու մշակութային գործունէութեան պատկերը:

«Հորիզոն»ի շուրջ բոլորուած են դանատահայ մտաւորականներ, ծանօթ եւ նոր անուններ, տարեց եւ երիտասարդ:

# Բազմ

# 200

Ֆառաշիկայ Օգոստոսին, «Բազմ» լոյս  
կ'ընծայէ իր 200րդ թիւը, որ պիտի ունենայ  
յատուկ բովանդակութիւն:

Մեր բարեկամներէն կը խնդրենք, որ առ  
այդ պատրաստած իրենց գրութիւնները փու-  
թացնեն խմբագրութեան՝ ամէնէն ուշը մին-  
չեւ 15 Յուլիս:

ԼԻԲԱՆԱՆ 50 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍՍՆՆԱԿԱՆ 27 ՏՈՂԱՐ

ՀԱՏԱՎԱՃԱՌ 5 Լ. ՈՍԿԻ

پاكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

مدير المسؤول

السيد ارتين كارنيك قزاجيان

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

ԽՄԲԱԳԻՐ

Գ. ՄՆԱԳԵԱՆ

Հեռագրային՝ 296898